


25.457

333

C-19




BIBLIOTHÈQUE
DE
L'UNION GÉNÉRALE ARMÉNIENNE
DE BIENFAISANCE

FONDATION
BOGHOS NUBAR PACHA

Fonds de l'Union
(Le Caire)





Թիւ 11, Հրատարակութիւն «Հայրենիք»,-ի

Մ. ՆԱԼԲԱՆՏԵԱՆՑ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

ՈՐՓԷՍ

ՈՒՂԻՂ ԺԱՆԱՊԱՐՀ

ԲԵՐՈՒՆԻ

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆՏԵԱՆՑԻ

«ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ»

ՆԻ ԱՆՈՐ ՄԻՋ


ԱՐՏԱՅԱՅՏԻԱԾ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ



ՊՕՍԹԸՆ

«ՀԱՅՐԵՆԻՔ»-Ի ՏՊԱՐԱՆ

1910



Թի 11, Հրատարակութիւն «Հայրենիք»,-ի

333

հ-19

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆՏԵԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

ՈՐՊԷՍ

ՈՒՂԻՂ ԺԱՆԱՊԱՐԷ

Բ. Տպագրութիւն



ՊՕՍԹԸՆ
«ՀԱՅՐԵՆԻՔ»-Ի ՏՊԱՐԱՆ
1910

Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

ՀՍՅԿԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

ՆՈՒԻՐԵՑ

Գահիրէ

25.934

10.07.2013

ՀԱՅ ԴԱՇՏԵՐՈՒՆ ՊԱՂԱՏԱՆՔԸ

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ
Յաւերժական Յիշատակին

— «Արարատեան աշխարհներէն մինչ հովիտներն
Եփրատեան,
Մեր ընդերքներէն բարձրացող պաղատանքն ու
պարսաւը ձե՛զ կ'ուղղենք,
Կեանքին հանդէպ դուռժաններ՛ր, հեռացողներ՛ր,
կամ երկշոտներ՛ր.
Հալածական կամ աքսորեալ դո՛ւն վտարանդի
կամ տարազիր,
Ո՛ւր էք, և ո՛ւր են ձեր բազուկներն որ մեր կո-
ղերը կ'արօրէին...
Ո՛ւր էք և դուք հին օրերու անկաշառ և անկըն-
ճիռ ճակատներ,
Երբ ձեր քրտինքն հուժկու և վեհ հողագործի,
Մարգարտի պէս կուզար հասիլ ծալքերուն մէջը
մեր ախօսին,
Հին օրերու ձեռուրներ՛ր, ո՛ւր էք դուք ձեռքեր
օրհնեալ,
Ձեռքեր անպիղծ, ձեռքեր յուռթի՛ր և արգա-
ւա՛նդ,



35140.62

50.34.72

Ձեռքեր բարի՛ և բեղմնաւոր, ձեռքեր վսեմ և
վճռակա՛ն,
Երբ ցորեանին սրբազան սերմը ձեր ասին մէջ,
Հալած ոսկու հեղեղի պէս լայնաբուռն կը ցանէ-
իք...
Ու գութանին երգը կ'երգէիք... և ձեր եղներն
յաղթամարմին՝
Իրենց երկաթը շանթերու պէս մեր ընթերքը
մխրճելէն...
Արտավարէ արտավար, հպարտօրէն բառաչելով՝
կը հերկէին...
Ու ներգաշնակ անձրևներն և արևը, մեծ օրէն-
քին կշիռներուն համեմատ,
Կ'իջնէին ձեր հողին յանձնած հատիկները բեղ-
մնաւորել...
Եւ երբ ամառը կը ծնէր կամ աշունին մահէն ա-
ռաջ
Քաղաքներէն և գիւղերէն՝ գերանդիով, մանգաղ-
ներով բեռնաւոր,
Հազարներով կուգայիք, հայ դաշտերէն Մարդ-
կութեանն իբր ընծայ,
Անխտրական ցորեանին հասուն հասկերն հնձե-
լու...
Բայց քանի գարուն և աղաչաւոր աշուններ եկան
անցան,
Եւ անծաղիկ ու անպտուղ մեր անսահմանն ձեզ
կը սպասէ...
Ա՛հ գթացէ՛ք հայրենական և հաւատարիմ ձեր
հողերուն,
Գթացէ՛ք այն այրիներուն և վարդի նման որբե-
րուն,

Որ առաւօտէն յուսարեկ և իրիկունէն եղերական,
Իրենց կուրծքերը կոծելով՝ մեր քարացած սև՝
կողերէն,
Երկու բուռ հունձք, ասի մը ցորեան կը պաղա-
տին... :
Ու հայ դաշտէն կը հեռանան կեանքին օրէնքն
անիծելով՝
Եւ բնութիւնն ալ, իր բարիքն ալ, իր բերքերն
անմատոյց :
— Հազարաւոր տարիներու դուք անարժան ժա-
ռանգորդներ,
Օտարութեան և մոլութեան ճամբաներէն մեղի
դարձէք,
Յոյսէն խաբուած կամ աղէտէն հալածական բայց
չարիքին յաղթայարող
Աշխատողներ՝ բոլորդ մէկ ձեր բարեգութ բնու-
թեանը գրկին եկէք.
Ամէն բարիք մեր լանջքերէն և լեռներէն կը ծը-
նանի...
Ամէն մետաղ մեր խաւին տակ հրաշանիւթ իր
գանձն ունի...
Մեզմէ միայն կրնաք կորդել Յոյսին ոսկին և գի-
նիներն Երազին...
Յաղթանակները մենք կուտանք ու պարտու-
թիւնները մեզի են...
Վերադարձէ՛ք, որդիներ՛ր, ձեր գութանին և ա-
րօրին ժանգը նորէն սրբելու.
Թո՛ղ նորէն ձեր հնադարեան հայրենի հողը ծաղ-
կոտի...
Թո՛ղ մեր հունձքերն հովաէ հովիտ՝ ծովերուն
պէս տարածուին...

Թո՛ղ կալերն ու որաները, բլուրն ի վեր, լուս-
նկին հետ բարձրանան,
Թո՛ղ հայ հովիւն, մարգերուն մէջ, իր նախահօրը
նման,

Իր սրինգին սարսուռովն իր հլու հօտը հմայէ...
Չորին վրայ, ջրադացը խաղաղութեամբ թո՛ղ շար-
ժի...

Ու առատութիւնը թո՛ղ նորէն գայ մեր սրտե-
րուն վրայ լացող՝

Հայկեան ցեղին պղտոր աչքերը լուսավառել...
Ամէն բարիք և մարդկային չարիքներու ամէն
դարման,

Մեր խորհուրդէն, մեր խաւերէն, մեր օրէնքէն
պէտք է յուսալ...

Ու այսպէս՝ Ձիթենիին ոստերուն հետ Աստուա-
ծաբոյս,

ՍՈՒՐՆ ալ մեզնէ կը ծնանի սրբութիւնն ալ
ՅՈՐԵԱՆԻՆ...:—»

1910 Փետրվար

Սիամանթո

* * *

Իմ քա՛ղցր եղբարք,

Կենդանութեան նւիրած այս փոքրիկ գոր-
ծի ճակատը կենդանի մարդերի անունով ցան-
կացայ պսակել, և այս խորհուրդով ձեզի ըն-
ծայեցի:

Մեր ազգի անցեալը տխուր է, այն օրերի
պատմական յիշատակարաններից արտասուք է
հոսում: Մեր ազգի ներկան թշւառ է, ստըր-
կութիւնը և աղքատութիւնը բարձրաձայն խօ-
սում են այստեղ: Եթէ յոյս ունինք ապագայի
վրայ, նորա երևցուցիչը դուք էք, ձեզանից
կախում է ազգի ապագան և ձեր վերայ է մի-
ակ յոյսը: Ի՛նչ չափով պիտի արդարացնէք
այդ յոյսը, դորա վկան և չափողը պիտի լինի
ձեր գործը:

Մի՛ մոռնաք որ ձեր ապագան պիտի դա-
տաստան կատարէ ձեր գերեզմանի վերայ, ինչ-
պէս դուք դատում էք այսօր ձեր նախահարց
ոսկերքը: Բայց այն օրերից բռնած որչափ յա-
ռաջ, այնքան ծանր պիտի լինի այդ դատաս-
տանը. աշխատեցէք պայծառ յիշատակներ կը-
տակել ձեր ժառանգներին:

Կանխակալ կարծիքները, որպէսզի աւելի-
չ'ասենք, պիտի պատերազմին ձեզ հետ, այս

ընական է. բայց առիթ կայ և նոցանից օգուտ քաղելու, ոյժը չէ կարելի դալ, եթէ չկայ դիմադրութիւն, և մրցանակը. դժւարութեան շափով յարգ ունի:

Թողէ՛ք մեռելներին թաղել իւրեանց մեռելները. նոցա արևը մտած է. իսկ դուք կենդանի էք և ապագայի արշալոյսը, ձեր գլխի վրայ է բացուում: Ձեր սակաւաթիւ լինելը, համեմատելով պէտքերի շատութեան, թո՛ղ չվըհատեցնէ ձեզ, այն մարդը, որ դուում է իւր անձը կենդանի, պիտի յարի ձեզ, որովհետև կեանքի հոսանքը, միայն մի ընթացք ունի — դէպի յառաջ:

Յառա՛ջ..... այնտեղ միայն կարող ենք հանդիպել մեր ազգի կենսանորոգ և որոտընդոստ յարութեան...

Կենդանութիւն:

Միշտ Ձեր

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

26 Մարտի 1862

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

ՈՐՊԷՍ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ

Հիւսիսային Ամերիկան, Հարաւային Ամերիկայի միջից ստրկութիւնը վերցնելու համար, ուրեմն ազատութեան անունով, պատերազմ բացեց Հարաւային մասի դէմ. քանզի այս մասը չէ յօժարում վերցնել իւր միջից մարդկութեան նախատինքը, մարդավաճառ ստրկութիւնը: Այն ո՛ր սիրան է, որ համակրութիւն չունի դէպի Հիւսիսային Ամերիկայի այս դիւցազնական անձնազոհութիւնը, որ խղճմտանքն է, որ հաշտ կարող է մնալ Հարաւային Ամերիկայի մինչև այժմ բռնած ընթացքի հետ:

Բայց, չնայելով այս բոլորի վերայ, քիչ մը: նաց, որ Անգլիան պատերազմ յայտնէ Հիւսիսային Ամերիկային. և թէ չյայտնեց, ապա ուրեմն ահամայ, քանզի յաղթութիւնը, որ տանում են այժմ Հիւսիսայինք Հարաւայինոց վերայ, շատ և շատ ծանրանում են Անգլիոյ սըրտին:

Անգլիան ուրախ էր մինչ սրանից մի քանի ամիս առաջ, Հարւած Հարւածի քամակից ընդունում է Հիւսիսային Ամերիկան:

Այս ի՛նչ բաբելոնական խառնակութիւն է, կարող է մտածել մի մարդ: Անգլիան այն ազատ երկիրը, որի և պսակեալ գլուխը չէ կա-

րող ժխտել վերջին սոսկականի, նոցա անձնաւոր ազատութիւնը և իրաւունքը, կարելի՞ բան է որ համակրութիւն ունենայ դէպի Հարաւային Ամերիկան, ռերախանայ նորա յաղթութիւններով և տրտմի երբ յաղթահարւած էր ստորկութիւն քարոզողը, մարդը իբրև անասուն գործածողը:

Այո՛, այո՛, այդ ազատ Անգլիան: Բայց այս չէ բղխում կառավարութեան հաճոյքից, նա ստիպւած է...

Ամերիկան պատերազմ ունի իր մէջ, չէ կարող բամպակ տալ Անգլիային նորա բամպակեղէնի գործարանքը փակում են, գործարանատէրքը սնանկանում և անգործ մնացած բիւրաւոր գործաւորքը օրական հացի կարօտ և վերջին յուսահատութեան մէջ:

Այսքան մնաս յառաջացաւ միմիայն պատերազմի պատճառով, ժամանակաւորապէս բամպակ չգալուց, ապա եթէ Հարաւային Ամերիկայի միջից ստրկութիւնը վերնայ և բամպակի և այլ բուսականների մշակութիւնը ընկնի, այն ժամանակ ի՞նչ պիտի լինին անգլիական գործարանների և գործաւորների վիճակը: Իրաւունք է այս, կամ ստրկութիւնը վերնալով, յիբաւի պիտի ընկնի՞ն այդ մշակութիւնքը, ինչպէս կամին հաւատացնել Հարաւայինք, այդտեղ չէ մեր խնդիրը: Ներկայ պատերազմի այսօրւայ հետեանքը, մենք ընդունում ենք որպէս իրողութիւն:

Մեր աչքի առջև են բիւրաւոր անգործ գործաւորք, որ տանջւում են սովից և վերջին ճիգն են թափում, պատերազմելով մի ծայրայեղ աղքատութեան հետ:

Երևակայեցէ՛ք բիւրաւոր ընտանիք, որոնց մի անդամը գործելով մի գործարանի մէջ և ստանալով շաբաթը մի քանի շիլինգ, ապրում էին որպէս և իցէ. այժմ այն գործաւորը դարձած իր չքաւոր ընտանեաց մէջ չէ կարող և այն մի քանի շիլինգը ձարել ընտանիքը ապրեցընելու համար:

Անգլիոյ մէջ, որևիցէ մի ձեռագործի կամ ընթացքից զրկւելու հետ կապակից է բիւրաւոր անհատների թշւառութիւնը:

Մի տեսակ ժապաւէն որ առաջ գործածական էր, դուրս ընկաւ սովորութիւնից և ժողովուրդը դադարեցաւ գնելուց, սորանից աւելի ինչ հառարակ բան կարող է լինել: Բայց եկէք նայինք այս հասարակ բանի հետեանքին: Հարաւոր խանութներ, հարիւրաւոր գործարանք և բիւրաւոր գործաւորք մնացին դարձեալ անգործ, անհաց, անտուն և անտէր:

Բողոք բողոքի քամակից, որի՞ ընդդէմ, ո՞վ ինչ կարող է անել:

Ժողովքներով վճուեցաւ, որ իւրաքանչիւր պատւաւոր կին յօժարակամ գնէ այդ ժապաւէնից մի քանի գաղ, ամենեին պիտակաբար, միմիայն թշւառ գործաւորներին օգնելու խորհրդով: Ստորագրութիւնք բացեցան այո՛, և շատ գումար հաւաքւեցաւ, բայց այդ շատը համեմատելով աղքատ և սոված բազմութեան հետ, շատ աննշան էր և չնչին, թերևս եթէ հնար լինէր իւրաքանչիւրին տալ ոչ միայն մի քանի շիլինգ, այլ տասնաւոր լիթրէներ, այնուամենայնիւ փրկութիւն չէր:

Ծառի տերեւի վրայ ջուր թափելը արմատի չորութեան չի օգնում. տերեւքը ստանում են

մի բուսական զովութիւն և այդչափ միայն :

Այսպէս և այն խեղճ գործաւորքը, իբրև շնորհք ստանալով մի քանի շիլինգ մի անգամ, մինչդեռ հացը և ապրուստը հարկաւոր է ամէն անգամ :

Ֆրանսիայի մէջ, Լիոն քաղաքում, նոյնպէս փակեցան մի քանի գործարանք. գործաւորներին հանդիպեցաւ գրեթէ նոյն ճակատագիրը, ինչ որ Լոնտոնում, ամենայն տեղ ստորագրութիւն ստորագրութեան քամակից, այդ աղքատներուն օգնելու համար. նոյնիսկ Գարիբալդին առաջարկեց իտալիոյ մէջ մի հանգանակութիւն :


Այս տեսակ աղքատութիւն, որ ուրիշ աշխարհի մէջ թերևս այնքան զարմանալի չէ, բաների վերայ վերիվերոյ նայողների և միայն արտաքին կեղևը քննողների համար, իսկ Անգլիոյ և Ֆրանսիոյ մէջ գարմանալի: Բայց որ սովորել է խնդիրը քննել քրքրելով նրա բոլոր ծնուցիչ պատճառքը, նա տեսնում է, որ միմիայն Անգլիոյ մէջ և ըստ մասին Ֆրանսիոյ մէջ կարելի է այդպիսի աղքատութիւն :

«Անգլիական հարուստ է, ոչ ինչ տէրութիւն այնքան արծաթ և ոսկի չունի, և այլն, և այլն»: Հազարաւոր գովեստներ, բիւրաւոր երանիներ լսած ենք հարիւրաւոր անգամ. նոյնը գրեթէ և Ֆրանսիոյ վերաբերութեամբ: Բայց հարկաւոր է իմանալ, որ տէրութիւնքը ազգ չեն, և տէրութեանց շահը ազգի շահի հետ բնաւ վերաբերութիւն չունի, քանի որ տէրութեանց կազմութիւնը այնպէս է, ինչպէս որ կան այսօր :

Թէ ի՛նչ է տէրութիւնը, այդ մասին մի ուրիշ ժամանակ. առայժմ այսչափ միայն, որ անգլիական ազգը ամէն ազգից աղքատ է և ամէն ազգից աւելի վտանգի ենթակայ :

— Ի՞նչպէս, — կը հարցնեն մեզ ընթերցողք: Շատ հասարակ կերպով կը պատասխանենք մենք :

Ազգ ասելով պիտի իմանանք հասարակ ժողովուրդը և ո՛չ նորա միջից, նորա քրտինքով և նորա արիւնով յառաջացած մի քանի մեծատունք: Բրիտանիոյ, Իրլանտիոյ և Սկոտլանդի մէջ գտնուում է 29,307,199 հոգի բնակիչ, որոնց մէջ հարիւր յիսունի չէ հասնում հին ազնւական, այսպէս անւանած, անգլո-սաքսոն տուների թիւը, միլիոնաւոր չեն վաճառական տուների թիւը. ասել է թէ այն միլիոնները բաղկացնողը է հասարակ ժողովուրդը, ուրեմն և ազգի թէ բարոյական և թէ նիւթական կարողութեան երևցուցիչը: Եթէ ասենք, թէ Անգլիան հարուստ է, և Անգլիա ասելով հասկնանք կառավարութիւնը և ազնւականութիւնը, այդ մի այլ խնդիր է և այն ժամանակ վերոգրեալ հարցստութիւնը չէ վերաբերում անգլիական ազգին, այլ կառավարութեան և ազնւականութեան որ Անգլիա չեն, որովհետև, մինը անգլիական կառավարութիւնն է, իսկ միւսը՝ անգլիական ազնւականութիւնը: Այն ժամանակ միայն, ստուգապէս, կարող ենք ասել, թէ հարուստ է Անգլիան, երբ այն միլիոններ բաղկացնող անհատների մօտ տեսնենք որևիցէ նիւթական կարողութեան նշմարանք: Ի՛նչ աղբիւրներ կարող է հանել հասարակ ժողովուրդը իր, չասենք հարստութիւնը, այլ ապրուստը, և ապրուստ հաւաստի, մշտնջենական և ո՛չ աօրեայ: Հասարակ ժողովուրդի համար ուղղակի, և մնացած մասին համար անուղղակի, բայց և այնպէս անհրաժեշտ, ինչպէս ջուրը ծովին հա-



մար, միակ աղբիւր ապրուստի և հարստութեան է Երկրագործութիւնը: Երբ որ մի ազգ կազմող անհատների մեծագոյն մասը պարապի երկրագործութեամբ և առհասարակ գիւղական տնտեսութեամբ, այն ժամանակ այդ ազգի ընդհանրութիւնը հարուստ է և ապահովեալ, որովհետև նորա հիմքը դրւած է բնականապէս և բնութեան վերայ:

Եւ այս պատճառով, փոքրագոյն մասը, որ չէ պարապուում երկրագործութեամբ, կարող է հաւաստի լինել, որ հազիւ պիտի կարողանայ մշակել, շինել, գործել և վաճառել այն, ինչ որ դուրս է բերում գետնից նրա մեծագոյն մասը: Ազգի մեծագոյն մասը, երկրագործութեամբ ապահովեալ է, և անհնար է թէ նեղութեան պատահի ապրուստի կողմից:


Փոքրագոյն մասը, որ բաղկանում է վաճառականներից, չէ կարող անգործ մնալ, քանի որ մեծագոյն մասի արդիւնքը սպասում է նորա, կամ մշակութեան կամ վաճառականութեան, և որևիցէ մի դժբախտ դիպւածում, այդ փոքրագոյն մասից ամենափոքրագոյն մի մասը միայն կարող է ենթարկւիլ առօրեայ և անցողական նեղութեան, քանզի ազգի հիմքը դրւած է երկրի մակերևոյթի վերայ և կախւած չէ օդի մէջ: Չկայ մարդ, որ չխոստովանի այս ճշմարտութիւնը և նոյնիսկ Անգլիոյ մէջ, բայց այստեղ է խնդիրը, երկրագործի համար երկիր է հարկաւոր գործելու, որ Անգլիոյ մէջ չունի հասարակ ժողովուրդը:

Անգլիական երկիրները ազնւականների մասնաւոր սեփականութիւնք են. հասարակութիւնը մի հատ ցից զարկելու հող չունի:

Լոնտոնի, այն հսկայ քաղաք-աշխարհի հողը եօթն ազնւական տան սեփականութիւն է, որոնց առաջինն է թագաւորական տունը: Հասարակ ժողովուրդը իւր երկու ձեռքից աւելի բան չունի. նա բնակուում է ազնւականների հողի վերայ և վարձ է վճարում հողի տիրոջ: Հասարակ ժողովուրդը հող չունենալով չէ կարող երկրագործութեամբ պարապիլ. այն միլիոնները որ բնակուում են Անգլիոյ մէջ, օրական աշխատող, վարձկան մշակներ են, ծառայ և գործաւոր: Այդ միլիոնաւոր բազմութեան միջից, այն մարդիկը, որ դրամագլուխ ունին, վարձուում են մի որևիցէ ազնւականի հողը, վարձուում են հազարաւոր մշակներ և գործուում են երկիրը. սոքա են Ֆերմեր ասացեալքը: Վարձկան երկրագործ մշակները կախւած են իւրեանց Ֆերմերից, քանզի եթէ սա զլանայ գործ տալ նոցա, մշակը պիտի սովամահ մեռնի. ո՛ր գնայ և ի՞նչ գործէ. իսկ Ֆերմերքը, իւրեանց կարգով, կախւած են այն ազնւականներից, որոնց հողը ունին իւրեանց ձեռքում, թէև վարձու:

Ազնւականը, այսօր եթէ կամենայ, կարող է ասել Ֆերմերին, «այսչափ ժամանակ գործեցիր և մշակեցիր իմ հողը, ինձ հատուցիր այսքան վարձ, շնորհակալ եմ, այսուհետև չեմ կարող իմ հողը տալ քեզ, ինձ հարկաւոր է, մի ուրիշ տեղ ճարիր քո համար»: Եւ Ֆերմերը և նրա հազարաւոր մշակները, որ այնչափ տարի ապրում էին այն հողին վրայ, ոչինչ ունին ասելու ազնւական պարոնին ընտրութեան վրայ. պիտի հնազանդւիլ ճակատագրին: Այս պատճառով, շատ հող ունեցող ազնւականը, ունի իր քամա-

35/40-62



կում շատ Փերմեր, Հետևաբար և շատ ժողովուրդ: Ո՞վ չգիտի հողի մեծ պաշտօնը նաև մինիստրներին ընտրութեան ժամանակ:

Այսինչ ազնականի հողի վերայ բնակուում է այսքան մարդ և մինիստրների ընտրութիւն կայ մէջտեղում. այդ ազնականի հողը մշակող բազմութիւնը եթէ միայն ազնականի անունը չգոռայ, վաղը հող չունի, որ հաւասար է ասելու վաղը հաց չունի: Անգլիոյ տնտեսական գիտութիւնը մանաւանդ բաղդատելով նրա այլ ճիւղերում ունեցած ազատ օրէնսդրութեան հետ, զարհուրելի է:

Երբ տէրութիւնը պէտք ունի, երբ պատերազմ ունի, շատ անգամ իր մասնաւոր հաճոյքի կամ մինիստրի անձնական յարաբերութեան պատճառով յառաջացուցած, որից հասարակ ժողովուրդի-ազգի համար չկայ ոչ ջերմութիւն, և ոչ սառնութիւն, տէրութիւնը դառնում է դէպի ազգը, ազնականը դիմում է դէպի իր հողի վերայ բնակողները, կարգում է ճառեր, բորբոքեցուցիչ յորդորներ. «Ա՛զգ, զինւոր տուր, ա՛զգ, դրամ տուր, ա՛զգ կեանքդ տուր՝ քու հայրենիքը պահպանելու համար և նրա պատիւը տեղը բերելու կամ առաւել փառաւորելու համար»: Եւ խեղճ ազգը կրում է ծանր հարկեր, զոհում է իւր առոյգ զաւակները թշնամին վանելու համար. ոգևորում է յաղթութեամբ, տաղեր է երգում, և գործը աւարտելուց յետոյ ուրախ-ուրախ վերադառնում է իւր տեղը կործելով և հաւատալով, թէ մեծ գործ կատարեց հայրենիքը փրկեց, հողը փրկեց և պատիւը պահեց: Սորանից աւելի կոպիտ և խոշոր հեզնութիւն մենք չենք կարող երևակայել:

Հասարակ ժողովուրդը դառնում է իւր բնակարանը և դարձեալ պիտի հարկ տայ ազնականին այն հողի համար, որ գործում է և որ ազատելու համար գնաց արիւն թափեց, խեղացաւ, ջարդեցաւ, որդին, եղբայրը կամ հայրը զոհեց: Ազնականը հայրենիքի հողից իրաւունք ունի բերաւոր մղոններ, իսկ հասարակ ժողովուրդը չունի մի ոտնաչափ տեղ: Այս պայմանների վերայ կարելի է, որ երկրագործութիւնը դառնայ անգլիական կեանքի հիմքը:

Անգլիական ազգի այդչափ սարսափելի մեծութեամբ վաճառականութիւնքը, ձեռագործութիւնքը, մեքենաները, որ այսօր գրեթէ դարձել են նորա բնաւորութեան յատկութիւնքը, ամենեւին պատահական չեն. այլ յառաջանում են նորանից, որ հասարակ ժողովուրդը հող չունի. Որովհետև բնականը չկայ, հարկը ստիպում է արհեստականով լցնել նորա պակասը: Անգլիական ազգի այն ահաւոր գաղթականութիւնքը, Ամերիկա, Աւստրալիա, Հնդկաստան, գանազան կղզիներ, բնականապէս և գլխաւորաբար, յառաջանում են դարձեալ, իրիտանիոյ մէջ հասարակ ժողովուրդի հող չունենալուց:

Բայց այժմ, բիւրաւոր գործաւորների այս ներկայ թշւառութեան մէջ, աւելի սաստկանում է գաղթելու կարօտութիւնը. և պիտի գաղթէ նա, որ չկամի սովամահ մեռնել և մեռցնել իւր ընտանիքը: Մի գործունեայ մարդ, անգամ որեւէիցէ ստրկացած ազգի, թող այսօր առաջարկէ Անգլիոյ մէջ անգործ և յուսատ գործաւորին և ասէ. «Եղբա՛րք, ահաւասիկ երկրազունդի այսինչ կէտի վերայ ես ունէի երբեմն հող և ազատութիւն, որ յետոյ աւազակները կողոպտե-

ցին ինձանից, եկէ՛ք գնանք այնտեղ հետեւեալ պայմանով: Ձեզանից իւրաքանչիւր գնացող պիտի զէնք ունենայ իւր ձեռքում և հարկ դիպւածում պատերազմ պիտի մղէ, իմ հետ հաւասար, երկիրը աւազակի ձեռքից ազատելու համար. այս պահանջում եմ ձեզանից: Իսկ սորա փոխարէն ես իմ ազգի անունով խոստանում եմ ձեզանից իւրաքանչիւր գէնքով գնացող անհատին, այնչափ հող, որչափ որ ինձ կամ ազգի իւրաքանչիւր անհատին պիտի բաժին ընկնի: Խոստանում եմ ձեզ, որ դուք յաւիտեանս յաւիտենից կարո՛ղ էք մշակել և գործել ձեր բաժին ընկած հողը, առանց վաճառելու կամ գրաւ դնելու իրաւունք ունենալու. քանզի ես և իմ ազգի իւրաքանչիւր անհատը, նոյնպէս չպիտի ունենայ գրաւ դնելու կամ վաճառելու իրաւունքը»: Մի այսպիսի գործունեայ մարդ, այսպիսի առաջարկութեամբ, կարող է հազարաւոր զինւորք գտնել Անգլիոյ մէջ, և այն ի՛նչպէս զինւորք: Զինւորք, որ քաջ տեղեակ են երկրագործութեան, գիւղական տնտեսութեան և այլ ամենայն տեսակ ձեռագործական արեստների, որչափ որ մինչև այժմ մարդկային բանականութիւնը յառաջացել է Եւրոպայի մէջ: Այս լուկ խօսք չէ, այլ ամենայն ուշադրութեան և ընդունելութեան արժանի:

Եւ վաճառելու կամ գրաւ դնելու իրաւունք չունենալը բնաւ չէ կարող վշտացնել նրան, կամ յետ կացնել գործից, եթէ կերպարանագործես նորան պայմանիդ խորհուրդը:

Եւ այսպէս, դնենք թէ խօսում ենք մի այդպիսի դժբախտ գործաւորի կամ անհող երկրագործի հետ:

-- կը գամ, — ասում է նա — և դէնք իձեռին, քեզ հետ թշնախու ընդդէմ կը պատերազմիմ...

«Եւ իմ հաւասար իրաւունք և արտօնութիւն կ'ունենաս այն հողի վերայ, որ պիտի ազատենք», ընդհատում եմ ես նորա խօսքը:

— Բայց դու պայման դրեցիր, որ գրաւ դրնելու կամ վաճառելու իրաւունք չպիտի ունենանք:

«Սյո՛, մեր օգուտը պահանջում է այդ»:

— Ի՛նչպէս:

«Էւսի՛ր, եթէ կամենում ես գիւղի մէջ բնակել, ապա ուրեմն միւս գիւղացիների չափով կը ստանաս քո բնակութեան, առտին պարտիզի, անասնոց գոմի և այլ կարևոր բաների հարկաւոր եղածի չափ հողի քանակութիւն, որի վերայ կը շինես քո բնակութիւն հաստատելու համար: Եւ այս երկու դիպւածում, այսինքն, եթէ գիւղում և թէ քաղաքում, քեզ տրւած հողը, որի վերայ շինութիւն արել ես, և թէ ոչ, ազատ ես, կամեցածիդ պէս, գրաւ դնել, վաճառել, ընծայել, իվերջոյ դու նորա անպայման տէրն ես և դորա վերայ խօսելիք չկայ: Իսկ խօսելիքը վերաբերում է դաշտային հողին, ուր պիտի ընթանայ երկրագործութիւնը: Պիտի իմանաս, որ գիւղի և քաղաքի իւրաքանչիւր անդամը հաւասար չափով, իրաւունք պիտի ունենայ մի որոշեալ քանակութեամբ հող մշակելու և գործելու: Եւ այս իրաւունքը պիտի տւէ այնքան, որքան նա կամ նորա սերունդը պիտի բնակւի այն հողի վերայ: Իւրաքանչիւր քաղաք, իւրաքանչիւր գեղ պիտի ունենայ իւր յատուկ հողը, որ պիտի սեփականութիւն մնայ

քաղաքի կամ գիւղի հասարակութեան: Քաղաքի կամ գիւղի բնակիչները հաւասար իրաւունքով ազատ են իւրեանց բաժինը գործել և մշակել, քանի որ գտնուում են այն գիւղում կամ այն քաղաքում: Եւ եթէ դու, լինելով քաղաքացի, զբաղւած լինելով վաճառականութեամբ կամ այլ գործերով, չկամիս կամ ձեռնհաս չլինես քո բաժին ընկած հողը մշակելու կամ մարդիկ վարձելով մշակել տալու, այդպիսի դիպուածում, կարող ես վարձու տալ և այդ կերպով օգուտ քաղել քո հողից: Եթէ հող վաճառելու սկզբունքը թոյլ տրւի, այն ժամանակ աղքատութեան և թշուառութեան սկզբունքը կ'ընդունւի:

Կարող է պատահել, որ ոմանք մարդիկ կամ ժառանգաբար կամ իւրեանց աշխատութեամբ, աւելի հարուստ լինելով, իսկ ոմանք մարդիկ, կամ իրենց ծուլութեան պատճառով, կամ մի դժբախտութեամբ աղքատ լինելով, աղքատը կը վաճառէ հարուստին իւր հողը, կը մնայ անհող և կը զրկէ իւր սերունդը այլևս այն հողի վերայ իրաւունք ունենալուց: Ապա եթէ մի գիւղի մէջ 100 տարու միջոցում հողերը աղքատից հարուստին վաճառելով, գեղի հասարակութեան սեփական նշանակւած հողի քանակութիւնը անցնէ քսան մարդու ձեռք, ասել է թէ բովանդակ գիւղացիք պիտի վարձ վճարեն այն քսանին հողը մշակելու և գործելու իրաւունքը ձեռք բերելու համար, քանզի ինքեանք վաճառած լինելով, հարկ է որ և գնեն: Իսկ եթէ 200 տարու միջոցում այդ քսան տէրը դառնայ երկու կամ մի, այդպիսի դիպուածում դարձեալ նոյն թշուառութիւնը չէ՞, ինչ որ այժմ ունիս

Անգլիոյ մէջ, նոյն մօնօպօլը չէ՞ և հետևանքը հողատիրոջ տարապայման հարստութիւն, իսկ անհող շինականաց տարապայման աղքատութիւնը չէ՞ լինելու: Այո՛, փորձերը ուսուցին իվերջոյ, և առօրեայ ապրուստի կարօտութիւնը ստիպում է մի փոքր խելացի լինել:

Հողը պատկանում է հասարակութեան, որի ամէն մի անդամ հաւասար քանակութեան վերայ, յաւիտեանս ժամանակների, և մի կողմից վաճառելու իրաւունք չունենալով, հողը գործելու և արդիւնաբերելու իրաւունքը անկողոպտելի պահելով, այդ հասարակութեան անդամը և նրա սերունդը հաստատում է իւր կեանքը մի ամուր և ապահով հիմքի վրայ, և անհնա՛ր է, որ նա կամ աղքատութեան հանդիպի կամ իսպառ կարօտ մնայ:

Մենք վկայում ենք որ այս պայմանը ծընրադրութեամբ կ'ընդունին, քանզի սուրբ է, քանզի մարդկային է, քանզի արդար է:

Այժմ հարցնում ենք, հարո՞ւստ է անգլիական ազգը, եթէ մի քանի գործարան փակելով կամ մի ժապաւէն գործածութիւնից դուրս ընկնելով բիւրաւոր մարդիկ և բիւրաւոր գերդաստանք դառն աղքատութեան հետ պատերազմելով՝ կարող են սովամահ կորսել:

Հարո՞ւստ է Ֆրանսիական ժողովուրդը, եթէ մի քաղաքում մի քանի գործարանք փակելով, մի ահագին բազմութիւն գործաւորների կը դատապարտւի դէպի մուրացկանութիւն. . . Զէ՛, հարուստ չէ, ասում ենք, և եթէ ունի մի կտոր հող, ապահովել է իւր կեանքը: Մինչդեռ անգլիական գործաւորը, որ ապրում է այսօր, չգիտէ թէ վաղը պիտի հնար ունենա՞յ ապրե-

լու թէ ոչ . քանցի չգիտէ, թէ պիտի շարունակէ՞ գործարանը իւր գործը, որ և նա աշխատելով ստանայ մի քանի շիլինգ և հոգայ իւր ընտանիքը :

Ի՞նչ հարկաւոր է մեզ ազնւականների անհուն հարստութեան տէր լինելը, ի՞նչ հարկաւոր է մեզ անգլիական կառավարութեան դրամանոցի հսկայութիւնը, ի՞նչ հարկաւոր է անգլիական կառավարութեան դրամի կարօտ չլինելը կամ ուրիշներին փոխ տալը (1), մինչդեռ միլիօնաւոր ժողովուրդի կեանքը կախուած է բամպակից և ժապաւէնից : Համաձայնեցէ՛ք, որ այդ երկուքը ևս չունենային յարատև ոյժը, որ կարողանան պահել և դիմանալ միլիօնաւոր գերդաստանների ծանրութեան : Եւ մինչ բնականաբար կտրուում են, և ահա ողբ, աղաղակ, տառապանք, սուլ և մահ : Վաճառականութիւնը և արւեստը անհրաժեշտ է և մեծապէս պատճառ ազգի հարստութեան, բարօրութեան և երջանկութեան, եթէ ազգի փոքրագոյն մասը պարպում է նրանով, եթէ միւս մեծագոյն մասը ամուր նստած է հողի վրայ և գործում է նորան :

Այն ազգը որ չունի հող և երկիր, երբեք չյուսար որ պիտի հարստանայ . այդ անբնական մի բան է և դորան յուսալը խելագարութիւն : Թո՛ղ բնաւ չյուսայ, որ առաջ հարստանայ և

(1) Անգլիական կառավարութեան պարտքը, եւրօպական Անգլիոյ անունով, դուրս տւած թղթերով, մինչև 1860, մարտի 1 — 802,190,295 լիբրէ ստերլինգ : Հնդկաստանի պարտքը, նոյնպիսի թղթերով, Հնդկաստանի և Անգլիոյ մէջ 80,463,765 լ. Ս :

յետոյ երկիր ձեռք բերէ . այդ լինելու չէ : Նախ որ հարստութիւնը, որ եթէ կայ այդ ազգի մասնաւորների ձեռքում, կամ վաճառականութիւնը, որ եթէ վաճառականութիւն է . . . հիմք չունի, այլ իբրև, պատահական մի բան, ենթակայ է պատահարների ազդեցութեան : Երկրորդ որ հող և երկիր անբարբար ձեռք բերելու նպատակը և խորհուրդը փառք չէ, պատիւ չէ, դժբա երեսխայական գաղափարներ են, այլ հնար գտնել իւր կեանքը և գոյութիւնը ապահովելու համար : Եւ հաւատացէ՛ք, ու վաճառականութիւնը և արւեստը որչափ որ ծաղկին թէև առանց երկրագործութեան չկայ և վաճառականութիւն, որչափ որ մասնաւոր մարդիկ միլիօններ դիզեն, այսուամենայնիւ ենթակայ են բամպակի և ժապաւէնի ազդեցութեան : Մի մրրիկ, մի փոթորիկ, և . . . զնա՛ տխրադէմ ցնցել դատարկ քսակները, որոնց մէջ լեցւած էին երբեմն ոսկին և արծաթը :

Տնտեսական խնդիրը միակ խնդիր է մարդու կեանքը և գոյութիւնը ապահովելու համար, և որչափ ծանր արժէք ունի այս խնդիրը, որչափ մարդը անքակտելի կապւած է նորահետ, այնքան դժբախտ է եղել այդ խնդրի ճակատագիրը : Նա դարձել է մի քար, որի վերայ մարդը քանի՛ քանի՛ անգամներ դայթակղեցաւ :

Վերջին անգամ գոռաց նա . կեցցէ՛ ազատութիւն, կեցցէ՛ հաւասարութիւն, կեցցէ՛ եղբայրութիւն :

— կեցցէ՛, կեցցէ՛, — հնչեցին ամէն կողմից բիւրաւոր արձագանք : Պատնէչներ շինեցին փողոցների սալայատակները կողոպտեցին, աղաղակ, խռովութիւն :

«Ի՞նչ բանի վրայ էք» :

— Չես տեսնում, ազատութիւն, Հաւասարութիւն, եղբայրութիւն, կեցցէ՛ :

— Կեցցէ՛ կեցցէ՛ :

— Թո՛ղ կենան, թո՛ղ ապրին օդի մէջ — ասաց մինը, շանսատակ կը լինես հարւածիս տակ, եթէ կեցցէներ չը գոռաս :

— Կեցցէ՛, կեցցէ՛ :

«Այո՛, այդպէս, կոպիտ... անկիրթ... Մինչև այժմ չե՞ս հասկացել, որ աշխարհքը լուսաւորել է և չէ կարող այլևս բռնութիւն տանել...»

— Մի՛ բարկանար, աղաչում եմ մի հարցմունք... :

«Այժմ կեցցէից աւելի ուրիշ բան չէ կարելի խօսիլ. կեցցէ՛» :

— Կեցցէ — ասաց խեղճ մարդը և հեռացաւ հրապարակից : Տարին չորս եղանակ ունի, իսկ մարդկային կեանքը բիւրաւոր չորսեր :

Այն օրերը լոկ կեցցէի եղանակ էր և ուրիշ բանի վրայ խօսողը մահի պարտաւոր :

Մի քանի օրից յետոյ, երբ արդէն ազատութիւնը, Հաւասարութիւնը և եղբայրութիւնը նստել էին արքայական գահի վերայ, երբ բոլոր փողոցները և տունները մինչև անգամ այս անբան գոյութիւնքը, կարմիր ներկերով և խոշոր տառերով, անբարբառ, գոռացել էին բիւրաւոր կեցցէներ, երկու մարդ հանդիպեցան իրարու մի անկիւնում :

«Ողջոյն» :

— Ողջոյն :

«Քանի ժամանակ է քեզ տեսած չէի, բայց ասես թէ խելք կա՞ր գլուխներս, որ միմիանց պատահէինք, քանի որ երեսի վերայ մնացած

ազգը փրկելու և գերութիւնից ազատելու հետ էինք զբաղած : Բայց — ինքնաբաւական կերպով առաջ տարաւ խօսքը — պիտի իրաւունք տալ մեզ, որ կտրիճի պէս գործ կատարեցինք և մեր դարաւոր ցանկութեան վերջապէս հասանք» :

— Ի՛նչ շինեցինք :

«Աւելի ի՛նչ կամիս», և տհաճութեամբ կըրկնեց այն ճակատագրական երեք խօսքերը :

— Ա՞յդչափ միայն :

Սոսակիցը զարմանում էր սորա բթամտութեան վերայ, և գրեթէ ատելութեան աչքով նայում էր դէպ ուղիղ նորա աչքերի մէջ :

«Ինչո՞ւ այդպէս շփոթում է և խռովում է թո խաղաղութիւնը, իմ պարզ հարցմունքս և կամենում ես բռնակալ հայեացքով պապանձեցնել լեզուս, մինչդեռ ասում ես, թէ ձեռք բերածներիս մինը ևս ազատութիւն է : Թո՛ղ, գէթ խօսքով օգուտ քաղեմ այդ արտօնութիւնից» :

Սոսակիցը վայրկեան մի շփոթեցաւ, և իրաւը պէտք է ասել, խղճի խայթ ևս զգաց, աչքերւաբար, որ հին ժամանակների վերայ գնալով և մոռնալով ազատութեան թագաւոր նստելը, կամեցաւ մի ակնթարթ բռնանալ խօսողի կարծիքի վերայ :

— Ասա՛, եղբայր, ասա՛, ինչու չէ. ես պատրաստ եմ քեզ լսելու :

«Ուրեմն, Ազատութիւն, Հաւասարութիւն, և Եղբայրութիւն, այնպէս չէ՞, բուն իսկ բարոյական և բնական սկզբունք» :

Ճիշտ այդպէս, ինչպէս երկու անգամ երկուքը չորս :

«Շատ բարի, բայց ասա խնդրեմ, ազա՞տ եմ ես, միմիայն օրէնքով, քաղաքականապէս ազատ կոչուելով, ազա՞տ եմ ես, քանի որ նիւթական կարօտութիւնը ստիպում է ինձ, կամայ ակամայ, մի ուրիշին ստրկանալ, ուրիշին ծառայել և այդ ծառայութեամբ հաց ճարել իմ ընտանիքի համար: Ազա՞տ եմ ես, եթէ տէր ունիմ, որին եթէ իմ ազատութիւնը յայտնեմ, բացարձակապէս պիտի զրկեմ ապրուստից և ինձ և իմ ընտանիքս, ծառայ լինելուց դադարելով, և այս բոլորից յետոյ ազա՞տ եմ ես... երեւակայութեա՞ն մէջ, թէ՞ օդի մէջ»:

— Այդ ի՛նչ խօսք է, աշխարհը ի՞նչպէս կարող է կառավարել, եթէ չլինի նիւթի և աշխատանքի փոխադարձ հատուցում:

«Բայց ես մտածում եմ, որ կարող է և մանաւանդ երջանիկ, եթէ աշխատութիւնը բռնադատական չէ, այլ կամայական, եթէ յա աշխատութիւն է և ոչ ծառայութիւն, եթէ մարդկային իրաւունքները անխտիր հաւասարաչափ են և ոչ միիննը աւելի, իսկ միւսիննը պակաս»:

— Պարոն, Հաւասարութի՛ւն, մոռցար ..

«Չեմ մոռցել, բայց չկայ»:

— Ի՛նչպէս թէ չկայ:

«Շատ հասարակ կերպով: Ես և դու հաւասար իրաւունք ունինք, իբրև հայրենիքի հաւասար որդիք, այնպէս չէ՞»:

— Այո՛, ամենևին այդպէս:

«Ուրեմն արդարութիւն չկայ: Եւ դուք պիտի համաձայնիք, որ կա՛մ հաւասարութիւն չկայ, կամ արդարութիւն, որ իրաւունք առնէ մեր հաւասարութեան իրականապէս, քանի որ հաւասարութիւնը, իբրև լոկ խօսք հնչում է

միայն օդի մէջ և քանի որ իրական անհաւասարութեան հետեանքը շինում է ինձ ազատ սարուկ»:

— Չեմ հասկանում:

«Կը հասկանաս և այս բոլորիս: Ո՞րքան հող ունիս դու»:

— Հարիւր հազար քառակուսի գաղ...

«Ե՞ս որչափ ուրիմ»:

— Չգիտե՞ս որ չունիս:

«Հըմ, դու հայրենիքի որդի ե՞ս»:

— Այո՛:

«Ե՞ս:

— Նոյնպէս:

«Հայրենիքի բարիքը և ծանրութիւնը, հաւասարաչափ պատկանո՞ւմ են մեզ»:

— Այո՛:

«Ուրեմն, ինչպէ՞ս հաւասարութիւն է այս դու ունիս այսչափ հող, իսկ ես ոչինչ, քո բաժին միայնակ վայելում ես հայրենիքի բարին, իսկ ես քո հաւասար կրում եմ միայն ծանրութիւնը: Բաժին տուր ինձ քո հողից, մենք մի հայրենիքի որդի ենք, եղբայր ենք: Ինչպէս քեզ հարկաւոր է ապրուստ, նոյնպէս և ինձ, ինչպէս դու կրում ես հայրենիքի բեռը, նոյնպէս կրում եմ ես: Բաժին տուր ինձ քո հողից, սյն ժամանակ ես չեմ աշխատելու բռնի, ես կը զգամ ինձ ազատ, մեր իրաւունքները կը հաւասարին և ճշգրիտ եղբայրութիւնը երևան կ'ելնէ»:

— Հողը իմ սեփականութիւնս է...

Խօսքը բերանը մնաց: Այն կողմից կտրիճի մինը երկաթի տրամաբանութեամբ հարւածը իջեցուց նորա գլխին:

«ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻԻՆԸ ԳՈՂՈՒԹԻՆ Է», ասաց

նա այրական ծանրութեամբ և կանգնեցաւ :

Սեփականութիւնը այն բանի, որ առանց մեր աշխատութեան բնութիւնը դնում է մեր առջև գողութիւն է, աւազակութիւն և յափշտակութիւն, եթէ միւսը առնէ հարիւրաւոր, հազարաւոր, իսկ միւսը ամենևին ոչինչ :

Այլ խնդիր է աշխատութեամբ ձեռք բերւած այն բանը որ բնութիւնը չէ պահում իւր գողութիւնը, որ բնութիւնը չէ պատրաստում է, անմիջապէս որ մարդը արեւստական ճանապարհով է պատրաստել, և իվերջոյ, որի արժէքը պայմանական է, մի խօսքով դրամը, որ մարդը վաստակել է : Բայց հողը նա չէ վաստակել, հողը նա չէ շինել, հողը բնութեանն է :

— Պարո՛ն, չափդ ճանչցիր, ես դող չեմ, ես հողը չեմ յափշտակել, ես ձրի չեմ առել, դրամով է գնել իմ հայրս, իմ պապս :

«Ինձ ի՛նչ փոյթ : Բռնակալութիւնը, որ նոյնն է թէ աւազակութիւն, վաճառել է քեզ հասարակաց ազգի սեփականութիւնը : Ոչ նա իրաւունք ունէր վաճառելու, և ոչ դու իրաւունք ունէիր գնելու. նա դո՛ղ է և դու գողակից, որովհետեւ երկրագունտը անհատի սեփականութիւն չէ, նորա վերայ ապրում են և պիտի ապրին բոլոր նորա որդիքը անխտիր» :

— Բայց եթէ ես իմ հողը կիսեմ քո հետ, ես կը քանդուիմ, ես մինչ ցարդ ապրում եմ նրա նով : Ի՛նչ կը լինի յետոյ իմ ժառանգների և իմ սերունդի վիճակը, երբ իմ հողի քանակութիւնը փոքրացնեմ :

«Դու մտածում ես քո ապրուստի համար, աչքիդ առջև ունիս քո ժառանգների և քո սերունդի ապագան, իսկ ես, որ ոչինչ ունիմ, ինձ

ապրուստ պէտք չէ՞. իմ ժառանգները և իմ սերունդը, որ ինձանից յետոյ ոչինչ ստանալու չեն ինձանից, ապրելու չե՞ն : Բայց դու կը քանդուիս, այսինքն քո աւելորդը կը չափաւորուի, որի հաշուով իմ պակասը կը լեցւի, սակայն մի մոռնար, որ քո ցեղը մինչ ցարդ վայելել է այդ հողը, իսկ իմ ցեղը միշտ զուրկ մնացել է նորանից : Այսօր դու կը քանդուիս, բայց վաղը մեր երկուքի սերունդը կը հաւասարին, այսօր քո կարողութիւնը կը չափաւորուի, բայց դորա փոխանակ իմ ամբողջ սերունդը չի պիտի այլ ևս մահու և կեանքի մէջ տատանի, մի ոտնաչափ հող չունենալով» :

Մարդը յառաջացաւ մինչև այստեղ և կարծում էր, թէ ահա շօշափում է նա իւրեան հարկաւոր առարկան... բայց չէ. ստանալը այնպէս դիւրին չէ, որովհետեւ մարդը դեռ ևս տըղայ է : Գայթակղեցաւ նա սա գայթակղութեան քարի վերայ, և դէպի ձախ, շրջան յառաջ, ծըռեց պատմութիւնը իր ուղիղ ճանապարհից :

Աղատութիւնը, հաւասարութիւնը և եղբայրութիւնը իւրեանց յիշատակը թողեցին մի քանի ոսկիների վերայ. պատերի վերայի կարմիր գրերը դատապարտեցան մնալ մի սպիտակ ներկի տակ :

— Կեցցէ՛ մահ :

Այս էր վերջին խօսքը որ լսեցաւ : Եւ խեղճ մարդը, վարատական և անհող, հարկադրեցաւ դարձեալ իր օրական հացը ձարել ստրկանալով ուրիշին :

Բռնակալութիւնը, եթէ նրա երեւցուցիչը մի անհատ է, թո՛ղ լինի սյն անհասը ներոն,

կալիբուլա (1), կա՛մ, եոցա աշակերտ, մի պօլիտի-
ական աւազակ բնաւ սարսափելի չէ, քանզի այն
անհատին հետ գերեզման կ'իջնէ: Բռնութիւնը,
եթէ նորա երևեցուցիչը մի ժողով է, մի ծերա-
կոյտ, մի հրէական Սէնէտրիոն, նոյնպէս, զար-
հուրելի չէ. ցրւեցիր ժողովը, կործանեցիր նո-
րա տաճարը, և ահա ամենայն բան կ'ընթանայ,
ինչպէս իւղած ճախարակ: Բռնութիւնը անը-
կարագրելի և անթարգմանելի կերպով կատարի
է, կամակոր և երկարատև, եթէ աղբերանում
է հասարակ ժողովրդի ընդունած սկզբունքից:

Մի յարատև բռնակալ կառավարութիւն, մի
ազգի մէջ, ուրիշ բան չէ, եթէ ոչ այդ ազգի
երևեցուցիչը: Շատ անգամ, ինքը ազգը զգում
է բռնութեան ծանրութիւնը և առանց արմատը
քննելու, այսինքն, առանց իր անձը քննելու,
ասպարէզ դուրս գալիս այն չարչարող բռնու-
թեան ընդդէմ, գլխատում է, աքսորում է, ի
վերջոյ, զգացնում է բռնութեան երևեցուցիչը:

Ուրախացաւ, կարծեց, թէ ազատեցաւ
բռնութենից, չգիտէ, թէ ինքն է, իր մէջ է
այն բռնութեան և անօրէնութեան տարրը:
Կարծեց, որ եթէ մի մարդու տեղ քսան հոգի
նստի, բոլոր բանը կը փոխուի, մոռցաւ, որ քա-
նի իր հասկացողութիւնը նոյնն է, ինչպէս էր
յառաջ այն մինի ժամանակ, այն քսանը պիտի
գնայ նոյն ճանապարհը, որով գնում էր պատ-
ժաւած մինը: Մասնաւոր ուշադրութեան արժա-

(1) Այս երկու անուններուն պէտք է կցել
Ապտիւլ — Համիտի անունը, որ «մեծ մարդաս-
պան», «կարմիր սուլթան» կոչւեցաւ ժամանա-
կակից տիեզերական պատմութեան մէջ:
Մ. Խ.

նի է մարդկային կեանքի և այս երևոյթը, որ
երբ մի արտաքին ոյժ դադարում է ճնշել որ-
ևիցէ հասարակութիւն, ինքը այդ հասարակու-
թիւնը սկսում է բռնանալ իր վերայ և նորա
բռնակալական ձգտողութիւնքը բնաւ իսկ պա-
կաս չեն, արտաքին բռնութեան ձգտողութիւն-
ներից: Սորա օրինակը տեսանելի է Անգլիոյ մէջ:

Ամէն մարդ գիտէ, որ գրատպութիւնը ա-
զատ է այնտեղ, և կառավարութեան և օրէնքի
կողմից ամենայն յարձակմունք անհնարին:
Բայց, չնայելով սորա վերայ, Ստիւարտ Միլը,
հարկադրեցաւ հրատարակել իր գիրքը — «on
liberty»: Ստիւարտ Միլը, այս գրքի մէջ, բնա-
կան պատճառներով աշխատում է համոզել, որ
տպագրութիւնը ազատ մնայ, ամենայն յարձակ-
մունքից: Յարձակմունք, տպագրութեան ընդ-
դէմ, և մի ախարհում, որ ամենայն բան տըպ-
ւում է առանց արգելքի, ո՞րի կողմից արդեօք,
մինչ կառավարութիւնը և օրէնքը ազդեցու-
թիւն չունին այս խնդրի վերայ: Ստիւարտ Մի-
լը խօսում է հասարակութեան հետ, նա բողո-
քում է նորս ընդդէմ, և նորս ընդդէմ դար-
ձեալ պաշտպանում է և քարոզում է տպագը-
րութեան անպայման ազատութիւնը: Հասարա-
կութիւնը նորս կանխակալ կարծիքները, նորա
աւանդութիւնը, որ դարբերով նստել են նորա
ուղեղի վերայ, արմատացել են նորա ոսկերքի
մէջ, շատ անգամ, չէ կարող հաշտ աչքով նա-
յիլ աղատ հրապարակախօսութեան երեսին:

Նա հալածում է նորան, ոչ թէ օրէնքով

(1) Այս գիրքը «Ազատութեան մասին» հայերէնի թարգմա-
նած է Պն. Արշակ Կարապետեան: Տպագր. Թիֆլիզ:

կամ որևիցէ կառավարչական ուժով կամ արգելքով, ո՛չ, նա լաւ գիտէ, որ սոքա անհնարին բաներ են Անգլիոյ մէջ, նա հալածում է մանր հնարներով և աղտոտ ճանապարհներով, որոնց մէջ վերջին տեղը չունին, անձնական փնաս հասցնել, վատաբանել, կասկածներ յարուցանել հեղինակի վերայ, պարզամիտների միտքը և ատելութիւնը գրգռել նորա ընդդէմ: Այս բոլորը, սարսափանքով տեսաւ Ստիւարտ Միլը, տեսաւ և գոչեց «մենք սուղւում ենք»:

Կեմբրիջի համալսարանի երկրագիտութեան վարդապետների գրւածքը, մի պարզ բնագիտական և երկրագիտական տեսութիւն, ահ ու սարսափ բերեց հասարակութեան վերայ: Հասարակութիւնը տեսաւ, որ այդ գրւածքը հիմն ի վեր տապալում է այնպիսի հասկացողութիւնը, այնպիսի սկզբունք որ վաղուց արդէն սրբազանել է ինքը, հասարակութիւնը, որ դարձել է նորա հոգին, նորա պաշտական գաղափարը, տեսաւ այս և խաչակիր արշաւանք քարոզեց այն իմաստուն ուսուցիչների ընդդէմ: Բանական հնարքները, հերքողութիւնքը, վէճը և ի վերջոյ, անբարոյական պարսաւանքը թոյլ երկեցան նորա աչքում, նորա վշտացած հասկացողութիւնը թելադրում էր նորան վրէժ, նորա միակ ցանկութիւնը էր, որ ուսուցիչը կորուսանեն իւրեանց ամբիոնը:

Վա՛յ այն ծառին, վա՛յ այն բուսականին, որին արմատը անընդունակ է իր յատակից ընդունելու և պատրաստելու իր հիւթը, իւրեան թարմութիւնը պահող կենսական ոյժը և զօրութիւնը. վա՛յ այն ծառին և բուսականին, որի յոյսը դրւած է միմիայն, գիշերային և առա-

ւօտեան, բարձրից գալու ցօղի վերայ: Յօղը դեռ հաղիւ հազ նստում է նորա տերևների վերայ, հաղիւ հազ սկսում է զովացնել նորա ծարաւը, դալարացնել նորա խորշակահար տեսիլը և ահա... արևը ծագեցաւ:

Յօղի կաթիլները, հետզհետէ, գոլորշանալով ցնդեցան, գնացին, իսկ տերևքը մնացին այրող ճառագայթների ազդեցութեան ենթակայ:

Մարդուն համար, վերևից եկած ազատութիւնը այն ցօղից աւելի չէ, եթէ մարդը, նախ ինքը, իր մէջ ազատ չէ, և երկրորդ, եթէ ինքը այնուհետև պիտի բռնանայ իր ընկերի վերայ:

Եւ քանի որ տնտեսական խնդիրը, այն բազմակնճիւղ գորդիասի կապը լուծւած չէ, հասարակութիւնը, իր ընկերական և ընտանեկան յարաբերութեանց մէջ ազատ չէ. թող քառասուն անգամ, եթէ կամենան, փոփոխեն, կառավարութեան ձևը, բայց քանի որ հասարակութեան մի մասը տիրապետել է հողին, իսկ, միւս մասը մնում է մուրացիկ, այնտեղ թագաւորում է բռնութիւնը:

Նոյն այս տնտեսական խնդրի առջև կանգնած է ռուսական կառավարութիւնը և ազնւականը: Այս խնդիրը մահու և կեանքի խնդիր է «to be or, not to be»! Քսան երեք միլիոն 1) ստորուկ, որ մինչև ցարդ նստած հայրենիքի հողի

(1) 1858—59 թւականների աշխարհագրութեան նայելով, Ռուսիոյ մէջ եղած ստրուկների թիւը հասանում էր մինչև 23,067,631, որոնցից 11,244,913 արու, իսկ մնացած 11,822,718 էգ:

վերայ ծառայում էր և հարկ էր տալիս իր պարոնին, վաղո՛ւց և վաղո՛ւց ազատւած կը լինէր ստրկութիւնից, եթէ կարելի կը լինէր կառավարութեան, կամ, ազնւականին, ասել ստրուկներին, — մանկունք, այս օրից յետոյ ազատ էք, կատարելապէս և ձեր ստրկական յարաբերութիւնը, դէպի ձեր պարոնները, վերջացած է. գնացէ՛ք ուր կամիք և ապրեցէ՛ք ինչպէս կամիք :

Բայց կառավարութիւնը և ազնւականութիւնը պարզ տեսնում էին, այս տեսակ ազատութեան անհնարաւորութիւնը : Ո՛ւր երթայ 23 միլիօն ժողովուրդ, ան՝ող և անկայան, ի՛նչ գործ է, ինչպէ՛ս ապրի : Նոյն հողը, որի վերայ բնակւում էր և որ գործում էր, այժմ, ազատւելուց յետոյ, պիտի վարձու առնուր իր պարոնից . ինչ ազատութիւն էր այս, ո՞չ ապաքէն և առաջ նոյնն էր գործում, միայն այս տարբերութեամբ որ տւած դրամը կամ անձնական աշխատութիւնը, փոխանակ դրամի, համարւում էր հարկ, իսկ այժմ նոյնը պիտի անւանէր վճար :

Բայց շինականին ի՛նչ մխիթարութիւն անւանափոխութեան մէջ, քանի որ գործը նոյնն է :

Պիտի ասեն, որ այդ տեսակ ազատութիւնից շինականը եթէ տնտեսական մասնում աւելի փնաս ունի քան թէ օգուտ, գո՛նէ կաղատուի ստրկութիւնից և պարոնի իշխանութեան և լուծի տակից :

Այս տեղ ևս մխիթարական բան չկար շինականին . այո՛, պիտի ազատւէր բան չկար շինականին . այո՛, պիտի ազատւէր պարոնից, բայց

դորս փոխանակ պիտի ընկնէր կառավարութեան աստիճանաւորների ձեռքը, այսինքն, անձրևի երեսից ծովը :

Տեսաւ կառավարութիւնը, որ այս տեսակ ազատութիւն չէ կարելի տալ . գուչակեց նա դալուց փոթորիկը : Տեսաւ ազնւականը և համոզեցաւ, որ այս տեսակ ազատութիւն տալը, ազնւականութեան մահու դատակնիքը ստորագրել է : Ուստի և կառավարութիւնը և ազնւականը, վախն սլով բարձրացնել այս ճակատագրական վարագոյրը, որի քամակում կանգնած է Ռուսիոյ սոսկավիթխար ապագան, լուռ կացին և առանց միմիանց միտքը և դրութիւնը լաւ հասկնալով, որոշեցին լուռ մնալ և քարշածել այս գործը, որչափ որ կարելի է դիմանալ :

Եկաւ արևելեան պատերազմը, կառավարութիւնը ընկաւ պարտքի մէջ, ժողովրդը կըրեց անտանելի ծանրութիւն և, ի վերայ այսրամենայնի, երբ Սեբաստուպօլսի պարիսպը խոնարհեցան դաշնակից զինուորութեան առջև, Նիկողայոսը մեռաւ : Մեռաւ նորահետ և նորահամակարգութիւնքը : Ինչ կամիս, արա՛, բայց ժամանակը իւրեանը կ'առնու : Նոր կառավարութիւնը տեսաւ այս բոլորը, հասկցաւ, որ անցեալը չէ կարելի շարունակել, շատերը շատ ձգւած են, ուստի մի փոքր թուլացրեց ժողովրդեան սանձը . Մինչ այս, մինչ այն, տնտեսական խնդիրը, մի աներևոյթ դրութեամբ, ընկաւ մէջտեղը, հարկը ստիպում էր լուծել նորան, այս անգամ :

Եւ ահա ժողով ժողովի քամակից, խորհուրդ խորհուրդի քամակից, ինչպէս լուծել,

առանց հող աալու, շինականին: Երկիր չտալ նոցա, ասել է 23 միլիոն ժողովուրդ օրական հացի կարօտ ձգել, ասել է այդ ազատութեան միւս օրը պատերազմ ունենալ 23 միլիոն բազմութեան հետ, որ սովամահ լինելու երկիւղից և յուսահատութենից, պիտի պատերազմի սարսափելի զօրութեամբ: Երկիր տալ նոցա, ասել է բովանդակ ազնւականութիւնը յարուցանել կառավարութեան ընդդէմ. բայց չտալ չէ կարելի: Վերջի վերջոյ, որոշեցաւ չափաւոր քանակութեամբ հող տալ ստրուկներին, այսինքն, իւրաքանչիւր գիւղական հասարակութեան և ընկերութեան, համեմատ նոցա թիւն. այնպէս որ այդ հասարակութիւնքը, մինչև մի նշանակեալ ժամանակ ամ ըստ ամէ վճարեն իւրեանց պարոններին այն հողի գինը, մինչև վճարը աւարտել:

Բայց երբ 1861, փետրւար 19ի հրովարտակը դուրս եկաւ, որի մէջ կայսրը ասում էր, թէ ստրուկները ազատ են և իւրեանց հողը պիտի ստանան հրովարտակի թուեալ օրից, երկու տարուց յետոյ, մինչև այն երկու տարու վերջը պիտի մնան նոյն յարաբերութեան մէջ, դէպի իւրեանց պարոնները, ինչպէս յառաջ, ստրուկները և լսել չկամեցաւ:

— Հրատարակեցիր մեզ ազատ, հանդերձ մեր հողով, և ահա վերջացած է ամեն բան: Մենք չկամինք մնալ, այսուհետև, այն յարաբերութեան մէջ, ուր մաշեցան մեր նախնեաց և մեր ոսկերքը: Դարաւոր սպիներով ծածկած է մեր մէջքը, անգուսպ բարբարոսութիւնը իր ոյժը մաշեց մեր կուրծքի վերայ: Մեր մատաղահաս դստերը գոհ գնացին անխնայ. մեր

պարոնների բւնաբարութեան. կանանց մասին այլ խօսք չէ մնում: Մեր որդիքը, նոքա փոխեցին շունի հետ: Չէ՛ անհնար է որ այլևս մընանք նոյն յարաբերութեան մէջ:

Ձանազան գաւառներում դուրս երևեցան զանազան ընդդիմութիւնք և ապստամբութիւնք, եթէ իրաւունք պահանջելը, վսեմ ուճով, կարելի է ապստամբութիւն անւանել: Կառավարութիւնը զէնք գործի դրեց նոցա վերայ, բայց սպաննածների արիւնը ոռոգեց ու աճեցուց ընդդիմութեան տունկը: Եւ այսօր ամենայն բոպէ, հեռանում են միմիանցից, ազգը և կառավարութիւնը: Ազնւականութիւնը երևցնում է երկու միմիանց ներհակ կուսակցութիւնք, յառաջընթաց և յետընթաց: Յառաջընթաց կուսակցութիւնը միացած է ազգի էաթաց կուսակցութիւնը միացած է ազգի էական օգտի, այսինքն, ստրուկներու հետ: Նա ներգործում է և յետընթաց կուսակցութեան և կառավարութեան հակառակ: Եւ այս, յայտնի գրաւոր և օր ու ցերեկով: Ի հարկէ շատերը թռան դէպի Սիբիր, շատերը մաշուում են բանտերի և ամրոցների մէջ:

Այս տողերը գրելու միջոցին հասած, պաշտօնական լուրը իմաց տուեց, թէ Տվերի յառաջընթաց կուսակցութիւնից տասններեք հոգի մատնուել են ծերակուտ հինգերորդ բաժնի ձեռք, այսինքն, քրէական ատենի ձեռք, որովհետև ստորագրութեամբ գրած են գաւառական ատենին, թէ չեն կարող և չպիտի ներգործեն 1861 փետրւար 19ի հրովարտակի համեմատ. քանզի ընդդէմ է այն հրովարտակը ազգի էական շահին: Այսքանով չէ գոհացել ազնւականութիւնը և փետր. 2ից տուել է կայսեր մի մե-

ծախորհուրդ խնդիր (1)

Չեր կայսերական Մեծութիւն

Ամենողորմ թագաւոր

1861, փետրւարի 19ի օրէնսդրութիւնը հրատարակելէն ետքը, թժէրի աղնւականութիւնը, առջի անգամ գումարւելով, կը բարւէ ոուսաց թագաւորը, որ ձեռք գարկաւ ստրուկները ազատելու և Ռուսիոյ հողի վերայ եղած ամեն անիրաւութիւն արմատախիլ ընելու: Թժէրի աղնւականութիւնը կը յայտնէ հրապարակաւ, որ ինքը սրտանց զգայակից է Ձ. Կ. մեծութեան բարի սկզբնաւորութեանց և պատրաստ է հետեւելու ձեզ այն ճամբով, որ կը տանի ի բարօրութիւն ոուսաց ազգին: Մեր պատրաստականութիւնը և Ձ. Կ. մեծութեան անձին վրայ ունեցած կատարեալ հաւատը ապացուցանելու համար, մենք կը համարձակինք առաջարկել, ձեր բարի դիտողութեան, մեր մտածութեանց անկեղծ գծագրութիւնը, առանց ամենևին սրտութեան, կամ բան մը ծածկելու:

Յետընթաց կուսակցութիւնը մնացել է ազգի և կառավարութեան մէջտեղը, երկու կողմից ևս դժգոհ, երկու կողմին ևս թշնամի, և ընդդէմ կամեւով ներգործել ազգին, ներգործում է ընդդէմ յառաջընթաց կուսակցութեան և վատօրէն միանում է կառավարութեան յետընթաց մասին հետ:

(1) Դնում ենք այստեղ այն խնդրի հարազատ պատճէնը և մի քանի պարբերութիւնը, մեր նամակագրի տւած տեղեկութիւններին, պսիւնով նրա թէ ոճը և թէ ուղղագրութիւնը:

Ազգը կը տեսնէ, որ ինքը, երբեմն ժամանակի, պիտի կրնայ ազատիլ միմիայն հարկադրական աշխատութենէ, բայց յաւիտեան հարկատու պիտի մնայ յանձնւած յոյն պարոններուն իշխանութեանը, որոնք այժմ խաղաղութեան միջնորդք կ'անւանւին:

Թագաւոր, յայտնի կը խոստովանինք, որ մենք ալ չենք հասկնար այդ դրութիւնը, սանկ ահագին անհասկացողութիւնը զբոլոր հասարակութիւնը կը դնէ անեւանելի և տէրութեան կորուստ սպառնացող վիճակի մը մէջ:

Ի՛նչ բան արգելք կ'ըլլայ զանի հեռացնելու:

Հողը, պարտաւորապէս, ստրուկներին սեպհականութիւնը դարձնելու մէջ, մենք ոչ միայն չենք տեսներ, մեր իրաւանց աւերում մը, այլ, միակ միջոց կը ճանչենք զանի, մեր աշխարհի խաղաղութիւնը և մեր սեպհական նիւթական օգուտները ապահովելու համար:

Մենք կը խնդրենք, որ այս ամբողջը ի գործ դրւի և տէրութեան ընդհանուր զօրութեամբ անի ի կատար հանուի, առանց բոլոր ծանրութիւնը միմիայն ստրուկներու վրան դնելու, որոնք ամէն ուրիշէն քիչ մեղք ունին, ստրկական իրաւունքի գոյութեան մէջ:

Աղնւականութիւնը, իրեն կացութեան արտօնութեան զօրութեամբ, մինչև ցայսօր ազատ էր հասարակաց գլխաւոր պարտքերը կատարելէն: Թագաւոր, մենք արեան մեղք կը համարինք ապրիլ և օգուտ քաղել հասարակաց կարգի աղէկութիւններէն, ուրիշ կացութեանց հաշուով: Անիրա՛ւ է այն կարգը, ուր խեղճը մէկ

րուբլի կը վճարէ, իսկ հարուստը, և ոչ քօբէկ մը: Ասիկա կարելի էր ընդունելի, քանի որ ստրկական իրաւունքը կը տեւէր, բայց այժմ, անի օտարակերներու և իր հայրենիքին բոլորովին անօգուտ մարդոց կարգը կը դնէ զմեզ:

Մենք չենք ցանկար օգուտ քաղել ասանկ անարգ ստորնութեանէ մը և անոր այսուհետև յարատևութիւնը չենք առներ մեր պատասխանատուութեանը տակ: Մենք ամենազպատակօրէն կը խնդրենք Ձեր մեծութեանէն հրաման տալ մեզ, մեր վրայ ընդունիլ տէրութեան հարկերուն և պարտքերուն մէկ մասը, ամէն մէկիս կարողութեան համեմատ: Նիւթական արտօնութիւններէ զատ, մեզ միայն տւած է նաև զազգը կառավարելու, մարդիկը ընտրելու և կարգելու իրաւունքը: Այս օրւան օրս, անօրէնութիւն կը համարինք մենք, այն իրաւունքը բացարձակապէս մեզ պահել, և կաղաչենք, որ անի ուրիշ կացութեանց վրայ ալ տարածել:

Ամենողորմ թագաւոր, մենք հաստատ հաւատացած ենք, որ դուք սրտանց կը ցանկաք Ռուսիոյ ազէկութեան, այս պատճառաւ սուրբ պարտք կը համարինք յայտնի ընել, որ մեր՝ և Ձ. մեծութեան կառավարութեանը մէջ, սարսափելի անհամաձայնութիւն մը կայ, որ արգելք կ'ըլլայ Ձեր բարի դիտաւորութիւնները կատարել: Տէրութեան, պաշտօնեայքը, փոխանակ խոստացած ազատութիւնը ստուգապէս ի գործ դնելու, առ ժամանակեայ հարկադրական դրութիւն մը հնարեցին, որ թէ ստրուկներուն և թէ պարոններուն համար անտանելի է: Փոխանակ մէկ անգամ ստրուկները ազատ և պարտաւորապէս հողի տէր ընելու, անոնք յօ-

ժարակամ համաձայնութեան այնպիսի կարգ մը հնարեցին, որ թէ ստրուկները և թէ պարոնները վերջին աստիճան աղքատութեան հասցընել կ'սպառնայ: Այժմ, անոնք դարձեալ հարկաւոր կը դատեն ազնւական արտօնութեանց պահպանութիւնը, մինչդեռ մենք, որ ամենէն աւելի այս գործին մէջ օգուտ ունինք, անոնց վերնալուսն կը ցանկանք:

Այս ընդհանուր անհամաձայնութիւնը, իբրև աղէկ ապացոյց կը ծառայէ անոր, թէ անհրաժեշտ հարկ եղած փոփոխութիւնները գրագրական (bureaucratique) ճամբով չպիտի կըրնան կատարուիլ:

Մենք ալ՝ յանձնառու չենք բոլոր ազգին փոխանակ խօսիլ, չնայելով, որ աւելի մօտ կանգնած ենք անոր. և հաստատ հաւատացած ենք, թէ միայն բարեմտութիւնը բաւական չէ, ոչ միայն գոհացնելու, այլ մինչև անգամ և ագգային կարիքը ցցունելու համար:

Մենք հաւատացած ենք, թէ բոլոր փոփոխութիւնները յառաջ չ'երթալուն պատճառը այն է, որ առանց ազգի կամքը հարցնելու կ'ըլլան: Բոլոր ռուսական հողէն ընտրած երեսփոխաններ գումարելը միակ միջոց կ'երևայ գոհացուցիչ կերպով այդ խնդիրները լուծելու, որ զարթեցան, բայց չվճուեցան փետր. 19ի դրութեամբ:

Ձեր մեծութեան դիտողութեանը ներկայացնելով երկրական ժողով գումարելու ամենահպատակական աղաչանքը, մենք կը յուսանք, որ ընդհանուրի ազէկութեան սրտանց փափաքը, որով ոգևորւած է թվերի ազնւականութիւնը, հակառակ միաբանութեանց ենթակայ չըլլար:

Խորին երկիւղածութեան զգացմունքով եր-
ջանկութիւն կը համարինք անւանելի,

2. կ. մեծութեան ամենակատակք

(112 Ստորագրութիւններ)

2 փետր. 1852

Թվեր

«... Ազնւականներուն այս ազնիւ խնդիրը
աեղը հասնելէն ետքը (չարունակում է նամա-
կագիրը) զօրապետ Աննենքօֆը, քանի մը զըն-
դապետներով և խումբ մը ժանտարմով, Թվեր
կը շարժուի: Կառավարութիւնը մինչև այսօր կը
կարծէր, թէ ստրուկները կէսկատար աղատե-
լով գործը պիտի լմնայ: Անդին, ազնւակա-
նութիւնը, իր արտօնութիւններէն հրաժարե-
լով, հաստատութիւն կը պահանջէ, երեսփոխա-
նական ժողով կը պահանջէ, ուրիշ խօսքով,
սահմանադրութիւն կը պահանջէ: Միայն Թվերի
ազնւականութիւնը չէ. այլ շատ զաւառներ
նոյն ճամբուն կը հետևին և փետր. 19ի օրէնքը
կատարել է հրապարակաւ կը հրաժարին: Թամ-
պով գաւառի ազնւականութիւնը, միևնոյն բո-
վանդակութեամբ խնդիր մը տւեր է կայսեր-
միայն սա՛ տարբերութեամբ, որ հոն, ազնւա-
կանաց հետ ստորագրեր են բոլոր վաճառականք
և ստրուկները: (Օրինակը տակաւին ձեռքս չը
հասաւ որ քեզի շարժէի):

«Կառավարութիւնը, Թվերի գործէն սար-
սափ մը կ'զգայ ուղեւով խորամանկութիւն
բանեցնել, հասարակ ժողովուրդի մէջ ձայն կը
տարածէ, թէ ազնւականութիւնը՝ կայսեր տը-
ւած խնդիրներին մէջ՝ դէմ է ստրուկներու ա-
ղատութեան, որպէսզի ստրուկները այն ազնիւ
կացութեան դէմ յարուցանէ, որմէ ինքը կը

վախնայ: Ազնւականութիւնը կ'իմանայ այս
դաւաճանութիւնը և իր տւած խնդիրը՝ ամեն
քաղաք, ամեն գեղ հասարակ ժողովուրդի մէջ՝
կ'սկսի կարգալ և հասկցնել, որով ո՛չ միայն
հասարակ ժողովուրդին միտքը կը բժշկուի, ո՛չ
միայն կառավարութեան խարդախութիւնը ե-
րևան կ'ելլէ, հապա՛, ժողովուրդը կը կապւի
ազնւականութեան հետ և սահմանադրութիւն
բառը կ'արտասանէ:

«Տասներեք հոգի ազնւական երիտասարդք,
որ իբրև ազատութեան առաքեալք, իրենց վը-
րայ առած վերոգրեալ սուրբ և վսեմական
պաշտօնը, ժողովուրդին ճշմարտութիւնը կը
քարոզէին և կառավարութեան մոլորեցուցիչ,
խարդախութիւնը երևան կը հանէին, կառա-
վարութեան, պաշտօնեաներէն ձեռքազրկ
կ'ըլ-
լան և կը բանտարւին:

«Ասոնց մէջէն երեք հոգի իբրև գլխաւորք
երկու եղբարք Նիքօլայ և Ալէքսէյ Պաքունին
(ասոնք այն երևելի Մ. Ա. Պաքունին, եղ-
բայրներն են, որ իբրև առաջնորդ գերմանական
ապստամբութեան (1848) բռնեցաւ Տրեզտենի
մէջ և ութը տարի բանտ մնալէն և չորս տարի
Սիպերիա քաղաք կրելէն ետքը, հրաշ. ով մը ա-
ղատութիւն գտնելով, ծաբոնի և Ամերիկայի
վրայով Լօնտրա հասաւ) և Լազարէֆ անւամբ
ռուս ազնւական, Բեդերսպուրքի Սբ. Պետրոսի
և Պօղոսի ամրոցը կը շարժուին:

Բայց ո՛ւր, ազնւականը և ժողովուրդը կապ-
ւեցան իրարու հետ...

«Հիւսիսային կոթողը կը շարժի՛...»

«Եւ ինչպէս, մեծ շինւածք մը կանգնելու
համար, շատ նիւթեր կը մտնեն անոր կազմը-

լածքի մէջ, այնպէս ալ՝ անոր կործանումէն ետքը՝ շատ նիւթեր կ'ստացւին զատ շինւածքներու համար: Ռուսիոյ մէջ խմորւած ազատութիւնը համարձակ կարելի է մարդկային ազատութիւն անւանել, վասնզի ազատութիւնը հողի վրայ կը հիմնուի, քանզի ոչ միայն ինքը ռուսը կ'ուզէ իր ազատութիւնը այլ՝ կը քարոզէ, թէ լեհաստան, Ֆինլանտիա, Փոքր-Ասիա (15 միլիօն ժողովուրդ) կովկաս, Վրաստան և Հայաստան պէտք է որ ազատ և անկախ ըլլան, Մեծ Ռուսիայէն, որպէսզի ինքը 43 միլիօն զուտ ռուսական ազգը, ստուգապէս աղատուի, ամեն ստրկութեան և ամէն բռնաբարութեան սկզբունք մերժելով և իր բարոյական ու նիւթական ոյժը և զօրութիւնը միմիայն մէջը ամփոփելով, որպէսզի երջանկութիւն ճաշակէ, հազարամեայ գերութենէ ետքը և յառաջանայ քաղաքակրթութեան մէջ: Ռուսիոյ ազատութիւնը, ընդհանուր մարդկութեան ազատութեան վերաբերութեամբ, մե՛ծ խորհուրդ ունի... և այլն»:

Ռուսական ազգը, որի աչքի առջև հանդիսանում է այս տրամադրիկական թատերադր կուսակից է ստրուկներին և յառաջընթաց ազնիւ կուսակցութեան: Նորա մէջ նոյնպէս խմորւում է մի ոգի, և այսօր նրկու երեք միմիանց հակառակ տարերք, դնում են և նոյն ճանապարհը: Եւ կառավարութիւնը, իր կարգով, մնացել է այս բոլորի մէջ տեղը:

Բայց այս ջերմախտական և լարեալ վիճակը անհնար է որ լինի երկարատև: Եթէ, վաղօրօք, խելք գործ չգրւի, ստրուկը իր հողով հանդերձ կատարելապէս ազատ չ'քարոզւի և այս

կերպով այն կնճիւղը չ'լուծւի, ստրուկը կացիւնով կը վճռէ դործը:

Ժամանակը շատ մօտեցած է և կարծւածից աւելի մօտեցած...

ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ԸՍՏ ԻՆՔԵԱՆ ԽՕՍԲ Է ԵՒ ԻՐՈՂԱՊԷՍ ՁԷ ԿԱՐՈՂ ՄԱՐՄԵՆԱՆԱԼ, ԱՌԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԼՈՒԾԻԵԼՈՒՆ: Ոչ մի ազատ կառավարութիւն, ոչ մի ազատ օրէնսդրութիւն չէ կարող փրկել մարդը ստրկութիւնից, մինչև որ այդ մարդը, հողի վերայ իրաւունք ունեցող չխոստովանուի: Եւ մինչև այս, ընդհանրական աղքատութիւնը երթալով պիտի գորանայ և հասնի հսկայական աստիճաններին:

Թողունք պղինձը, այսչափ սսկու և արծաթի հանք, որ ամենայն տարի անդադար ոսկի և արծաթ են թափում զանազան տէրութեանց գանձարաններին մէջ, գրեթէ ազդեցութիւն չունին դրամական խնդրին վրայ: Եւ հասարակ ժողովուրդը այնչափ աւելի կարօտում է դրամի, այնչափ սաստկանում է դրամի պակասութիւնը, որչափ որ ամէն կողմից ոսկի և արծաթ է դուրս բերում երկրագունդից: Անտարակոյս է, որ մետաղեայ դրամը ամենայն տարի շատանում է, ինչ է ուրեմն պատճառը, որ ժողովուրդը չի տեսնում նորա երեսը, և ո՞ւր են այն ոսկեքը: Միթէ՞ տէրութեանց մօտ: Մեր առջև դրած է բոլոր տէրութեանց եկամուտի և ծախքի ցուցակները: Ահաւասիկ ամենահարուստ համարւած, Անգլիոյ, 1860 թւականի, եկամուտի և ծախքի ցուցակը.

Եկամուտ... £ 70,283,674

(1) Ընդգծումը մեր կողմէն է: Ծ. Խ.

Ծախք £ 72,842,059

Պակասորդ . . £ 2,540,385

Ո՞րտեղ ուրեմն հարկաւոր է որոնել ոսկին և արծաթը: Նախ, մի քանի երևելի մօնօպօլիստ սեղանաւորների մօտ, որ աշխարհը խեղդում են պարտքի մէջ, և երկրորդ, հողատէրերի մօտ: Ոսկին և արծաթը չէ մնում տէրութեանց և հասարակութեան մօտ և չէ կարող մնալ, քանի որ տէրութեանց ծախքերը, օր ըստ օրէ բարձրանալով, լեռնանում են և քանի որ ժողովուրդը հող չունի և ուր որ ունի չկամի գործել: Նա թողում է դաշտը և գնում է քաղաք կամ մայրաքաղաք, նշանակում է թէ օր ըստ օրէ պակասում է երկրագործների թիւը հետևաբար ընկնում է և զուգակշիռը:

Դիցուք հազար հոգի շինական՝ երկիր էին գործում, որոնք երկրագործութիւնից յառաջացած արդիւնքը վաճառելով, անշուշտ, պիտի ներս բերէին դուրսից իւրեանց մէջ, որեւիցէ քանակութիւն ոսկու և արծաթի: Այժմ, արդ հազար հոգին, թողնելով երկրագործութիւնը, թէ կամայ և թէ ակամայ, եւ երթալով և բընակելով քաղաքի մէջ, ոչ միայն փոքրացնում է երկրագործների թիւը, այսինքն, դուրսից, հասարակ ժողովուրդի մէջ ոսկի և արծաթ բերողի թիւը, այլ և շատցնում է երկրագործութեան արդիւնքի կարօտողների թիւը: Եւ փոխանակ որ ինքը պիտի դրամ ստանար դուրսից, այժմ ինքը պիտի տայ:

Այո՛, այն մարդը, որ թողեց երկրագործութիւնը և գնաց քաղաք, վաստակ է առնում դարձեալ, բայց երկրագործութեան և վաստակի մէջ կայ մեծ տարբերութիւն: Երկրագործը

ունի հիմք, նա ունի հող, նրա ձեռքում կայ նիւթ, որ ասել է ոյժ և զօրութիւն դրամի համազօր, բայց երբ նա թողեց երկիրը և գնաց քաղաք, այնտեղ, ոչ հողը կայ և ոչ նիւթը, նա տարաւ իւր հետ միմիայն աշխատութիւնը, այսինքն, իր երկու ձեռքը: Աշխատութիւնը առանց նիւթի և առանց հիմքի, հասարակաց վերաբերութեամբ, չունի այն ոյժը և զօրութիւնը, ինչ որ ունի աշխատութիւնը, երբ նորա հետ զուգընթաց է նիւթը, երբ այդ բոլորը հասաւտած է հիմքի վերայ: Յաւելացո՛ւր ասոր վերայ և քաղաքային ծախքը, որ ուտում է և մաշում է բոլոր, ինչ որ մարդը իր աշխատութեամբ վաստակել էր: Նա հազիւ հազ ծայրը ծայրին էր հասուցանում իր եկամուտը և ծախքը. նա վարձկան է, իսկ վարձկանի աշխատութիւնը իր համար չէ, վարձկանի յառաջ բերած արդիւնքը, վայելում է տէրը: Ո՛վ է նորա տէրը: Վաճառականը կամ գործարանատէրը: Ուրեմն, վաճառականի կամ գործարանատիրոջ մօտ է: Վաճառականների մի մասը, ուղղակի, վարձկան է գործարանատէրերին, իսկ միւս մասը, գործարանատէրերի հետ միասին, վարձկան, վեր ասած մօնօպօլիստների, որոնց մօտ կեդրոնացած է դրամական ոյժը: Ուր որ է դրամական զօրութիւնը, այնտեղ է և դրամական շահը: Միւս բոլորը, որ ինքեանք զօրութիւն չ'ունենալով պիտի ուրիշ զօրութեամբ շարժին, վարձկան են այդ զօրութեան: Նոցա շահը, այն է, որ հազիւ հազ ապրում են, բայց նոցա կեանքը զոհւած է զօրութեան շահին:

— Կա՛յ, — ասում է մինը, որ չէ սիրում ուրիշի, մանաւանդ մի նոր կարծիքի հաւանու-

թիւն տալ : Եւ դու կարծեցիր թէ խելքիս նըստեցուցի՞ր ասածներդ . . .

« Ի՛նչ կայ » :

— Դու ասացիր, որ դրամի պահասութիւնը Հետեանք է երկրագործութեան ընկնելուն, որից դուրս ես բերում զուգակշռի ընկնելը և դրամական կենդրոնացութիւն (Centralisation) : Այդ սխալ տեսութիւն է . քանզի դրամի պահասութիւնը երևութական է, որովհետեւ, այսօր, ամէն մարդու մօտ աւելի դրամ կայ, քան թէ սորանից տասն տարի առաջ : Դրամը պահասել չէ, այլ զօրութիւն չունի, որովհետեւ թանգութիւնը երթալով գօրանում է : Մի մարդ, որ սորանից տասն տարի առաջ հարիւր ոսկի ունենալով, հանգիստ կարող էր ապրել մի տարի, այժմ նոյն մարդը երկու հարիւր ունի, բայց ապրում է նեղութեամբ, քանզի այժմեան երկու հարիւրը, անցած ժամանակների հարիւրի զօրութիւնը չունի, որովհետեւ ապրուստը թանգ է :

« Ինչ է այդ թանգութեան պատճառը և ին՛չ ասել է թանգութիւն » :

— Եթէ մինչև այժմ չ'գիտես թէ ինչ է թանգութիւնը, ինչ ասացիր և գրիչ առիր ձեռքդ : Թանգութեան պատճառն ես հարցանում ինձանից, պատճառը ո՞րն է : Ապրանքը իմը չէ՞, երէկ վաճառում էի տասնի, այսօր քըսանից պակաս չեմ աալիս, կարո՞ղ ես բռնի յափշտակել : Այն տունը ուր ես բնակուում եմ, սորանից տասն տարի յառաջ, վարձում էի յիսունն ոսկու, այժմ տան տէրը չը կամի տալ յիսունի և պահանջում է հարիւր : Ի՛նչ կարող ես անել : — Եթէ դու չ'տաս հարիւր, ուրիշ տուղ

կայ, — ասում է նա, և եթէ ես նորան չտամ հարիւր, ուրիշ տեղ ևս պակաս գնով չի պիտոյ գտանեմ, ուստի և հարկադրած վճարում եմ այժմ հարիւր :

Ի՛նչ հարկաւոր է տան վերայ խօսիլ, ո՞ր բանը այսպէս չէ : Այսքան տարի ապրել եմ և միշտ կօշիկ եմ հագել, և միշտ զոյգ կօշիկի համար վճարել եմ կէս ոսկի, այժմ այն նզովից արմատ կօշկակարը ասում է, թէ չէ կարող մի ոսկուց պակաս կարել : Խօսելիք ունի՞ս, եթէ չը վճարես ոսկին, առանց կօշիկի կը մնաս : Կարո՞ղ ես բռնի կարել տալ : Ո՞ր մինը ասեմ, դերձակը ևս նոյն երգն է երգում, մինչև անգամ ջրկիրը կրկնապատկել է մի դոյլ ջրի գինը :

« Ծշմարիտ է այդ բոլորը, բայց ի՞նչ է պատճառը որ բոլորը ևս միացել են և կրկնապատկել են իւրեանց ապրանքի գինը » :

— Ների՛ր, պարո՞ն, հաստգլուխ ես եղած որ մինչև այժմ չը հասկցար : Ապրանքը նոցա ապրանքը չէ՞ . . .

— « Հերիք է . Լսիր : Քո բոլոր ասածներից մի բան միայն ուղիղ է, այսինքն, դրամի զօրութիւն չ'ունենալը, իսկ պատճառը, որ կարծում ես թէ յառաջանում է տանտիրոջ, կօշկակարի, դերձակի ու ջրկիրի կամքից, կամ դաւադրութիւնից, բոլորովին անխելք է ու տղայական : Դրամի արժէքը պայմանական մի բան է, նորա զօրութիւնը կամ անզօրութիւնը, նորա բարձրանալը կամ ցածնալը կապւած է այն նիւթերի շատութեան կամ սակաւութեան, որոնց Հետ կ'ենթադրուէր փոխանակել դրամը : Թանգութիւնը կամ դրամի արժէքը ընկնելը համարձակ կարելի է թարգմանել, պակասու-

թիւն և կարօտութիւն, այն նիւթերի, որոնց հետ պիտի փոխուի, դրամը, այստեղ կամքը կամ հաճոյքը հանդէս չունի: Երբոր երկրագործութիւնը, դրամի հետ փոխուելու նիւթերի մշակութիւնը, ընկնի, երբ այդ նիւթերը սակաւանան, այն ժամանակ. նախ, դրամի արժէքն է ընկնում, երկրորդ, դրամը կեդրոնանում է, որովհետև հասարակ ժողովուրդը չունի այն բանը, որ փոխանակել կարող էր դրամի հետ, ուրեմն և դրամի շրջանառութիւնը դարձնել իր մէջ: Եւ այսպիսի դիպւածում աւելի դառն է հասարակ ժողովուրդի վիճակը. դրամը կեդրոնացած է, և ժողովուրդը պիտի քարչէ նորան այդ կենդրոնից, ինչո՞վ, միմիայն իր աշխատութեամբ և այդ մեքենական աշխատութեամբ ստացած դրամը չունի զօրութիւն: Ապա եթէ երկրագործութիւնը ծաղկի, դրամի հետ փոխուելու նիւթերը առատանան, դրամը չէ կարող կեդրոնանալ զանազան ձեռքերում, հասարակ ժողովուրդը, իր պատրաստած նիւթերի զօրութեամբ, կը ցրէ նորան, որով ոչ միայն դրամի շրջանառութիւնը կը մտանէ ժողովուրդի մէջ, այլ դրամի արժէքը ևս կը բարձրանայ նիւթերի շատութեան չափով:

Այն աշխարհներում, ուր հասարակ ժողովուրդը հող չունի, ուր չէ կարող երկրագործութեամբ ապրիլ, նա կեդրոնանում է քաղաքներում և մայրաքաղաքներում, և այս կեդրոնացութեան չափով սաստկանում է և թանգութիւնը, ուրեմն և աղքատութիւնը: Անգլիոյ մէջ Լոնտոնի և այլ գաւառական քաղաքներում, բնակիչքը, գրեթէ հարիւրին տասնևհինգ շատանում են ամենայն տարի: Թողո՞ւնք ուրիշ

քաղաքները, միմիայն Լոնտոնի մէջ, տասն տարու միջոցում, յաւելացել է գրեթէ հինգ հարիւր հազար հոգի: 1851 թւականում Լոնտոնը ունէր բնակիչ 2,362,236, իսկ 1861ին 2,803,034: Տարակոյս չկայ որ Ամերիկայի պատերազմի պատճառով, այսօր Լոնտոնի մէջ կայ 3 միլիոն բնակիչ: Այսպիսի վիճակում, մինչ միլիոնաւոր հոգի պիտի ապրի իր մեքենական աշխատութեան վարձքով, մինչև այն ամէն ժամանակ չի կարող գտանել, կարելի՞ է հարստութիւն, հնարաւոր է ապրուստ (1): Եւ եթէ այսպէս է հասարակ ժողովուրդի վիճակը մի այնպիսի աշխարհում, որ բոլոր երկրագունդին, բաժանում է իր ձեռագործքը, որ պէտք ունի միլիոնաւոր ձեռքերի, ի՞նչպէս ուրեմն կը լինի այն աշխարհների վիճակը, ուր անգլիական արւեստի և ձեռագործութեան և հազարերորդ մասը չի կայ և եթէ այն աշխարհների հասարակ ժողովուրդը թողու իր հողը և երթայ մայրաքաղաք կամ այլ գաւառական քաղաքներ: Ասել հարկաւոր չէ, քանզի մինչև այստեղ ասածներիցս հետևեցնելը շատ հեշտ է:

Իայց, մինչև այստեղ, մենք մեր առջեւ դրած բուն խնդրին չ'գպանք. մինչև այստեղ աշխատեցանք մի միայն մերկացնել նրան: Ի՞նչ է մեր խնդիրը: Ո՛չ Ամերիկայի պատերազմը, ոչ Անգլիոյ սեպհականութեան օրէնքը, ոչ օղային ազատութիւնը, ո՛չ Ռուսիոյ ներկայ վի-

(1) Վերջին վիճակագրական տեղեկութեանց նախելով, Լոնտոնի մէջ, ուրիշի օգնութեամբ, այսինքն ողորմութեամբ ապրող աղքատների թիւը հասանում է մինչև 800,000 հոգի:

ճակը, ո՛չ մինը եւ ո՛չ միւսը: Ի՛նչ է ուրեմն: Մեր խնդիրը... Ինչ որ աւելի իրաւունք ունի գրաւելու մեր ուշադրութիւնը, ինչ որ մօտ է մեզ, որի հետ անքակտելի կապերով կապւած ենք,— մեր խնդիրը մեր խեղճ ազգի թշւառութիւնը: Այս տողերից սկսած, մեր ընթերցողներին ուշադրութիւնը հրաւիրում ենք դէպի Թիւրքիա, որի կազմութեան մէջ մտանում է Հայաստանի եւ հայոց ազգի մեծագոյն մասը: Բայց եւ այնտեղ, տնտեսական խնդրի սահմանից չէ պիտոյ դուրս գանք այս անգամ:

Ամէն մարդ կարող է վկայել, որ 1860ին աւելի լաւ էր Թիւրքիայի դրամական վիճակը քան թէ 1861ին—62ին. տարակոյս չկայ, ժողովրդի վերաբերմամբ, քանզի ինքը կառավարութիւնը մինչև այժմ ապրել է արտաքին և ներքին պարտքերով: Ահա՛ համեմատական լաւ տարու, Թիւրքիայի եկամուտի և ծախքի ցուցակը:

Եկամուտ.....	Փրանք	286,100,615
Ծախք.....	«	335,245,300
Պակասորդ.....	«	49,124,685

Ահաւաստիկ Թիւրքիայի եւ, թէ արտաքին եւ թէ ներքին, պարտքի հաշիւը..... £ 32, - 847,220, կամ 328,810,344 Փրանք, կամ աւելի պարզ, իւրեան իսկ առատ հաշւով 4,106,152,500 ղուրուշ: Տարակոյս չկայ Թիւրքիոյ ոսկին հարիւր զրշ. հաշւելով: Մինչև 1861, արտաքին եւ ներքին — Պօլսի մէջ պարտքերով —, այստեղ է հասած, այժմ կամենում է բարւոքել իր դրամական վիճակը. ինչպէս, մի կողմից, Պօլսի պարտքը տեղափոխելով գաւառների մէջ, այսինքն, իր անւանաբեկ «քայիմէն», իր սնանկու-

թեան դրօշակ տարածելով գաւառական քաղաքներում և գիւղերում, (եթէ ընդունին) և այն տեղի նշխարեալ ոսկին և արծաթը բերելով Պօլսի: Այս է նորա միակ հնարը, որով կամենում է դէմ դնել Պօլսի դրամական հոգեվարութեան:

Թիւրքիոյ կառավարութիւնը ձեռք զարկելով այս հնարին, մոռանում է իւրեան պաշտպան եւ, իր սեպհական շահին համար, Թիւրքիոյ բարեկամ. անգլիական տէրութեան մինիստրի տըւած խրատը, ուր սպասում էր նա թէ «պարտքով ապրիլը նմանում է ծակ տակառի մէջ ջուր լցնելու (1)»: Մոռանում է, դարձեալ, որ գաւառները կրիսոսի առասպելեան գաւառները չեն: Զուր տեղը որոնում է նա իր արծաթը և ոսկիներ գաւառներում. Ի՛նչ զօրութիւն ունէին այդ գաւառները, որ կարողացած լինէին նորանով, իւրեանց մէջ դարձնել դրամի շրջանառութիւնը: Դաւառներից դալու մետաղեայ դրամը չպիտի կարողանայ, մի տարի միայն ծածկել Թիւրքիոյ պարտքերի շահը և տարեկան ծախքի պակասորդը: Ի՛նչ պիտի լինի ուրեմն այս հնարների ուղղակի հետևանքը: Սյն, որ պարտքը պիտի կրկնապատկւի, այն, որ գաւառները ևս պիտի հասանեն Պօլսի օրը, այն որ

(1) Մենք չենք կարող հաւատալ, թէ ազնիւ լօրտը, այս խրատը տալու ժամանակ ուրիշ կարծիք ունեցած լինի Թիւրքիոյ վերայ, դրամական խնդրի վերաբերութեամբ, բացի այն կարծիքից և աւանդութիւնից, որ ունէր դիցաբանական աշխարհը, Դանաիդի ծակ կարասի վերայ:

մի գեղեցիկ առաւօտ, թէ Պօլսի եւ թէ գաւառները մէջ մարդիկ չպիտի կարողանան հաց ճարել, աղքատութիւնը եւ սովը պիտի հարկադրէ նորանց գէպի յափշտակութիւն և կողոպուտ, մի խօսքով, բարեւոնեան խառնակութիւն: Բայց չէ պիտոյ մոռանալ որ մի այսպիսի վատաբախտ դիպածում, առաջ քրիստոնեայք կը կողոպուտին, կը մերկանան և կը մեռանին, իսկ յետոյ թիւրքը, կառավարչական ոյժը, գոնէ, այդտեղ գէթ պիտի երևի, որ ողորմելի ստրուկներէն աւելի ապրի մի քանի օր, և այն սպաննւածների հաշուով: Այս ապագայի սուերական և թոյլ օրինակը, Պօլսի մէջ երեցաւ 1861 թւականի վերջերում, բայց կը դայ օր, երբ այն սուերականը ի լոյս կը ձըլմարտի եւ Բուլվէրասպետը, հինգ հարիւր հաց բաժանելով չէ կարողանալու դարման տանել վերահաս վտանգին:

Բայց թիւրքիոյ կառավարութիւնը չէ սուկում իր պարտքերից: Նա միսիթարում է տեսանելով, որ աւելի շատ են այլ տէրութեանց պարտքերը: Նա զարմանում է միայն, թէ ինչպէս այն աւելի շատ պարտական տէրութիւնքը, որ պէտք է և աւելի շատ նեղութեան մէջ լինէին քան թէ ինքը, ծիծաղում են թիւրքիոյ ղուրուչների երեսն ի վեր և երկու երեք անգամ կարող են բարձրացնել իւրեանց ոսկիների գինը: Մեղքը Մօհամմէդի վիզը, որ սորա պատճառը չէ գրել կուրանի մէջ: Ուրիշ տէրութեանց պարտքը անհատուցանելի չէ, պարտքի գումարը վատնւած չէ, պարտքի հանդէպ, և շատ տեղ, կրկին անգամ արժողութեամբ, կայ գործ: և պարտքը այնպիսի դիպածում սը-

նանկութիւն չէ: Նոքա ունին երկաթուղիք, ունին հսկայ նաւատորմ, զինարան, զօրք, բանակ և այլ հագար ու մի քաղաքական կամ զինւորական պատրաստութիւնք: Իսկ թիւրքիան իր պարտքերի հանդէպ ոչինչ ունի ցոյց տալու: Երեք ու կէս նաւ, բացի ծովագնացութիւնից ուրիշ ամէն բանի պիտանի, մի քանի հազար քաղցած և մերկ զինւոր, որ տարիներով չեն տեսնում ռոճկի երես, ներս մսանող ապրանքների մաքսը աննշան, իր մէջ պատրաստած, ապրանքի վերայ աւելի ծանր հարկ, ո՛չ երկրագործութիւն, ո՛չ ճանապարհ, ո՛չ հաղորդակցութիւն, ո՛չ գիտութիւն, և ոչ արւեստ:

Տէրութեան կառավարիչը իւրեանց անձնական շահին պաշտօնեայ, տէրութեան գանձը հասարակ ժողովրդի արիւնի և քրտինքի հետ միասին լափլիզող: Այստեղ անհատուցանելի է պարտքը, այստեղ բարձրաձայն խօսում է սընանկութիւնը: Այո՛, ոսկին, իբրև մի ազնիւ մետաղ, չէ կարող մնալ մի այնպիսի խառնակ տեղում, — նա բարձրանում է: Մնում է անարգ թուղթը և չէ վախենում: Նա վստահ է, որ մարդիկ եթէ դադարին նրան իրրև դրամ գործ դնելուց, թերևս չի պիտի խսպառ մերժի, յարմար լինելով այլ պիտառութեան: Բարի ճանապարհ:

Եթէ կառավարութեան կողմից չկայ մի խելացի, մի արմատական հնարի գործադրութիւն, քաղաքական տնտեսութիւնը կարգի դրնելու և դուրս տւած և ներս ընդունած ապրանքի կամ դրամի մէջ զուգակշիռը պահելու

ձգտողութիւն, երբ հասարակաց ծանրաչափը ասկներև գուշակում է, նրա կեանքի համար մի մահաբեր մրրիկ, այն ժամանակ, ինքը այդ հասարակութիւնը պարտակա՛ն է, կողմնակի և իր ձեռքից եկած հնարները գործ դնելով աշխատիլ, ազատեցնու համար այն սոսկալի պատահարից, որին անտարակոյս, եթէ ոչ այսօր վաղը կամ միւս օր պիտի հանդիպի երես առ երես :

Ի՛նչ կարող է գործ դնել հասարակութիւնը այդ վտանգից ազատեցնու համար : Նա ինքը ևս աղքատ է և ոչինչ ունի, ինչպէս ուրեմն կարող է օգնել ուրիշին : Խնդիրը նոյնիսկ այնտեղ է, որ նա աղքատ է և պիտի առաւել աղքատանայ, եթէ ճգնի իր մինչև այժմ բռնած ճանապարհը շարունակելու : Նա աղքատ է, բայց այդ աղքատութիւնը միայն կարող է լարել նրա ջլեքը, նրա գործունէութիւնը, աղքատութիւնը միայն կարող է սթափեցնել նրան իր թմրութիւնից, որպէսզի նշմարէ իր մինչև այժմ բռնած ճանապարհի ուղղութիւնը և փոխէ նրան, յառաջ քան թէ հասել էր մինչև նրա կորստական ելքը : Եթէ հարուստ լինէր հասարակութիւնը, կարօտութիւն չկար հնար մտածելու, ճանապարհ փոխելու, նրա աղքատ լինելը, միևնոյն ժամանակ կարող է լինել և նրա փրկութիւնը :

Պօլսի մէջ, նրա շրջակայքում, կամ այլ քաղաքներում բնակեցելու և ձուկի նման տապակ տապակ լինելու ախորժակը անհասկանալի է մեզ : Վաճառականութիւն անել մի աշխարհում, ուր դրամի գինը, մի օրւայ մէջ այնքան անգամ փոխուում է որ ո՛չ առնողը գիտէ

նրա րոպէական արժէքը և ո՛չ տուողը վաճառականութիւն առնել մի տեղում, ուր ոչինչ հաստատ բան չկայ, ուր շատ անգամ կը հարկադրուիս այսօրւայ հազար ղուրուշ պարտքիդ փոխանակ, վաղը երկու հազար կամ աւելի վճարել, վաճառականութիւն անել մի տեղում ուր, գործի սկսած օրից երևում է սընանկութեան դալուկը, այսպիսի մի վաճառականութիւն, մեզ միշտ անհասկանալի կը մնայ : Հայոց ազգը, Պօլսի մէջ, կամ այլ գաւառական քաղաքներում, եթէ դուրս հանենք արշեստաւորքը և հայաստանցի բեռնակիրքը, մնացածը առ հասարակ վաճառական է . ի՞նչ վաճառական, կարելի է ասել իր անունով, ուրիշի գործակատար, Մեծագոյն մասը այս տեսակ վաճառականների հազիւ հազ կարողանում են ապրիլ, բաւական բազմաթիւ մասը գոհ գնաց թիւրքիայի դրամական անկարգութեան : Ամենափոքրագոյն և շատ ամենափոքրագոյն մասը, գուցէ տեւում է, որովհետև այն պայմանների տակ անհնար է ուրիշ կերպ : Արհեստաւորը և բեռնակիրը, որ չունի և այս վաճառականների ունեցած շատ կամ սակաւ նիւթական ոյժը, ապաստանէ իր երկու ձեռքի աշխատութեան :

Բայց, չնայելով այս բոլորի վերայ, ազգը, որ օր ըստ օրէ թողնում է իր երկիրները և կեդրոնանում է քաղաքներում : Աղքատութիւնը ստիպում է նրան թողուլ իր տունը, իր ընտանիքը, իր ամուսինը, ըր գաւակները և գնալ Պօլիս կամ այլ քաղաք, աղքատութիւնից ազատեցնու համար : Բայց այդ տեղերում ևս, նրան հանդէպ է դուրս գալիս էսպէս, նոյն աղ-

քատուածիւնը, գուցէ մի փոքր քաղաքային ամոք կերպարանքով: Դիցուք, գեղում ստանում էր նա, օրական հինգ ղուրուշ, իսկ քաղաքում ստանում է ութն կամ տասն, բայց ինչ օգուտ այն երեք կամ հինգ ղրշ. յաւելւածից, մինչ ոչինչ չէ մնում նրա ձեռքում: Քաղաքի մէջ, համեմատութեամբ շինական կեանքին, եթէ ոչ աւելի գէթ հարկերին քառասուն առաւել է և ծախքը: Եթէ մարդը հինգ ստանալով սղքատ էր գեղում, աղքատ կը լինի Պօլսի մէջ կամ այլ քաղաքներում, ութն կամ տասն ստանալով:

Բացի սորանից, ընտանեկան կեանքից գրկըլուիլը, դժոխային աշխատութիւնը, որով պիտի շահի նա այն մի քանի յաւելեալ ղուրուշները, անտուն, վարատական և անմաքուր կեանքը որ պիտի անցուցանէ նա զանազան իջևաններում: Կրեկոյեան պիտի գայ վաստակեալ, ու ժաթափ շատ անգամ և փասուած անդամներով, իսկ լուսաբացին, նոյն եգիպտական ծառայութիւնը որ սպասում է նրան: Չկայ այն ընտանեկան մըխիթարութիւնը, ամուսնու և զաւակների մըտերմական գողտրիկ և անմեղ հայեացքը, որ առանց ձայնի, առանց խօսելու, կարող են ամոքել ճակատագրի դառնութիւնը, և այս բոլորի անխորհուրդ, առանց հիմնական հաշի և չկամելուց, արմատական կերպով դարման տանել իր աղքատութեան: Եւ այսպէս, իբրև գրատ, իբրև մեքենայ ծառայելով արտաուելի օտարութեան մէջ, տասն—քսան տարի, կամ, մեռանում է այնտեղ, թողնելով իր ընտանիքը ծայրացեալ թշուառութեան մէջ կամ վերադառնում է դէպի իր երկիրը: Վերադառնում է'...

բայց ոչ այնպէս առոյգ և զուարթ ինչպէս դուրս էր եկել այնտեղից, այլ, հասակն առած, ու ժաթափ և թօշնած: Վերադառնում է իր տունը... Բայց ի՞նչ եղաւ արդեօք այն լքեալ տունի և ընտանիքի վիճակը, նրա բացակայութեան ժամանակ: Վերադառնում է իր տունը, երբ կորսել էր աշխատելու ընդունակութիւնը և յարմարութիւնը: Ուրեմն վերադառնում է նա միմիայն իր ներկայութեամբ, իր աղքատ և կարօտ ընտանեաց թիւը յաւելցնելու համար: Եւ ահա նրա տանուածի կամ քսան տարեկան որդին, որ աճել և զօրացել էր իբրև մի ծաղիկ իր սեփհական հողի վերայ, առնում է ձեռքը իր հօր պանդխտական գաւազանը, և գընում է...

— Ո՞ւր բարով:

— «Պօլիս, Տրապիզոն, ևն, ևն:

— «Ի՞նչի համար:

— «Աշխատելու և ընտանեաց օգնելու:

— Աշխատելու և ընտանեաց օգնելու կրկնում է խօսակիցը անհնարին տխրութեամբ:

Անցնում է սորա վերայով մի քանի տարի, յանկարծ այս նորեկը լուր է առնում, որ իր ծերունի հայրը վախճանել է, մայրը հիւանդ է: Մի փոքր ժամանակից մայրը մեռնում է:

— Լաց, պանդուխտ, բնական զգացողութեամբ չե՞ս կարող լաց չլինել, բայց ոչ ոք մեղաւոր չէ, բացի թո հօրից, բացի քեզանից, բացի այն սխալ և փասակար աւանդութիւնից, որ քեզ այդ օրը ձգեց:

Պանդխտակիցքը գալիս են նրան մխիթարելու:

Մի երկու բաժակ գինի... մի քահանայ, մի

«Հոգւոց» և պանդուխտին սիրտը պաղուժ է : Բայց նրա սիրտը պաղուժ է և այն աշխարհից ուր ծնել էր նա... Ի՞նչ բանի համար վերադառնայ : Նա գտանելու չէ իր տունը, իր ծնողքը, նրա աչքին պիտի հանդիպին երկու գերեզման և մի ամայի բնակարան, եթէ և այն չէ անցել օտարի ձեռք : Նա որոշում է մնալ պանդխտութեան մէջ, և այս որոշումով յօժարում է մինչև տակը խմել թշուառութեան բաժակը : Այո՛, մնում է նա : բայց տունը մարեցաւ, Մի գերդաստան ընկաւ հասարակաց խումբից :

Արդեօք ո՞րքան գերդաստանք ընկնում են այսպէս :

Սոցա վիճակից աւելի քաղցր չէ այն մանր վաճառականների վիճակը, որ նոյնպէս լքանելով իւրեանց երկիրը, ձեռք են զարնում վաճառականութեան, պանդխտանալով օտար աշխարհում : Նոցա կեանքի շաւիղի վրայ ևս չկան ծաղիկներ և վարդեր, ամենայն քայլափոխ փո՛ւշ եւ տատա՛սկ : Եւ այնտեղ, ուր մարդը պատերազմ ունի չքաւորութեան հետ, որ չգիտէ թէ վաղը ինչ ո՞վ պիտի կերակուրի, կամ ինչպէ՞ս պիտի դարմանէ իր ընտանիքը ուր կը մընան վերհամբարձ հասկացողութեանց և բարոյական կատարելութեանց հասնելու ձգտողութիւնքը :

Նա, բոլորովին մեքենայացած, մանում է իր կեանքի թեւը, նրան չէ՛ գզւում մի հրապուրիչ յոյս, նա չէ տեսնում ապագայի հորիզոնի վերայ մի երջանկութեան աստղ, նրա ներկան և ապագան խաւար է : Նա տանում է իր կեանքի ծանր խաչը, մինչև որ մի նիւթեղէն խաչ տնկւի նրա գերեզմանի վրայ :

-- Իսկ նրա ընտանի՞քը :

«Այժմ կենդանի մարդիկ չը կամին հոգալ և արմատականապէս բարւոքել իւրեանց կեանքը, իւրեանց ընտանիքի ապագան, մեռա՞ծը պիտի հոգայ :

Նրա ընտանիքին սպասում է նոյն թշուառութիւնը ինչ որ վերւում ասած ենք : Նրա պատանի կամ մանուկ ուղին, շատ անգամ, տասներկու և տասնէհինգ տարեկան, հարկադրւում է թողուլ դպրոցը և գնալ ծառայութեան որ, մի քանի ժամանակից յետոյ, օգնութիւն կարողանայ հասուցանել իր մօրը կամ իր քոյրերին :

Քոյրե՞ր ևս ունի :

«Այո՛, երկու կամ երեք հատ :

Մենք հրաժարւում ենք այս թշուառութեան պատկերները նկարագրելուց : Նոցա ահարկու կերպարանքը սարսափ են բերում մեր վերայ :

Այն մարդը, որի մէջ կայ մի թարմ սիրտ, մի մարդկային կենդանի զգացողութիւն, ինքը կարող է գգալ մնացածը, իսկ չորաբեկ և քրացած սրտերի համար բանականութեան ձայնը, հողմոց հնչիւնք : Ահա և այս տունը մարեցաւ, սա ևս դուրս ինկաւ հասարակաց շինւածքից :

Ի՞նչ կը լինի այն շինւածքի վիճակը, եթէ նրան կազմող մասերը օր ըստ օրէ ընկնին, և մնացողը ևս առ վաղիւ յարատեւելու չկարողանայ երաշխաւորել :

Այն, ի՞նչ որ պատկերացնում է այժմ մեր խեղճագգի վիճակը : Ինչ տեղ ուրեմն, որոնք փրկութեան հնարը, ո՞րն է ցաւերից ազատե-

լու ճանապարհը, որպէսզի ազգը չի մեռանի, և մանաւանդ աղատելի երբ հասանէ Թիւրքիայի դրամական կեանքի վճռական վախճանը:

Ազգը, լաւ ու վատ, փորձեց մինչև այժմ վաճառականութիւնը, նա փորձեց և վարձկանութիւնը, սոցանից հետևեցաւ նրա կեանքի աւերանքը, որի տակ այսօր ճնշուում է միջաբեկ:

Հիմնական եւ խելացի հնարը փրկութեան, ուրիշ բան չէ կարող լինել, եթէ ոչ դառնալ իր նախկին կացութիւնը: Հողը և երկրագործութիւնը կարող է նրան փրկել:

— Ուրեմն բոլոր ազգը երթայ երկրագործ դառնայ, այդ անհնարին մի բան է և չկատարւելու ցանկութիւն:

«Չենք ասում բոլորը, բայց պիտի որ ազգին մեծագոյն մասը երկրագործ լինի, իսկ փոքրագոյնը երկրագործի դուրս բերած արդիւնքը մշակող և վաճառող, որ գուգակչիւրը պահելի եւ ազքատութիւնը տարագիր գնայ»:

— «Բայց՝ դուք մոռանում էք որ Թիւրքիան Եւրոպա չէ: Նա չունի ոչինչ ճանապարհ, ոչինչ հաղորդակցութիւնք, որ անհրաժեշտ են թէ երկրագործին իր բերքը տանելու մի տեղ, և թէ վաճառականին, իր վաճառքը դուրս արձակելու համար:

«Այո՛, ընդունում ենք այդ, բայց կարելի է գործ կատարել: Միթէ սակա՞ւ տեղեր կան, Մեծ և Փոքր Հայաստանի մէջ որ մօտ են Սև Մովին և Միջերկրականին, երկու, երեք, չորս կամ հինգ օրւայ ճանապարհով:

Մենք չենք ասում, թէ հայը երթայ սկսանէ իր երկրագործութիւնը Բաբելոնի սահմաններում:

Այն ժողովուրդը, որ դուրս չէ եկել իր պատմական աշխարհից, թող և չչարժի, մենք ընդդէմ ենք գաղթականութեան և գաղթականութիւն չէ մեր քարոզածը. իսկ այն մասը, որ դուրս է իր աշխարհից, ասել է թէ գտնուում է գաղթականութեան և պանդխտութեան մէջ, նրան հրաւիրում ենք վերադառնալ, մանաւանդ Փոքր Ասիա որ աւելի հրապուրիչ է իր ծովեզրեայ դրութեամբ:

Հերիք է, որ մի երկու գլխաւոր և յարմարաւոր տեղերում սկսանի երկրագործութիւնը, միւս մասերում, որ թերևս հեռի են ծովից, նոյնպէս կը զարթի:

վաճառականութիւնը կը լրացնէ պակասը:

Ո՞վ արգելառիթ է հայոց ժողովուրդին որ նա չբնակի վերասաց տեղերում. և ի՞նչ տեղեր, ուր պարարտ հողը բուսուցանում է գրեթէ ինքն ըստ ինքեան, քանզի երկրագործական գիտութիւնքը դեռ չեն կոխել այն կողմերում:

Եւ փո՞քր գործ կարելի է տեսնել մի հողի վերայ, ուր աճում է և բազմանում է ամենայն ընտանի անասուն և գրաստ, ուր բուսանում է բամպակ, ցորեն, բրինձ, վարսակ, գարի տօրոն, սուսամ, շաքարեղէգն, ճակնդեղ և այլ, հազար բուսական և ընդեղէն, և ուր շերամագարմանութիւնը և մետաքսագործութիւնը կարող են ծաղկիլ ու բարգաւաճիլ:

Այս անւանւած բերքերից, գէթ երկուքը կամ երեքը բաւական է հարստացնել մի բազմութիւն, որ արիաջան, փութով պարապում էր այն նւիրական գործով:

Ո՞ւր, արդեօք կարող են անվաճառ մնալ և վնաս տալ երկրագործին, բամպակը, մետաքսը,

չաքարը, ցորենը և այլն: Մենք չենք կարող թոյլ տալ թէ Հայոց ազգը չգիտէ այս: Բայց միանգամ սովորութիւն է եղել նրան այս ճանապարհը, որով գնում է և այժմ ծանր է շարժում է դէպի մի այլ ուղղութիւն: Ահագին տխրութեան ամպ ծանրանում է մեր սրտի վերայ, երբ մտածում ենք, թէ անգլիացին գնում է, կանատա, Աւստրալիա, Հնդկաստան, Փրանսիացին թողնում է իր միշտ անհող, միշտ ուրախ և միշտ զւարճ Բարիզը և գնում է Ափրիկէի դժոխային դօտինների տակ, մի կտոր հող ճանկելու և նրա մշակութեամբ իր ապագան ապահովելու, մեր սիրելի Հայը և ոչ անգամ կամի մտածել իր ապագայի վերայ, նա թողնում է իր երկիրները և կեդրոնանում է քաղաքներում:

Գուցէ, մանր մունր վաճառականութիւնը, միջնորդութիւնը, բեռնակրութիւնը աւելի արժէք ունին նրա աչքում: Ծատ դառն է մեզ ասել, այս խօսքը, բայց ծածկել այն, ինչ որ զգում ենք, համարում ենք ոչ միայն կեղծաւորութիւն այլ և վատութիւն:

Մի քանի տարի կայ, որ լսում ենք Հանապազ մեր վաճառականներից մի կարծիք, թէ հարկաւոր է աշխատիլ վաճառականութեան վերայ, որպէսզի ազգը հարստանայ:

Երանի՛ թէ, ասում ենք մենք. քանզի այն տեսակ վաճառականութեան մէջ չենք տեսնում ազգային հարստութեան սերմը: Եւ միթէ կարծում են մեր պատւելի վաճառականք, թէ Մէնչէստրի, Մարսէյլի կամ այլ եւրոպական քաղաքների հետ առուտուր ունենալը, կարելի է անւանել ազգային վաճառականութիւն, միայն

այն պատճառով որ ինքեանք Հայ էին: Նոցա վաճառականութիւնը, ազգային չէ՛, և ազգի ընդհանուրի շահի հետ չունի որևիցէ վերաբերութիւն: Սյն ժամանակ միայն կարող է երևիլ ազգային վաճառականութիւնը, երբ նա, գըլխաւորապէս, Հայի առաջ բերած նիւթը և արդիւնքը վաճառէ, այն ժամանակ միայն, ազգը օգուտ կը քաղէ մեր վաճառականների գործառնութիւնից, երբ սոքա միջնորդ լինեն Հայոց ընդհանրութեան և Եւրոպիոյ մէջ, այն ժամանակ ազգային է վաճառականութիւնը, երբ նրա խարխիսը դուած է ազգի հիմքի վերայ:

Եւ մինչև այս, թող Հայ վաճառականը հազար տարի ապրանք բերէ Եւրոպայից ու վաճառէ կամ որ նոյն է, օտարի ապրանքը ուղարկէ Եւրոպա, ազգին ո՛չ շահ կայ և ո՛չ վնաս, որպէս նաև, ո՛չ ազգային վաճառականութիւն. վաճառականը թերևս ինքը շահի, դարձեալ ազգին բան չկայ: Ի՞նչ կօ՛գնէ սորա անհատական հարստութիւնը, միլիօնաւոր աղքատների ընդհանուր կարօտութեան:

Կանգնեցուր, եթէ կամիս, նոր սիւներ, բայց հիմքը ոյժ չունի, շինւածքը ինչպէ՞ս կարող է կանգուն մնալ:

Հարկաւոր է հիմքը նորոգել, կենդանութիւն տալ նրան, ոյժ և զօրութիւն դնել նրա մէջ, որպէսզի կարողանայ հաստատ պահել իր վրայ լինելոց շինութիւնը:

Ի՛նչով պիտի նորոգենք այս հիմքը. լուսաւորութի՞ւն տարածելով: Ո՛ւր են մեր հնարքը, որ կարողանայինք գործ դնել այս խորհրդով:

Հինգ, տասն հոգի աղագասէր, թերևս կարողութեան տէր մարդիկ, դեննք թէ կամենալին զոհեւ իւրեանց ստացւածքը աղգի օգտին, բայց Հինգ, տասն ոյժը ի՞նչ կարող է օգնել, ինչպէ՞ս կարող է դէմ դնել միլիօնաւոր ժողովրդի կարօտութեան: Եւ միթէ՞ կարող է արտաքին հոգաբարձութիւնը լուսաւորել և կրթել մի հազին բազմութիւն, եթէ այդ բազմութիւնը ինքը չէր դիմում դէպի լուսաւորութեան արևը: Եւ այդ ահազին բազմութիւնը որ առաւօտը զարթելով, պիտի մտածէ, թէ ինչպէ՞ս սնանի կամ ինչպէ՞ս սնուցանէ իր բնատնիքը, որպէս թէ կարող էր մտածել լուսի կամ խաւարի վերայ:

Մենք չենք հաւատում: Ստրկութեան մէջ, աղքատութեան մէջ, չկայ և չէ կարող լինել լուսաւորութիւն:

Թողունք այս, մտահայեաց փիլիսոփայութիւնը արժէք չունի մեր օրերում: Այն փիլիսոփայութիւնը, որ անմիջապէս չէ բղիւում մարդկային կեանքից և որ չէ զաղարում դարձեալ մարդկային կեանքի վերայ, քանի որ մարդը ապրում է և օդ է շնչում, մենք հրատարակում ենք նրան իմաստականութիւն և խաբէութիւն: Մարդն է փիլիսոփայութեան, և՛ հեղինակը և՛ առարկան: Անցան այն ժամանակները, երբ մի տեսակ երկար աքղանցք, խորամանկութեամբ տիրելով մարդկային բանականութեան, եզրպտական առեղծւածներով պատգամ էին աւլիս նրան, անցան այն ժամանակները, երբ մտածում էին պարզամիտ մարդիկ, թէ օդի անչափելի բարձրութեան մէջ դբած է փիլիսոփայութեան աթոռը: Սո՛ւտ. փիլիսոփայութիւնը

նը երկրագունդի վերայ է, մարդն է նրա աթոռը, մարդն է նրա՞ն՝ քննողը և՛ քննելին: Իայց մարդը, յառաջ քան թէ պիտի հոյանայ. յառաջ քան թէ գոյանալուց յետոյ պիտի ապրի, յառաջ, քան թէ պիտի քննէ և իմաստասիրէ իր անձը, իր կեանքը, իր անցածը, իր ներկան, և յառաջ քան թէ պիտի մտածէ և հոգաբարձու լինի իր ապագայի մասին, այս բոլորից առաջ, մարդը կարօտ է նիւթի: Անցան այն մանակները, երբ, մշուշով պատած մարդկային երեւկայութիւնը, ոչնչից տիեզերք էր ստեղծում «Ex nihilo, nihil fit», վերջին մանուկը կրկնում է այսօր մեզ հետ:

«Ոգի, մարմին և ոսկերս ոչ ունի» — ասում է Աստուածամարդը, իսկ մարդը մարմին և ոսկերք ունի, և այս թանձրութիւն վկայ է բերում նա: Առանց մարմնի չկայ շօշափելի կենդանութիւն, իսկ մարմինը նիւթ է և մարմնի և մարդու կեանքը նիւթերի անդադար փոխանակութիւն: Այսպէս խօսելով, չենք մերժում մարդկային կեանքի բարոյական կողմը, թէ և մեր ճանաչած բարոյականութիւնը մարդկային համերաշխութենից կը բղխի և Սինայի հետ վերաբերութիւն չունի, այլ կամենում ենք ասել, թէ մարդը նախ և առաջ կենդանի է և ապա բարոյական էակ: Նորածին մանուկի համար, ինչ հարկաւոր է նորածին մանուկը առնուլ մեզ օրինակ, պատանու համար մինչև նըրա խեղահասութիւնը չկայ բարոյական խնդիր. բայց մարդը մինչև այն աստիճան հասանելը կարօտ է նիւթի: Նիւթական խնդիրը միշտ կայ: Առաջին շունչի հետ մարդը առնում է օդի թթւածինը. և երբ վերջին անգամ դուրս արձակում է իր թոքերից ածխաթթոււն, առանց

վերստին թթւածինը ներս ընդունելու, նա կենդանի չէ ալլևս :

Տնտեսական խնդիրը մահու և կեանքի խնդիր է, կրկնում ենք դարձեալ : Եւ անկարելի է հայոց ազգի հիմքը նորոգել, ոյժ և զօրութիւն դնել նրա մէջ, քանի որ ազգը, հասարակ ժողովուրդը, կարօտ է օրական հացի, քանի որ նորա տնտեսական խնդիրը կարգի չէ դրուում :

Հայոց հասարակ ժողովուրդը աղքատ է և չունենալով ոչինչ կարողութիւն հազիւ հազ սերմանում է և հնձում է այնքան, որքանը նրա տարձկան ապրուստը, գիարդ և իցէ, պիտի կարողանար ապահովել : Նա չէ կարող աւելի ցանել, որովհետև ոյժ չունի, և եթէ ունենար ևս, դարձեալ ընդունայն . քանզի բնականից լինելով մի կաթուածազար ժողովուրդի, որպիսի է թիւրքը, որի մէջ չկայ և յաւիտեան չպիտի լինի ոչինչ գործունէութիւն, երկրագործի ապրանքը կարող էր մնալ նրա ձեռքում, որովհետև չկայ այդ ապրանքի վաճառականութիւնը, չկայ մինը որ ապրանք խնդրէ նրանից, ապրանք ապսպրէ նրան, և եղածը առնու արծաթ վրձարելով փոխարէն : Ապա եթէ հայ շինականի ձեռքը մի փոքր դրամ անցանէ, եթէ նա յոյս ունենայ որ իր աշխատութիւնը պիտի գնահատուի, եթէ նա տեսնէ իր մշակութեան պտուղը, ո՞չ ապագէն կրկնապատիկ կ'սկսի ցանել, կրկնապատիկ հնձել : Ո՞չ ապագէն դաշտերը կը մշակուին և ժողովուրդը մի փոքր ազատ շունչ կ'առնու :

Իայց խնդիրը այստեղ է թէ ո՞վ տայ երկրագործին այն դրամը, որ հարկաւոր է նրա լք-

եալ բազուկները զօրացնելու համար :

Վաճառականը, կամ, փոքր ի շատէ կարողութեան տէր մարդը, պատասխանում ենք մենք : Վաճառականը ո՞չ ապագէն դրամ է տալիս իր վաճառելի ապրանքը ձեռք բերելու համար : Ո՞չ ապագէն ունի մի քանի փարայ, որի շրջանառութեամբ ապրում է նաև նրա ընտանիքը :

Կարողութեան տէր մարդը, ո՞չ ապագէն իր արծաթը դնում է սեղանաւորի մօտ, կամ տալիս է մասնաւոր մարդերի տոկոս ստանալու ակնկալութեամբ : Վաճառականը, փոխանակ եւրօպայի ձեռագործքը գնելու և փոխանակ պատահարների ձեռքում խաղալիք դառնալու, կարող է ամենայն վստահութեամբ, հում նիւթեր առնուլ հայ երկրագործից, ապրանք ապրսպրել նրան, մանր մուներ գումարներ տալ յառաջուց այս և այն շինականին և հունձից յետոյ, ապրանք ստանալ փոխարէն : Կարողութեան տէր մարդը, նոյն այս ճանապարհով կարող է աճեցնել իր գումարը : Եւ եթէ չկամի նա ապրանքը պահել իր ձեռքում, մի րոպէի մէջ կամեցաւ և ահա պատրաստ են վաճառականք դրնել նրա ապրանքը :

Այս ճանապարհով միայն դրամի, շրջանառութիւնը կը մտնէ ազգի մէջ այս ճանապարհով միայն, ազգը կարող է բարւոքել իր տնտեսական վիճակը, այս ճանապարհով նիւթական ոյժը կ'անցանէ ազգի ձեռքը . ազգը կը զօրանայ և երկրագործը և վաճառակա՛նը և կարողութեան տէր մարդը օր ըստ օրէ կը հարստանան : Չուզահեռաբար սորա հետ կը լայնանայ և սոցա գործունէութեան ասպարէզը : Եւ որ-

քան ասպարէզը լայնանայ, այնքան շահը և հարստութիւնը կը լայնանայ, և որքան շահը և գործունէութիւնը աճի, այնքան և ասպարէզը կը տարածւի :

Մինչև այժմ, Հայոց ազգի մէջ, իրախուտ և անհիմն վաճառականութեան խորհրդով հիմնւեցան մեծ կամ փոքր ընկերութիւններ, նրանցից ոմանք ընկան դէպքերի հարւածի տակ, ոմանք տեղում են կիսամեռ, բայց մինչև այժմ չեղեցաւ և ո՛չ մի ընկերութիւն որ պարագէր երկրագործութեան և երկրագործական բերքերի մշակութեան, մինչև այժմ չեղեցաւ մի ընկերութիւն՝ զգալին վաճառականութեան : Հեշտութիւն համարեցան ինքեանց . բայց մեզ թրւում է միայն մի լոկ սովորութիւն որ հայկական վաճառականք մշակ դարձան Եւրոպացոց :

Որեւիցէ ձեռագործ ապրանքով վաճառականութիւն առնողի շահին հակառակ է, եթէ նոյն ապրանքով վաճառականք բազմանան նրա չորս կողմում . իսկ բնական բերքերի համար այս վտանգը ևս չկայ, ո՛րքան կամիս, այնքան կարես : Ձեռագործ ապրանքների մեծագոյն մասը կեանքի էական պիտոյքներ չեն և նրա մանր վաճառականը պիտի վաճառէ իր ապրանքը հասարակ ժողովուրդին : Ժողովուրդը, շատ անգամ շոյլանում է, այո՛, բայց և շատ անգամ նրա մեծագոյն մասը հարկադրում է մի միայն կեանքի էական պիտոյքը հոգալ, կարելի եղածին չափ տնտեսութիւն գործ դնելով ձեռագործ բաների մէջ :

Բայց սորանից, մեր հայ վաճառականների համար, սոսկալի տարբերութիւն կայ ձեռագործ ապրանքով և երկրագործութեան բերքե-

րով վաճառականութիւն առնելու մէջ : Թողունք տակաւին, այն որ ձեռագործի վաճառականութիւնը չէ դարձնում դէպի մեր ազգը դրամի շրջանառութիւնը, հերի՛ք է միայն ցոյց տալ որ ձեռագործի վաճառականը առողջ դրամ պիտի վճարէ Եւրոպայից ստացած ապրանքի փոխարէն, իսկ ինքը, պիտի վաճառէ թիւրքիոյ մէջ, ո՛վ գիտէ թէ ինչ կերպ, կամ ինչ դրամով : Ուրա հակառակ, հում նիւթերի, երկրագործութեան բերքերի վաճառականը պիտի գնէ իր ապրանքը թիւրքիոյ մէջ և պիտի վաճառէ Եւրոպացոց, ասել է թէ, փոխանակ տալու ինքը պիտի ստանայ առողջ դրամը :

Ձեռագործի վաճառականը, իր սովորական չափից աւելի (թէ և ունենար աւելի դրամական ոյժ) չէ կարող ապրանք բերել Եւրոպայից, որովհետև սովորական չափով բերածը ևս ապաստան է հանգամանքներին և շատ անգամ մնում է անվաճառ, կամ, սովորութիւնից դուրս եկած լինելով կամ միայլ պատճառով, մինչդեռ հում նիւթերի համար չկայ որևիցէ սահման : Եւրոպան, իր ներկայ վիճակին մէջ, նայելով նրա երկրագործութեան պայմաններին, նայելով նրա ձեռագործութեան աստիճանին, նայելով միլիոնաւոր բաղմութեանց անհող վարձկանութեանը, միշտ և միշտ կարօտ է, թէ էական ապրուստի վերաբերեալ հում նիւթերի և թէ գործելի կամ մշակելի նիւթերի, որոնց վերայ հիմնում են նրա ձեռագործութիւնքը, նրա գործարանքը և նրա մեքենաները :

Ասացինք, վերևում, թէ մեր վաճառականք եւրոպական ձեռագործի առևտուրը սովորու-

թիւն են արել ինքեանց : Այո՛, սովորութիւն է այս, բայց այն աստիճանի կամակոր, որ դրեթէ դառնում է այսօր մի աղգային աւանդութիւն : Եթէ քննութեան տակ դնենք այն սովորութիւնը, անհնարին է լինում չափել այն սարսափելի վիհի խորութիւնը որ բացւում է մեր առջև : Գրեթէ ազգովին, սովորութիւն առնել ապրանք գնել Եւրօպայից, մինչ ինքեանք կըրկին անգամ աւելի պիտի կարողանային վաճառել նրան, դրամ ուղղարկել Եւրօպա մի այնպիսի տեղից, ուր ոսկին ու արծաթը դարձել է մի առասպել, և ուր, ինքը Տէրութիւնը չգիտէ թէ ինչ ճանապարհով առնու Եւրօպայից, մեր կարողութենից վե՛ր է այս սովորութեան հետ հաշտել :

Երբ վաճառականը, մի շփոթեալ և աղմկեալ տեղում կեանքի հոսանքի մէջ ընկած նայում է մասնաւորապէս իր գործին, և երբ ժամանակ չունի, կամ, չկամի քննել իր գործը, իր ընթացքի ուղղութիւնը, այնտեղ, չէ երևում այն վիհը, որի մասին խօսեցանք : Իսկ երբ ամենայն սառնութեամբ քննեն իւրեանց բըռնած ճանապարհը, և այս քննութիւնը յառաջ տանին մինչև գործի տարրական պարզութիւնը, այնտեղ, ճեղքւում է վարագոյրը և ահա վիհը, տեսնողի առջև է :

Կամայական անձնախարհութեամբ վիհը չի քննելով, արդեօք, փրկւած է ձեռագործի վաճառականը : Մենք թողնում ենք համեմատական բաղդատութիւնը վաճառականութեան երկու մեծ ճիւղերի, այսինքն, ձեռագործի և երկրագործական բերքերի . հետևինք միայն ձեռագործի վաճառականին, ըստ ինքեան :

Չեռագործ ապրանքի մանր վաճառականը ոյժ չունի, նա խաղալիք է իւրեան ապրանք տուող մեծ վաճառականի կամ, գործարանատիրոջ և կամ միջնորդի ձեռքում : Զօրութիւնը նոցա մօտ է, որովհետև նոցա մօտ է վաճառականի պարտքի մատեանը կամ մուրհակը : Միւս կողմից խաղալիք է բիւր հանգամանքների ձեռքում : Նորա ապրանքը, ինչպէս ասացինք, չունի այն ոյժը, այն կարեւորութիւնը, որ մարդը առանց նրան չկարողանայ ապրել : Ապրանքը մնում է անվաճառ, կամ, վաճառածի դրամը անհնար է ձեռք բերել, գնողը չէ վճարում, միւս կողմից վաճառականի հատուցումի նդովեալ ժամանակը մօտենում է և մօտենում է անխնայ : Վաճառականը շարել է, շտեբն են շարել նրա նման . մնում է, առանց վաստակի վաճառել ապրանքը որպէսզի պարտքը կարողանայ վճարել : Եթէ գործ չը դնէ այս հրնարը, հարկաւորապէս, պիտի շահով պարտք առնու և այնպէս վճարէ, չվճարել իր ժամանակին չէ կարող, առանց գործերը դադարեցնելու : Բայց այն տոկոսը, որ պիտի վճարէ իր նոր պարտքի համար, կը տանի նրա ապրանքի վաստակը, թէև սկզբում ծանր թւեցաւ նրան, ապրանքը առանց վաստակի վաճառել և պարտքը վճարել : Ուստի իջեցնում է նա ապրանքի գինը, հարիւրին մի քանի տասանորդ : Միւս վաճառականը, ինչպէս կարող է պահել նոյն ապրանքի նախկին արժէքը, իջեցնում է և նա : Կէս-մեռ, կէս-կենդան, անցնում են մի քանի օր : Բայց վճարի ժամանակը աւելի մօտեցաւ, ինչ ճար : «Այս առաջին հատուցումը ձեռք բերելու համար», վճռում է նա իւր մէջ, «հար-

կաւոր է վնասով ևս վաճառել այս անգամ, յետոյ, կը բարձրացնեմ գինը և կը լրանայ պակասորդը: Կը լրանայ... Միւս կողմից այն մարդիկը, որ պարտական էին նրան, չեն վճարում իւրեանց պարտքը, առեւտուրը ինկած է, ոսկին, կրկին արժէքի բարձրացած, եւ ահա, երկրորդ, երրորդ և միւս վճարները հետզհետէ, մահի պէս: Ի՛նչ եղաւ հետեանքը: Մանր վաճառականը բոլոր ժամանակ աշխատեցաւ իւրեան ապրանք տեղի օգտի համար. և ոչ միայն այսչափ, այլ, առեւտուր սկսելու ժամանակ, նրա մէջ բերած գումարը ևս հալեցաւ, բոլոր ձեռքի ապրանքը պարտքի փոխանակ տալուց յետոյ, դեռ ևս պարտական մնաց. եւ առանց ամենայն հնարի, որ անհրաժեշտ է ապրուստի համար:

Ո՛ւր գնայ այժմ այն վաճառականը, ի՛նչ գործէ: Հաւատարմութիւնը ընկած է, ոչ ոք ապրանք կամ դրամ չէ տալիս նրան, և եթէ տային եւս, հարիւրին իննսուն անօգուտ. քանզի նոյն գործողութիւնը, ինչ որ անցաւ առաջին անգամ, պիտի կրկնուի անշուշտ, որովհետեւ նոյն հանգամանքների ազդեցութեան տակ է նա, եւ գործի հիմք չունի: Ի՛նչ գործէ, ուրեմն, այդ վաճառականը: Մնում է նրան իրրեւ վարձկան ծառայել ուրիշի մօտ, բայց այս, հեշտ բան չէ. նա ևս մարդ է, զգացմունք ունի: Նա, մինչդեռ ինքը ունէր մի փոքր գործ, իր անձը զգում էր ազատ, գո՛նէ որեւիցէ պարոնի անմիջական հրամաններից, թէ եւ կատարելապէս անկախ չէր, եւ նա երբէք չէ մտածել այդ մասին, որովհետեւ գիտէր, թէ որոնց որ պարտունի, կախում է նրանից, եւ թէ մի անյաջող

վայրկեանում, կարող են նոքա ճմլել նրան: Բայց, չնայելով այս բոլորի վերայ, կախողութիւնը ամենայն ժամանակ զգալի չէր, մանաւանդ, եթէ գործերը մի փոքր յաջող էին. իսկ այժմ, դրամական, կամ, առեւտրական նաւաբեկութիւնից յետոյ, հարկը ստիպում է նրան, երթալ ենթակայանալ մի կոպիտ յարաբերութեան, որ լինում է պարոնի և ծառայի մէջ, տանել այն բոլոր անախորժութեանց եյանդիմանութեանց, արհամարհոտ եւ խէթ հայեացքների, որոնցով առատօրէն վարձատրուում է մի խեղճ ծառայ մի անտաշ եւ տմարդի պարոնի մօտ:

Թերևս, եթէ վաճառականին հանդիպեցաւ կատաստրօֆը, երիտասարդութեան ժամանակ, դնենք, թէ ատամները սեղմելով, սեւ ճակատագրին հնազանդւելով ընդունեց այս խաչը. բայց այն յիսուն-վաթսուն տարեկան մարդը, ընտանիքի եւ զաւակների տէր, որոնց դարմանելու համար, ոչ մի պարոն չէ կարող տալ նրան բաւական վարձ, թողունք և այս, ի՛նչպէ: Երթայ նորի նորոյ ծառայ դառնայ այդ հասակում: Բայց, այս տեղ ընտրութիւն չկայ և հրաժեշտ չէ կարելի տալ, քանզի աղքատութիւն կայ մէջտեղում, քանզի պէտք կայ, քանզի հացի խնդիրը, ամեն ընկալ բաղխում է նրա դուռը: Եւ մի այդպիսի վատաբախտ մարդու համար, հեշտ չէ գտնել նաև մի պարոն, որ յօժարէր ընդունել նրան իր մօտ: Յիսուն-վաթսուն տարեկան մարդու առաջարկեալ ծառայութիւնը, պարոնների համար չէ կարող լինել մի հրապուրիչ բան:

Մեզ կարող են ասել, թէ մենք նկարագրը-

րում ենք այս կացութիւնների, միայն տխուր և սեւ կողմերը :

Որովհետեւ պատասխանում ենք, այն միւթարիչ և լուսափայլ կողմերը, որ այսպէս հըրապուրում են եւ իւրեանց են քարչում հետզհետէ, գրեթէ բոլոր Հայոց ազգը, որի համար դարձել են նոքա կատարելութիւն — ideal, ոչ միայն լոկ բացառութիւնք են, այլ և տեսարանական խարէութիւն, — illusion optique ! Բացառութիւնը չէ կարող իբրեւ օրէնք քննել, ուրեմն եւ չէ կարող օրինակ դառնալ ընդհանուրին :

Այսօր ամեն մարդ աշխատում է վաճառական դառնալ, նա հաւատում է, թէ վաճառականութիւնը կարող է նրան փրկել . բայց չկամի մտածել, թէ ունէ՞ր արդեօք իր ձեռքում այն պայմանները, որոնցով միայն հնարաւոր է վաճառականութիւնը : Այն, ինչ որ նոքա անւանում են վաճառականութիւն, թո՛ղ ներքի մեզ հրատարակել, լսի Տիշնորդութիւն, որքէ ծարացութիւն և արտել որքէն Բե Իբէան օգտակար : Վաճառականութեան մէջ շահը եւ օգուտը, ո՛րքան ընթացք եւս կատարէ, ո՛րքան զանազան շրջաններ առնու, ի վերջոյ, էականապէս, կենդրոնանում է այնտեղ, որտեղից դուրս ելաւ այն ապրանքը, կամ, գումարը : Զորութիւնը եւ ոյժը այնտեղ է, կրկնում ենք, ուր դրամագլուխը կամ ապրանքը կայ : Առնողը տկար է, քան թէ տւողը, առնողը կարօտ է, քանզի ոչինչ ունի : Նա, միայն յոյս ունի, թէ աճա կառնու ապրանքը, կը վաճառէ, նորանից կը վճարէ ապրանքի տիրոջ իր պարտքը եւ աւելորդ շահով ի՞՞քը կ'ապրի, կամ, գանձ կ

դիզէ : Եւ, այս տեսակ վաճառականութեամբ թերեւ, եթէ հայը միջնորդ կամ գործակատար լինէր երկու համազօր աշխարհների մէջ, գուցէ կարողանար ապահով եղանակով ապրիլ, թէ և մի միայն իր համար, այսինքն առանց ազգի ընդհանրութեան մի օգուտ բերելու . բայց, եւրօպիոյ եւ թիւրքիոյ մէջ, եւ ոչ անգամ երազելի է այն ապահովութիւնը, քանի որ թիւրքիան յարաբերում է եւրօպային, իբրև բացասական մեծութիւն, դրական մեծութեան : Մեզի ուրիշ վկայութիւն հարկաւոր չէ, մեր ասածը ապացուցանելու համար, ազգի վիճակը առնում ենք իբրև իրողութիւն, եւ նրան դարձեալ, իբրև վկայ գնում ենք ազգի առջեւ : Այսքան տարիներ գնում է ազգը այս ճանապարհը եւ այս վերջին օրերում, խուռն յորձանքով, բայց այդ վաճառականների ընդհանրութիւնը — միջին թիւը, հազիւ-հաց ապրում է եւ ազատութիւնը, օրէ օր, տարածում է իր սև վարագոյրը ազգի վերայ : Զարհուրելի է մեզ երևակայել միլիօնաւոր մարդիկ, (հարկաւոր ևս չէ երեւակայել, որովհետեւ իրականապէս կան) օդին ապաստան արած իւրեանց կեանքը : Նոքա գալիս են եւ գնում են, «որպէս հողմ որ շնչէ, որ ոչ գիտէ ուստի՛ գայ կամ յո՛ երթայ» : Զէ՛, այս անբնական մի գործ է, եւ ազգի կաթուածահարութեան աղբիւրը բղխում է այս տեղից : Մինչև ազգը չկտորէ այս ուղղութիւնը, մինչև որ նա չկատարէ մի տնտեսական յեղափոխութիւն, իր մինչև այսօր բռնած ընթացքի մէջ, եւ մինչև չդիմէ դէպի բնութեան գողը, յառաջադիմութիւնը աներեւակայելի է : Թո՛ղ, հազարաւոր դառնայ հարուստ անհատների թի-

ւը, թո՛ղ հարիւրաւոր լինի եւրօպական դպրոցների մէջ կրթութիւն ստացողներին թիւը, ի վերայ այսրամենայնի, ազգի ընդհանուր թիւնը կը մնայ անշարժ եւ անդամալուծեալ: Այն օրից պիտի թւենք ազգային նորոգութեան դարագլուխը, երբ ազգը դիմէ դէպի բնութիւնը, որ ոչ միայն կարող է փրկել եւ ազատել ազգը աղքատութիւնից, այլ և, մեծ գարկ տալ նրան յառաջադէմ՝ բեղունութեան մէջ:

Բնութեան մէջ չկան այն մտանգները, ինչ որ կան մեքենական վաճառականութեան մէջ. այնտեղ, մարդը ապահովեալ է բնութեան օրէնքով: Այն մարդը, որ բնութեան հետ գործունի, որ անմիջապէս հողից ստանում է բնութեան բերքերը, և նոքա են նրա նիւթական ոյժը եւ կարողութիւնը, հաստատ է իր ոտքի վերայ. նա կարօտ չէ ուրիշին, դրա փոխանակ, ուրիշը կարօտ է նրան: Մանր վաճառականը, իր ընթացքի մէջ, կարօտ է մեծ վաճառականին՝ զանազան միջնորդական տունների, գործարանների եւ ի վերջոյ դրամագլխի տէր մարդոց. իսկ այն օրից, երբ նա թողեց նրանց, եւ դէմքը դարձուց դէպի բնութեան հիւրընկալ գիրկը, յարաբերութիւնքը փոխուում են, ե՛ւ միջնորդը, ե՛ւ մեծ վաճառականը, ե՛ւ գործարանը, ե՛ւ միւսը, ե՛ւ միւսը, կարօտ կը լինին նրան: Ոյժը կանցնէ նրա ձեռքը, թո՛ղ, որչափ կամի փոքր լինի նրա ապրանքը — ոյժը, այնուամենայնիւ դրական գորութիւն է. քանզի ապրանքի փոխարէն պիտի ստանայ զուտ արծաթ:

— Մի՛թէ այս վաճառականութիւն չէ՞, մի՛թէ այդտեղ չէ՞ կարելի մնասի հանդիպել, եւ այլ հարիւրաւոր հարցական միջնորդ, լսուում են այս տեղ:

«Վնաս, մնասից տարբեր է: Անհիմն վաճառականութեան մէջ, հարիւրին, իննսուն հաւանականութիւն կայ մնասի հանդիպելու, իսկ բնականի մէջ, նոյնքան հաւանականութիւն նրան չհանդիպելու: Այլ խնդիր է ջուրը մտնել, թոյլ տալով խեղդուելու կարողութիւն, և այլ խնդիր է մտնել, հաստատ գիտելով, որ պիտի խեղդուի»:

Հայոց ազգը, քանի որ չունի իւր սեպհական երկրագործութիւնը, բոլոր նորա ճիւղերով, նորա վաճառականութիւնը է՛, և կը լինի, Եւրոպացոց համար ծառայութիւն: Իսկ այն օրից, երբ ազգը կսկսի մշակել հողը, երբ մարդիկ կը դառնան իւրեանց հայրենի, բարեբեր երկիրները, որ այսօր գրեթէ ամայի և խոպան է, այն օրից կը կենդանանայ և Հայոց վաճառականութիւնը:

Եւ այն օրի վաճառականը, ոչ միայն կազատուի Եւրոպացոց համար ախ ու վախով և բիւր նեղութեամբ գործ կատարելուց, ոչ միայն ինքուրոյնաբար կը կանգնի իւր ոտքի վերայ, այլ և եւրոպական արծաթը և ոսկին ներս կը հոսեցնէ ազգի մէջ, և ինքը կը շահւի տասնապատիկ աւելի և մեծ ու մեծ շահ կը բերէ ազգի ընդհանրութեան, որ է ազգի հիմքը, լրծակը, շարժարանը: Ընդհանրութիւնը կազահովւի, քանցի գորութիւնը կը գրաւէ իւր կողմը, քանզի Եւրոպան կարօտ է նորան, քանցի, երկրի բերքերը դուրս տալով, իւր մէջ պիտի դարձնէ դրամի շրջանառութիւնը:

Եւ միայն հում բերքերը չեն, որ կարող են գրաւել հայ վաճառականի գործունէութիւնը. այդ բերքերի մշակութիւնը, միլայն հանդէս,

մի բնական ասպարէզ այն ժրաջան և գործունեայ մարդերի համար, որ ստուգապէս կամին պարագեւ վաճառականութեան: Նոյն այն գործարանքը, նոյն այն մեքենաները, որ կարող են ներգործել Եւրոպայի մէջ, ծանր պայմանների տակ, կարող են ներգործել և Ասիոյ մէջ, ուր կեանքի պիտոյքը, պարզութիւնը և այլ բնական հանգամանքները աւելի դիւրութիւն կարող են տալ այսպիսի ձեռնարկութեանց:

Շատ մեքենայք, որ Եւրոպայի մէջ ներգործում են կրակի և շոգիի գորութեամբ, Ասիոյ պարզութեան մէջ կարող են ներգործել սարերից կատաղաբար վազած ջրերով, որի համար հարկաւոր չէ վատնել այն դրամը, ինչ որ եւրոպացին վատնում է ածուխի կամ փայտի համար: Եւ այն ապրանքը, որի հում նիւթը, շատ անգամ Ասիայից երթալով Եւրոպա և պատրաստուելով այն տեղ, հասնում է դարձեալ Ասիա, անցնելով մի քանի ձեռքերից, նոյնը, աւելի արժան, և նոյն որակութեամբ, կարող է պատրաստուիլ Ասիոյ մէջ: Աշխարհագրական անւանակոչութիւնքը չեն պատճառը, որ Եւրոպական, Եւրոպա է դարձել, իսկ Ասիան, Ասիա, ու յետ է մնացել: Այո՛, կլիմաները կարող են շատ բան պատճառել, բայց Եւրոպայի, և Փոքր-Ասիոյ եղանակները գրէթէ մեծ տարբերութիւն չունին, և ասիականը, եթէ աւելի յարմար, աւելի ձեռնտու և աւելի ախորժելի չէ, գո՛նէ բնաւ պակաս չէ Եւրոպայից: Նորա կախարդական թովչութիւնը ոչ նորա աշխարհագրական անունի մէջ է և ոչ նորա կլիմայի մէջ: Նորա գործունէութիւնն է, որ այսօր պատգամ է տալիս բոլոր երկրագունդին: Շը-

ւեցիայ սառնամանեաց մէջ, նա, արւեստով և բիւր հոգաբարձութեամբ յառաջ է բերում այն, ինչ որ առանց աշխատութեան, բնութիւնը ինքը կարող է մեց տալ Ասիայում, եթէ միայն լինի մեր մէջ ստանալու ձգտողութիւնը: Եւրոպական հողը, անդադար ներգործելով, կարօտ է այժմ արւեստական հնարների բուսաբեր և արգաւանդ լինելու համար, մինչդեռ ասիական հողը մնացել է մինչև այժմ իւր կուսական վիճակի մէջ անձեռնամերձ, անարատ: Ո՛ւր թողունք այն բերքերը, որ ոչ արւեստը և ոչ գիտութիւնը կարող են յառաջ բերել Եւրոպիոյ մէջ, և որ այնպէս առատօրէն պարգևել է բնութիւնը Ասիային:

Անգլիոյ երկրագէտքը և տնտեսականքը, հաշւի ասկ դնելով իւրեանց հողի մէջ եղած ածուխի հանքը և Անգլիոյ տարեկան ածուխի պէտքը և գտանելով, որ հարիւր երեսուն տարուց յետոյ, Անգլիան ածուխ չպիտի գտնէ իւր հողին մէջ, ահա այս երկու տարիէ, որ «Երեմիայի ողբ» են կարդում իւրեանց գլխին. իսկ Ասիան մոռանում է միշտ երէկը. այժօր է նորա Աստուածը, որ պաշտում է, վաղը ի՛նչ կամի թող լինի, ո՛րի բան ու գործը կարել է, որ վաղւայ համար մտածէ: Մենք կարծում ենք թէ, աւելի շուտով, այս բնաւորութեանց մէջ է Եւրոպիոյ և Ասիոյ տարբերութիւնը: Այո՛, գործունէութիւնը, շարժողութեան հետեանք է և առանց շարժողութեան չկայ գործունէութիւն: Ուր չկայ գործունէութիւն, ասել է չկայ շարժողութիւն, իսկ ուր շարժողութիւն չկայ, այն տեղ կեանք չկայ, այն տեղ թագաւորում է մահը: Այսպիսի դիպւածում անունը յանցանք չու-

նի: Եւրոպայի մի ոտնաչափ հողը ևս հաշւած է, իսկ Ասիոյ մէջ, կարծեմ գտնւին տեղեր, ուր տասն տարին մի անգամ, և այն դիպւածով, հազիւ ոտք է կոխում մի մարդ:

Եւրոպան ուշ ծնեցաւ, բայց շատ արագ ծերանում է: Մի քանի դարու մէջ նա անցաւ պատմութեան շատ կերպարանքներ-phase, փոփոխեց և փոփոխում է դէռ ևս կառավարութեանց ձևերը, բայց ցարդ չհասաւ իւր նպատակին, որովհետև միշտ աշխատեցաւ ճանապարհը լայնացնել, ուղղել, հարթել, մոռնալով որ իւր նեղութիւնը ճանապարհից չէ այնքան, որքան ոտքի կօշիկից, որ սեղմում է և չէ թողում ման գալ: Այսպիսի դժբախտութեան մէջ, ինչ կօգնէ ճանապարհի լայնութիւնը, քանի որ կօշիկը նեղ է: Այո՛, Եւրոպան կանգնած է այսօր մի դժւար լուծանելի խնդրի առջև, այլ, տնտեսական խնդիրն է, ճարտար և հոգե: Եւ այդ խնդիրը, կանուխ թէ ուշ, թէ և սոսկալի փոթորիկներով, պիտի լուծուի: Ոչինչ բռնութիւն, ոչինչ պահպանողական համակարգութիւն, ոչինչ ընդդիմադրութիւն, որ և իցէ կողմից, չի պիտի կարողանայ փակել նորա առաջը, թէ և, այսօր, հալածակա՛ն և աքսորակա՛ն են այդ ապագայի մարգարէքը և առաքեալքը:

Եւ ինչպէս միջին դարերում, Ասիոյ անկիւններից խուռն բարբարոսներ իջան ու հեղեղեցին Եւրոպա, այնպէս ևս, ճարտար և հոգե խընդիրը լուծուելուց յետոյ, Եւրոպական մարդը պիտի իջանէ Ասիա: Պիտի գայ օր, երբ այն պառաւ Ասիան պիտի մանկանայ, և ասիական ազգերը այն վայրկեանից պիտի սկսանին իւր-

եանց պատմութիւնը, եթէ ընդունակ լինին իւրև ազգը ապրելու. իսկ եթէ ոչ, օր ըստ օրէ կ'անհետանան, որպէս մի կաթիլ համատարած ծովի մէջ: Ամերիկան, Աւստրալիան, այլ երկիր-կիրներ, և կղզիք, կենդանի վկայք են մեր խօսքին: Ասիոյ ապագան աւելի մեծ է, աւելի լայն է տնտեսական խնդրի վերարեութեամբ, քան թէ Եւրոպիոյ ապագան: Հայերին մնում է վաղօրօք օգուտ քաղել իւրեանց դրութիւնից:

Կարող են, դարձեալ, դիմադրել, որ եթէ մեր հայեացքով, միայն մարդ ու հաց կայ աշխարհի երեսին, եթէ մենք, մի կտոր հողի վերայ, քարոզում ենք հաւասար իշուունք, որբեմն, ազգութեան խնդիրը և ուշադրութեան արժանի բան չէ. մարդը, ապրել է Հայի անունով, թէ մի այլ անունով, դարձեալ միևնոյն մարդն է, և այլն:

Այո՛, եթէ հաւասար իրաւունքը այսօր խոստովանելի բոլոր երկրագունդի վերայ, եթէ ներկայ եղած պետական համակարգութիւնքը այսօր ոչնչանան, վաղը, ոչ միայն չի մնում ազգութեան խնդիրը, այլ հարկաւոր ևս չէ: Բայց այս է բանը, որ դորան հասնելը, ժամանակի է կարօտ. և մինչև այն ժամանակ, «Արքայութիւն Աստուծոյ բռնաբարի, և բռունք յափշտակեն զնա» . մինչև այն ժամանակ, «սահմանք քաջաց, զէնք իւրեանց»—ասումէ մեր իմաստուն Մերունին: Մենք ուրախ չենք, որ այսպէս է լինում, մենք ուրախ չենք, որ մի ազգ ճնշում է, հարստահարում է միւս ազգը, և իւր զէնքով սահման է դնում նորա հողի վերայ, բայց որովհետև մեր տրամութիւնը ոչինչ է, համեմատելով այն մինչև այժմ եղած կարգի հետ, ուստի

մեր կարողութիւնքը ուղղում ենք մեր ազգութիւնը պաշտպանելու համար: Եւ մեր ամենիս պարտքն է մինչև այն ժամանակ մնալ ազգութեան դրօշի տակ, որքան ուրիշը կրում է, իւր սեպհական ազգութեան դրօշը: Բայց, այս ասելով, կամք չունինք ազգութիւնը կոյր Ֆանատիկոսութիւն դարձնել: Հերիք է, որչափ, կոյր և Ֆանատիկական ազգութիւնը ունի իւր եսական կողմերը. հերիք է ասում ենք, որ մի ազգութիւն, իւր մի շամփուր խորովածի համար, մորթում է միւս ազգութեան եզր... .

— Այս ինչ հակառակախօս դրութիւնք են, — մտածում է, մեր ընթերցողների միջից, նեղ սիրտ մարդը: Երկու տող յառաջ ազգութիւն է քարոզում, յետոյ, ազգութեան մէջ նշմարում է եսականութիւն և թուլացնում է առաջին տպաւորութիւնը:

Մեր պարտքն է, ուրեմն, յառաջուց պարզել մեր հայեացքը, և այս ծանրակշիռ խնդիրի համար, մի երկու քայլ խոտորել մեր ուղիղ ճանապարհից: Այս պատճառով, մէջ տեղ դնում ենք խնդիրը — ի՛նչ է ազգութիւնը:

Ազգութիւնը, իբրև պատմական իրողութիւն, իբրև հաւաստի երևոյթ, ընդհանուր մարդկութեան կեանքի մէջ, չէ կարելի մերժել, թէև բանականութիւնը երբէք չէ կարող արդարացնել նորան: Մարդը, մինչև այժմ չէ հասել այն տեղ, որ առանց երկրորդական եւ պաշտօնական անունի հանդէս գայ, միայն մարդու բնական անունով. մինչև այժմ մարդը չկայ աշխարհի երեսին, մինչև այժմ ազգեր կան:

— Խայտառակ դրութիւն, — շարունակում է մտածել մեր նեղսիրտը: — Ազգերը մարդե-

րից չե՞ն բաղկանում. և ինչպէս կարելի է բաղկացեալը ընդունիլ, իսկ բաղկացնողը մերժել և ուրանալ:

«Երբ մարդը, երևելով այս կամ այն ազգութեան մէջ, այլ ևս չէ կոչում ինքը իւրեան մարդու անունով, երբ նա անւանում է է Անգլիացի, Գերմանացի, և այլն, և այլն, եւ ընդհանուր մարդկութեան շահը ոտքի տակ կոխելով, անքուն հսկում է միայն իր ազգի շահի համար, երբ մարդիկ հասնում են մինչեւ այնտեղ, որ ոչ միայն մարդը, չեն ճանաչում մարդու անունով այլ շատ անգամ միլիոնաւոր բազմութեանց գոյութիւնքը ուրանում են, չնայելով որ այդ բազմութիւնքը ներկայ են. երբ թթուածինը և ջրածինը միանալով, կորուսանում են իւրեանց տարրական յատկութիւնը և երբւում են որպէս ջուր, որի յատկութիւնը տարբեր է և՛ թթուածինի և՛ ջրածինի յատկութիւններից, մեզ մնում է ընդունել այս երևոյթը, որպէս իրողութիւն:

Մարդերի բազմութիւնը ազգ ճանչնալով, շատ անգամ, ուրանում են նոցա սերունդի գոյութիւնը: Փիւնիկեցիք չկան, կամ, այն ինչ հին ազգը մեռաւ: Միթէ այդ ազգերը բաղկացնող անհատները ամենեքի՞ն մեռան, ամենեքի՞ն կոտորեցան, և բնա՞ւ, սերունդ չթողեցին, որ այսօր երևէր և կենդանի մարդերի միլիոնաւոր բազմութիւնը մեռելոց կարգը շանցնէր: Ամաղեկացոց համար միայն, վկայում է Սուրբ գիրքը, թէ Եհովան կոտորել տւեց եւ չթողեց և ոչ մի Ամաղեկացի. իսկ միւս ազգերի համար խօսք չկայ, ոչ սուրբ և ոչ անսուրբ գրքերում: Դնենք, թէ հին ազգերը մեռան և

յաջորդէ չթողցցին, բայց, նոր ազգերը, որ հիների օրերու չկային, նոր ստեղծեցան, եթէ՞ գետնից բուսան: Եթէ մարդը կայ, եթէ մենք տեսնում ենք նորան եթէ շատ անգամ գիտենք նաև նորա ծագումը, ինչպէս ապա ուրանում ենք նորա լինելութիւնը:

— Մենք ուրանում ենք ազգի լինելութիւնը. մարդը կայ, բայց ազգը չկայ:

«Ազգը եղած ժամանակ, դարձեալ, այդպիսի մարդերից չէ՞ր բաղկացած: Այս ի՞նչ բաբելոնեան խառնակութիւն է»:

Բայց չէ՞. սխալը աս տեղ չէ: Սխալը փորձական սխալ չէ, սխալը սկզբունքի մէջ է: Երբ տեսական ըմբռնումը սխալ է, թիւր կը լինի նորա փորձական հետեւութիւնը և կ'երևցնէ մի բաբելոնեան խառնակութիւն: Եթէ Փիլինիկեցիք իւրեանց վերայ կրած չլինէին Փիլինիկեցի յատուկ անունը, եթէ նոքա ապրած լինէին ճարտու անունով, նոքա չպիտի վերջանային, որովհետև մարդը կայ: Բայց, որովհետև նոքա իբրև Փիլինիկեցի երևցան, ուստի եւ իբրև Փիլինիկեցի վերջացան: «Ազգ զայ և ազգ երթայ» — ասում է բանաստեղծ — թագաւորը: «Սկ մարդը, յաւիտեան կայ» — կցորդում ենք մեք:

Չբացած ազգը, ապրում է իր ժառանգների մէջ, յառաջացած նոր ազգը վաղուց ապրում էր իւրնախաւարց մէջ: Ազգի մաշը անհատի մահիպէս չէ, ազգը չէ մեռնում Փիղիքապէս: Ազգը մեռնում է, բայց նորան կազմող անհատները կենդանի են, նոքա չեն կորչում, չեն չքանում և մարդերի թիւը չէ սակաւանում, թէև մեռնէր մի անագին ազգ: Ի՞նչ է ուրեմն չքացողը, մեռնողը. ի՞նչ է յառաջացողը, և ի՞նչ զօ-

րութիւն է այն, որ երբ չքանում է, կենդանի մարդերի միլիոնաւոր բազմութիւն, օր ու ցերեկով, համարում է չքացած և երբ յառաջանում է, վաղուց արդէն ապրող մի բազմութեան կազմում է նոր դարազուլ կենսքի և գոյութեան:

Աշուրիւնը միայն կարող է պատասխանել սրան:

Ազգութիւնն է ազգի անձնաւորութիւնը, ազգի դէմքը: Միլիոնաւոր մարդիկ կորուսանում են իւրեանց անհատական ինքնուրոյնութիւնը, այդ անձնաւորութեան օգտի համար. նրանք չեն երևում որպէս մարդ, այլ որպէս անբաժան աշուրի հասական անյնասորութեան: Եւ այդ անձնաւորութիւնը, բարոյապէս ապրում է, և, ինքնուրոյնաբար. ունի իր սեպչական կեանքը. իւր լեզու, իւր սովորութիւնքը, իւր աւանդութիւնքը...: Նրա ամեն մի սեպչականը սուրբ է նրան, և վա՛յ միւսին, որ ձեռք բարձրացնէ նրա, այս կամ այն, սեպչական սրբութեան վըրայ: Եւ ինչպէս, սովորական կեանքի մէջ, մասնաւոր մարդը աշխատում է իւր անձնական օգտին, և իւր անձնական ապահովութեան համար, ինչպէս շատ տեղ միասում է նա մի ուրիշ անհատի անձին և օգտին, այնպէս ևս մարդերի հաւաքական անձնաւորութիւնը, — ազգութիւնը, պահում է և պաշտպանում է իւր օգուտը և ոտքի տակ է կոխում ուրիշ իւր պէս անձնաւորութեան շահը: Ազգը, այսինքն, կենդանի մարդերի մի անագին բազմութիւն, համարում է կենդանի, եթէ կայ և չէ մեռած նրա հաւաքական անձնաւորութիւնը — նրա ազ-

գութիւնը. համարուում է դարձեալ մեռած, դատապարտուած և իրաւունքից զրկուած, եթէ չկայ այլևս նրա ազգութիւնը:

Վերևում ասացինք, որ ազգի մահը, անհատի մահի պէս չէ՛, ասացինք որ ազգը չէ մեռնում Ֆիզիքապէս. ի՛նչպէս, ուրեմն, մեռնում է ազգութիւնը: Մահը անհասկանալի է, եթէ չգիտենք կեանքը, ուրեմն առաջ կեանքը:

Ի՛նչ է կեանքը:

Կեանքն է անդադար շարժողութիւն, նիւթերի անդադար փոխանակութիւն և անձնապահուածութիւն: Արտաքին ոյժերը ներգործում են էակի վերայ (սովորական ոճով խօսելով) աւերող պէս, էակը անդադար շարժում է, ընդունում է նիւթեր, դուրս է տալիս նիւթեր և քանի որ կարող է շարժիլ և այս գործողութիւնը կատարել, նա ունի իւր ներսում ոյժ և զօրութիւն, որ դէմ է դնում արտաքին աւերիչ ուժերի ազդեցութեան և քանի որ կարողանում է նրանց դէմ դնել, պահպանում է իւր անձը, — ապրում է: Բայց երբ էակի ներքին, և արտաքին աւերիչ ոյժերի մէջ ընկնում է հաւասարակշիռը, երբ էակը չէ կարող իր ուժով դէմ դնել արտաքին ազդեցութեանց, նա չէ կարող պահպանել իւր անձը և՛ այն բոլորին մեռնում է: Արտաքին ոյժերը յաղթահարում են նրան և լուծում են նրա կազմաւածքը:

Ազգութիւնը ապրում է, եթէ նրա մէջ կայ, արտաքին, աւերիչ ոյժերի հաւասարակշիռ զօրութիւն. եթէ չկայ այդ զօրութիւնը մենք յետոյ կը խօսինք, այժմ այսչափ միայն հարկաւոր է ասել, որ եթէ չկայ այդ զօրութիւնը, արտաքին ոյժերը յաղթահարելով ազգութիւնը,

նր, լուծում են նրա կազմաւածքը: Եւ ինչպէս բնական էակները կորուսանելով իւրեանց ոյժը, յաղթահարելով արտաքին ոյժերից մեռանում են, և ինչպէս, նրանց կազմաւածքի մէջ մտած նիւթերը, լուծւելով կազմաւածքից, շարունակում են իւրեանց կեանքը, կազմելով մի այլ էակ, կամ, իբրև նիւթ, պիտոյանալով այլ կազմաւածքի, այնպէս ևս ազգութիւնը մեռնելուց յետոյ, նրան բաղկացնող անհատները ընդունում են այլ բարոյական կերպարանք, կազմելով մի առանձին ազգութիւն, ա՛յլ պայմանների տակ. կամ, մտանում են ուրիշ ազգութեանց կազմաւածքի մէջ:

Բնութիւնը կորուստ չունի:

Մարդիկ իւրեանց գոյութիւնը և ներկայութիւնը ապացուցանում են իւրեանց ազգութեամբ: Կենդանի եմ ես և խօսում եմ առջև կանգնած մարդու հետ, բայց, նա չէ ընդունում, թէ ես կենդանի եմ: Նա ասում է ինձ, որովհետև քո ազգութիւնը մեռած է, ուստի և դու կենդանի չես որպէս Հայ:

— Եղբայր, ի՞նչպէս կենդանի չեմ, ես խօսում եմ քո հետ, մեռելները արդէն վաղուց թողել են խօսելու սովորութիւնը:

«Ինձ ի՛նչ փոյթ, դու կենդանի չես» — կրկնում է նա ամենայն սառնութեամբ:

Եւ ոչ միայն այսչափ. ուրանալով իմ կենդանութիւնը, ժխտում է ինձ իմ կենդանութիւնը պահելու համար պէտք եղած կարիքը, կամ, նրանց լցնելու հնարները:

— Եւ այս տե՞ղ հանեցիր տնտեսական խընդիրը...

«Եւ չկամենալով բռնաբարութեան կերպա-

րանք տալ այս ժխտողութեան, տակաւին իրաւունքի անուենով խօսում է իմ Հետ. — Ի՞նչ էս արել, որ ես համարեալիւն ցոյց Գոթ Կեղ, որ ես խոսեալանիմ Կեղ կենդանի :

Այս կոպիտ հեղինութիւն է և ստրկութեան շղթայի ամենածանր օղի մինը : Հերիք չէ նրան իմ կենդանութիւնը, նա չկամի նրան ընդունել, որպէս իրողութիւն. նա ակամայ պիտի յօժարի ընդունել, այն ժամանակ, երբ ցոյց տամ իմ իրաւունքը : Ա՛յս ևս Հերիք չէ. նա իմ կենդանութիւնը պիտի խոստովանի միայն այն ժամանակ, երբ ստուգէ, թէ զօրութիւն ունիմ իմ իրաւունքը պաշտպանելու :

Այս տողերը գրելու միջոցին, թէյմսը հըրատարակեց Լեհաստանի ընդդէմ, մեր տւած ծանօթութիւնը, գրեթէ բառ առ բառ : Եւ մի՞թէ շատ ժամանակ անցաւ այն օրից, երբ ընդհանրական և մասնաւորապէս աւստրիական բռնակալութեան ջերմեռանդ թուրմը հրատարակեց, թէ «իտալիան և՛ ռուսիան անոն է»*) :

*) Իսկ Աւստրիան, այդ պօլիտիկական ուրաւականը, դիցաբանական առասպել է, ասում ենք մենք. ագռաւ սիրամարգի փետուրներով զարդարած : Այն հողերի վերայ, ուր սեղանապիղծ ձեռքով տնկւած է աւստրիական անպարծանք դրօշը, 1857, հոկտ. 1-ի տեղեկութեանց նայելով, բնակչութիւն է 35,019,056 հոգի ժողովուրդ : Սրանցից (զօրքով հանդերձ) Աւստրիացի է միմիայն 7,889,925 հոգին, մնացածը օտար ազգեր, որ գոն, Սլաւոն, 14,927,925 հոգի, Ռուսներ 5,633,089 հոգի, Մաճառ, 4,947,134 հոգի, Հայ, 13,250 հոգի, իսկ

Պարզամիտ մարդիկ կարող են հաւատալ այս կամ այն կառավարութեան . . . կարող են հաւատալ, որ եթէ յիրաւի՛, Լեհաստանը արժանի լինէր անգլիական համակրութեան(*) և ահա լըրացած էր ամենայն բան :

մնացորդը այլ և այլք : Աւել է թէ մօտաւորապէս 8 միլիոն հոգին բռնացել է 27 միլիոն օտար ժողովրդի վերայ և ապրում է ծծելով նրանց արիւնը, նրանց կենսական ոյժը և զօրութիւնը : Ակամայ կը յիշես հռչակաւոր Ֆօլթի խօսքերը l'Autriche c'est la damnation eternelle!

Հերիք չէ այսքանը, դեռ ևս «իտալիան լուր աշխարհագրական անուն է» : Հրամերես. Իտալական ժողովուրդը, վենետիկ, մինչև անգամ և Հռոմը, այն ստրկութեան յաւիտենակա՛ն օրօրոցը ճի՛շտ քեզ պէս են մտածում խօսք չկայ : Սուրբ Մածծինիի և սուրբ Գառիբալդիի բարեխօսութիւնը անպակաս լինին Հաբսբուրգեան տունի գլխից

Արդեօք քաւարանի մէջ, Մետերնիկը կըրկնում է կոմս Գալուսին, իւր խօսքը : Պիոս ին ներորդին կը մնայ պատասխանել :

(*) Ի՛նչ ասել է համակրութիւն. ուրիշը իրաւունք ունի երկրագունդի վերայ ապրելու Լեհացին չունի՞ : Սա իբրև ողորմութիւն պիտի ստանայ ուրիշից այն, ինչ որ ուրիշը ունի, նոյն իրաւունքներով, որ ամեն մարդու պիտի տրւի, որ ամեն մարդու հաւասար է : Եւ միայն անգլիական մա՛րդը պիտի ապրի, ուրիշը թող մեռնի՞, Բաց ի սրանից, ի՛նչ պիտի արած լինէր Լեհաստանը, որ արժանի լինէր, հարցա-

— Այսօր չէ, վաղը — ասում ենք մենք: To-morrow morning! ասում է հեգնող Անգլիացին: Քանի որ իմ կեանքի խոստովանելը կապ-
 ւած չէ նրա շահի հետ, նա խոստովանելու չէ: Ուր թողունք, որ մի ազգութիւն, գիտութեամբ սպանում է միւս ազգութիւնը, իւր սեպհական շահի համար. ճնշւածի իրաւունքը խոստովա-
 նե՛լն է մնացած:

Անհնարին տհաճութեամբ լսեցինք մենք, անգլիական պարլամենտի մէջ 10րտ 20հն Ռըս-
 սելի խոսքերը, ամերիկեան խնդրի վերաբերու-
 թեամբ:

«Չէ կարելի բուռն զօրութեամբ վճրացնել ստրկութիւնը Հարաւային Ամերիկայի միջից: (Այսինքն Հիւսիսայնոց պահանջողութիւնը և

նում ենք մենք, Անգլիոյ համակրութեան: 12 միլիոն ժողովրդի կենդանութիւնը բաւական ի-
 րաւունք և բաւական արժանաւորութիւն չէ՞: 12 միլիոն ժողովրդի երեսնամեայ բողոքը և արիւնաթաթաւ մարտիրոսութիւնը բաւական է՞, մի սիրտ ունեցող ականատեսի համակրու-
 թիւնը շարժելու: Բայց սիրտ... ո՛ւր ենք մենք: Անգլիոյ մէջ միայն գնայուն մեքենաներ կան, և թերևս ուրիշ ամենայն բան գտնւի այնտեղ, և մարդկային սիրտ... շատ հազիւ: Վկա՛յ ենք կանչում լօրդ Բայրընի սուերը: Երբ Ֆրիդրիկոս Մեծի առաջարկութեամբ Լեհաստանը յօ-
 շոտւեցաւ Ռուսիոյ, Պրուսիոյ և Աւստրիոյ մէջ, Անգլիան լուռ մնաց և ընդունեց: Այսօր, իւր հին լուութեան մեղքը ծածկելու համար, իրա-
 ւունք և արժանաւորութիւն հարցնում է նա, արիւնլուսայ նահատակից:

պատերազմը, զուր է.) Հարաւայնոց ատելու-
 թիւնը դէպի Հիւսիսայինքը, աննկարագրելի խոր է և սաստիկ: Խաղաղութիւնը չի պիտոյ տիրէ այնտեղ, մինչև այդ երկու կողմերը չը կազմեն առանձին-առանձին տէրութիւնք: Եւ այն խառնակ մեյն, Անգլիան կը հռոճի եր դորաւոր նո-
 րակէն, որի մէջ է նրա հալած շահը:

Այսպէս է եղել ազգութեանց ընթացքը մարդկութեան ասպարիզում: Մինչև այժմ, այն ազգութիւնը, որ ոյժ ունի, որ ինքը պարելով չկամի ուրիշի կեանքի վերայ մտածել, ա-
 ւելի կամ պակաս չէ մասնաւոր սնանապաշ-
 տից, որի փոյթը չէ, եթէ նրա ընկերը, նրա աչ-
 քի առջև ընկնում է սովամահ:

Բայց, մասնաւոր ուշադրութեան արժանին ի՛նչ է. նոյն ինքը այդ հզօր ազգութիւնը օ-
 գուտ չունի իւր աճունին վերագրւած շահերից: Այդ ազգութիւնը, իւր կառավարութեան հետ, գրեթէ նոյն յարաբերութեան մէջ է, ինչ յարաբերութեան մէջ են դէպի ինքը չխոստովան-
 ւած ազգութիւնքը: Տարբերութիւնը էական խնդրի մէջ չէ. նրա ազատութիւնը անւանա-
 կան է, նա չէ կերակրուում նիւթով, նրա կա-
 ռավարութիւնը ներկում է նրա աչքը, իւր դրօ-
 շի փառքով, իւր գէնքի յաղթութեամբ. իւր սահմանների օր ըստ օրէ լայնութեամբ: Դնենք թէ այն մարդիկը որոնց ազգութիւնը խոստովանւած չէ. պաշտօնական կերպով չեն համար-
 ւում կենդանի. այո՛, նրանք ստրուկ են ու-
 րիշներին, բայց, և այն մարդիկը, որոնց ազ-
 գութիւնը դողացնում է երկրագունդը, բեւե-
 ուից մինչև բեւեռ, ստրուկ են իւրեանց կառա-
 վարութեան ձեռքում: Կառավարութիւնքը նը-

կատեւով, որ այդ ազգերը, ինքեանք իւրեանց մէջ ազատ չեն տակաւին, նկատեւով որ սնտոի նախապաշարմունքներ, փտած սկզբունքներ և առհասարակ գլխիվայր հասկացողութիւնք պաշտելի են նրանց, խորամանկութեամբ օգուտ են քաղում նրանց թուլութիւնից, տիրում են նրանց վերայ և նրանց անուշով ներգործում են, մի միայն իւրեանց անձնապահութեան համար:

Մարդը դեռ ևս թովւած է, կառավարութեանց բժժանքը դեռ ևս ազդում են նրա վերայ: Նա տանում է աղքատութեան ծանր լուծը, առանց հաշիւ տալու ինքը ինքեան թէ ի՛նչ բանի համար են այն զրկանքը, որ յանձն է առնում: Ի՛նչ կ'առնու իւր դրօշի փառքից, եթէ այդ փառքը չէ բերում նրան երջանկութիւն և հանգիստ կեանք, եթէ ամեն մինը այդ եղջերւաքաղ փառքերից գնւում են սոսկալի հարկերի և սարսափելի պարտքերի ծանրութեամբ, որոնց էականապէս ժողովուրդն է ենթակայ: Կառավարութեան դրամ է հարկաւոր, իւր որ և իցէ խորհուրդը յառաջ քշելու համար, ներքին պարտք է հրատարակում նա, և ամեն մարդ առանց երկբայութեան, իբրև մի ապահով տեղ գնում է իւր ունեցածը: Եւ ինչի՞ պիտի վախենայ, քանի որ կառավարութիւնը երաշխաւոր է:

— Կառավարութիւնը... ո՛վ է կառավարութիւնը, ազգը չէ՞:

«Չէ՛, կառավարութիւնը կառավարութիւն է, ազգը ա՛յլ, կառավարութիւնը ա՛յլ»:

— Ուրեմն կառավարութիւն ասելով, պիտի իմանալ որ և է աշխարհի պաշտօնեայ՞քը, կամ նրանց զահերէ՞ցը:

«Ճի՛շդ»:

— Ինչո՞վ ապահովում է կառավարութիւնը այն պարտքը որ առնում է ժողովրդից:

«Ի՛նչպէս թէ ինչով, տէրութեան հողով, գանձով և այլն և այլն»:

— Տէրութեան հողը, գանձը և այլն և այլն կառավարութեան սեպհականութի՞ւնն է որ գրաւ է դնում:

«Տարակոյս չկայ, դրանք պատկանելիք են կառավարութեան»:

— Ապա ազգը՞:

«Ազգը ինչ վերաբերութիւն ունի տէրութեան հողին կամ գանձին հետ: Ազգը ազգ է, ինչպէս կառավարութիւնը կառավարութիւն է: Ազգը ա՛յլ, կառավարութիւնը ա՛յլ»:

— Դրօշի փառքը՞....

«Ազգի՛նն է»:

— Յնժա՛, ազգ: Բերանդ հովին բացած, նայի՛ր այն կտոր լաթին որ կախւած է ձողի վրայ:

«Բայց, նա, ինձ կերակուր չէ տալիս» — ասում է ազգը:

— Եւ ի՛նչ հարկաւոր է քեզ կերակուր, երբ դու ապրում ես այդ փառքով:

Չնայելով այս բոլորի վրայ, այդ ազգութիւնքը հետևում են տակաւին իւրեանց կառավարութեան, ուրիշ աշխարհների տիրելու, ուրիշ ազգութիւնք սպանելու և իւրեանց դրօշի փառքին, նրանց ևս մասնակից առնելու:

Մինչև այժմ բռնակալ աշխարհակալութիւնքը մի սուտ փաստ ունէին իւրեանց ձեռքում, որ այսօր չէ կարող արդարանալ և մարդկային բանականութեան դիմանալ: Ի՛նչ էր այդ

փաստը: Այն, թէ հզօր կառավարութիւնքը տիրում են զանազան աշխարհների, զանազան ազգերի, մի միայն վայրենութիւնը քաղաքակրթելու համար: Անձնական շահը չէ՛, ո՛չ, քա՛ւ լիցի, մարդկութեան սէրն է, որ ստիպում է նրանց ստրկացնել զանազան ազգեր, որովհետեւ այդ ազգերը յետ են մնում և չեն քաղաքակրթւում:

— Այսպէ՞ս, ուրեմն. Անգլիան, Հնդկաստանի մէջ մի որոշեալ կշիռ արհիոնի գնում է ժողովրդից 25 լիբրէ ստերլինգի, իսկ ինքը նոյն կշիռը վաճառում է 250 լիբրէի, և կառավարութիւնից աւելի ո՛չ ո՛ք իրաւունք ունի շինականից գնելու, նոյնպէս և շինականը իրաւունք չունի ուրիշի վաճառելու:

«Քաղաքակրթութիւն է տարածում»:

Անգլիան ամիսը երեք շոգենաւ արհիոն բռնութեամբ ներս է տանում Չինաստան, թուճաւորում է մարդկութիւնը և այդ թոյնի փոխարէն ամիսը երեք շոգենաւ արծաթ է ստանում. այս անբարոյականութիւն է:

«Քաղաքակրթութիւն է տարածում»:

— Իրլանդիան, իւր աշխարհագրարան դրութեամբ իւր բնական սահմաններով, իւր կրօնքով, սովորութեամբ և աւանդութեամբ բոլորովին հեռի է Անգլիայից, քանքարաւոր մարդերով աւելի ճո՛խ է, քան թէ ինք Անգլիան, բայց Անգլիան հակառակ նրա կամքին, պահում է նրան իւր ձեռքին մէջ, և թէյմսը շատ ժամանակ չէ որ հրատարակեց, թէ Իրլանդիոյ անկախութեան աշխատողքը իբրև տէրութեան ընդդէմ ապստամբք, կարո՛ղ են դատապարտուիլ գէպի թիարան

«Քաղաքակրթութիւն է տարածում»:

— Պապը, «ի՛ճ Խաչատուրեանը այ՞ աշխարհից չէ՛» ասողին երեսփոխան քարոզելով իւր անձը, հակառակ իւր վարդապետի հրամանին, բռնացել է այ՞ աշխարհի վերաբերեալ հողի վրայ, որ պատկանում է Իտալիային, և երբ խնդիրները սկսում են սաստիկ յուզուիլ, երբ առաջարկութիւնք առաջարկութեանց քամակից հասնում են նրան, թողուլ այ՞ աշխարհի Խաչատուրեանը, նա չէ յօժարում և հիւանդանալով մահի՞ճ է ընկնում

«Քաղաքակրթութիւն է տարածում»:

— Աւստրիան, իւր Տ միլիոն ձկնարիւն Աւրստրիացիներով բռնացել է Լօմբարդիոյ վրայ և չի կամենում վենետիկը ձեռքից թողուլ:

«Քաղաքակրթութիւն է տարածում»:

— Մորթել է Հոլանդարիան, խեղդել է Գալիցիան, Դալմատիան, Բոհեմիան և այլ գաւառներ ու ազգեր:

— «Քաղաքակրթութիւն է տարածում»:

— Պրուսիան, Լեհաստանի մահլան առաջին պատճառը, յափշտակել է նրա Պօզնայնի դքսութիւնը և խեղդում է

«Քաղաքակրթութիւն է տարածում»:

— Ռուսական բանտերը լցւեցան Լեհացիներով. կարծեմ շուտով Սիբիրի մէջ աւելի շատ պիտի լինի Լեհացի, քան թէ Լեհաստան. վարչաւի հրապարակների վրայ արիւնը մինչև ծունկն է հասնում, գինւորները անգէն մարդոց վրայ յարձակելով սպանում են առանց խնայելու հասակի և սեռի, Ռուսիոյ գերմանաթաթար կառավարութիւնը իբրև մի վամպիր ծծում է Լեհաստանի արիւնը, փակում է նրա եկեղեցի-

քը, դպրոցները, և հրամայում է քար կամ փայտ դառնալ:

«Քաղաքակրթութիւն է տարածում»:

— Փոքր Ռուսիան, (15 միլիոն ժողովուրդ) իւր լեզուով, իւր պատմական աւանդութեամբ, իւր կեանքի կերպերով և սովորութեամբ, ոչ ինչ յարաբերութիւն չունի Մեծ Ռուսիային, և ոչ միայն այսչափ, այլ և սաստիկ թշնամի է նրան, խնդրում է իւր անկախութիւնը, բայց Ռուսիոյ կառավարութիւնը շղթաներով կապում է նրան և ազատութեան մարգարէներին պատասխանում է բանտով, կնուտով և աքոորով:

«Քաղաքակրթութիւն է տարածում»:

— Յափշտակել է և ստրկացրել է Ֆինլանդիան:

«Քաղաքակրթութիւն է տարածում»:

— Սաբանօք ճանկել է վրաստանը և Հայաստանի մի մասը և ճնշում է նրանց իւր ծանրութեան տակ:

«Քաղաքակրթութիւն է տարածում»:

— Եւրոպական տէրութիւնքը անդադար օգնութիւն են տալիս Թիւրքիային որ նա դիմանայ և չկործանւի:

«Որպէս զի, Թիւրքիոյ ստրկացած Հայ, Սլաւոն և Յոյն ժողովուրդը քաղաքակրթիչ հոգաբարձից չզրկւի»:

— Կուրանով, Աւետարանի որդիք քաղաքակրթել:

«Սյդ քաղաքակրթութիւնը աւելի փրկարար է: Աւետարանից թերևս ազատութիւն կարող է ծագել, իսկ Կուրանից և այդ երկիւղը չըկայ»:

Սոքա ամենքը, իբրև բռնի վարժապետ, քա-

ղաքակրթութիւն են տարածում, և ոչ ոք չէ հարցնում աչակերտի կամքը, կամի՞ արդեօք ուսանիլ թէ ոչ: Սակայն չի պիտոյ աչքից հեռացնել նրանց քաղաքակրթութեան տարբերութիւնը մեր հասկացած քաղաքակրթութիւնից: Բանտերը են նրանց դպրոցները, պօլիցականք և ժանդարմը դաստիարակները, շղթան հրահանգիչ գիրքը, աքսորը բարոյականութիւնը վերին աստիճանի կազդուրելու մարդարան, կախաղանը և գլխապարտութեան խայտառակ սիւնը «Ղոտն ճշմարէր որ րանի է կեան» յաւիտենական»....

Կեցցէ՛ կատուն, որ իւր փորի համար մուկ է բռնում:

Երբ ինքեանք կառավարութիւնքը տեսան այս, երբ նշմարեցին իւրեանց փաստի ոչնչութիւնը Եւրոպական հասարակչութեան հանեցին մէջտեղ: Եւ այսօր ամեն կառավարութիւն իւր կշռով կշռում է այս հաւասարութիւնը: Մարդկութիւնը, այո՛, աւելի չէ քան թէ ոչխարը, որ սպանդապետի դանակին և կշիռքին է յանձնըւած: Մինչև այսօր, ամեն յարձակում և ամեն պաշտպանութիւն այս հասարակչութեան նով յառաջացաւ:

— Բայց կշռի արդարութեան քննի՞չը:

«Քեց ի՞նչ փոյթ»:

Եւ այն օրից երբ կառավարութիւնքը իւրեանց ընթացքը արդարացնելու և իւրեանց բողոնած ճանապարհը ամբոխի աչքից ծածկելու խորամանկութեամբ, գրեցին իւրեանց դրօշակի վրայ հասարակչութեան և իրասանիք, այն բոլորից, ասում ենք, ազգութիւնը դարձաւ կառավարութեանց հալածող ուրւականը: Եթէ հաւասարա-

կշիռ և իրաւունք կայ տէրութեանց մէջ, ուրեմն նոյն կշիռը և նոյն իրաւունքը պիտի լինի տէրութեանց և նրանց ստրկացած ազգերի մէջ: Դու կամենում ես քո հաւասարակշիռը պահել, և այն, իրաւունքի անունով, բայց ինձ, որ բռնաւին օտար եմ քեզ եւ ամենեւին վերաբերութիւն չունիմ քո հետ, ի՛նչ պատճառով հակառակ իմ կամքին, առնում ես և բռնութեամբ դնում ես քո կշռի թաթի մէջ: Ուրիշ տէրութեանց հետ խօսում ես իրաւունքի անունով, իսկ իմ վերաբերութեամբ ինչի՞ համար ոտքի տակ ես կոխում նրան և անիրաւում ես չարաչար:

Այսօր, ճնշւած մարդերի համար, ազգութիւնն է նրանց միակ դրօշը, որ կարող է բացել բռնակալութեան ընդդէմ: Ազգութեանն է միակ հնարը դէմ դնելու նաև լուսաւոր բռնակալութեան, եթէ միայն բռնակալութեանը կարող է լուսաւորել, կամ լուսաւորելուց յետոյ յարարել իբրև բռնակալութեան, — կրկնում ենք, մեր դարու երևելի մտածողներից մինի հետ:

Գանք այժմ պարզելու մեր ունեցած հայեացքը ազգութեան վրայ, որպէս զի հակառակախօս չերեւինք մեր նեղսիրտի առջև:

Վնասակար և անիրաւ է այնպիսի ազգութիւնը որ ամեն ուրիշ զոհում է իւր կեանքին. ազգութիւնն չէ այն, այլ կոյր Փանատիկոսութիւն, որ հիմք չունի և կիրքի բնաւորութեամբ երեւում է մարդու մէջ: Այդպիսի ազգութիւնը որչափ եւս կատաղի լինի, որչափ եւս մոլեգնի, ի վերայ այսր ամենայնի ժամանակը կր մաշէ նրան, որովհետեւ մի կիրք կարող է տեղի տալ միւս կիրքերի, որ հանգամանքը կարող

են ծնուցանել: Ազգութիւնը հարկաւոր եւ օգտակար, այն ժամանակ, երբ նա չէ բորբոքում իբրեւ մի բոլորակաւ կայծ, իբրեւ պատահական եւ հանգամանքներից կախւած մի բան, այլ, երբ, որպէս հետեւանք հասուն գիտակցութեան, հանդէս է գալիս այրական հաստատամտութեամբ, պահանջում է ուրիշների հաւասար իրաւունք և ոչինչ չէ խնդրում աւելի: Ազգութիւնը օգտակար է և հարկաւոր, այն ժամանակ, երբ զգալի է, ոչ որպէս մի բարոյական շռայլութիւն, այլ որպէս կարիք, որպէս իրաւունք, որպէս բողոք, երկրագունդի վրայ մի կտոր հող ձեռք բերելու համար, որպէս զի այդ ազգութեան անդամքը ապահովեն իւրեանց ապրուստը, որպէս զի գերի և ստրուկ չլինին ուրիշին: Ազգութիւնը անմեղադրելի է և ամենայն ընդունելութեան արժանի, եթէ նա, խոստովանի միւս ուրիշ ազգութիւնքը անխտիր, նոյնպիսի իրաւանց ժառանգ որպիսի ստացել է ինքը: Ազգութիւնը անմեղադրելի է և տօնելի իսկ, եթէ նա ընդհանուր մարդկութեան գործը թեթեւցնել աչխատի, իւր հաւաքական անձնաւորութեան անունով իրաւունք ձեռք բերելով, և նոյն իրաւունքը և արտօնութիւնքը, հաւասարապէս, իւր անդամներին բաշխելով:

Եթէ ազգութեան ներքին և ֆական խորհուրդը չէ տնտեսական խնդիրը, անհիմն է այդ ազգութիւնը, սո՛ւտ է այդ ազգութիւնը և նա կը կործանուի: Տնտեսական խնդիրն է այն զօրութիւնը, որ մի փոքր յառաջ խոստացանք անւանել, նա է այն միակ և հաստատ ոյժը, որ ազգի անձնաւորութեան մէջ ներգործելով,

հաւասարակշիռ է պահում արտաքին ուժերի ընդդէմ, որով և ազգութիւնը ապրում է: Դու հազար տարի քարոզէ ինձ քո վերացական ազգութիւնը, ես միշտ չպիտի հասկնամ: Դու ինձ ասում ես, պահենք մեր ազգութիւնը, մեր լեզուն, մեր աւանդութիւնքը և այլն և այլն, շատ բարի, պատասխանում եմ ես, բայց, ասա՛ խնդրեմ, ի՛նչ բանի համար պահենք, ի՛նչ է պահելու օգուտը և ի՛նչ է կորուսանելու վընասը: Վերացական ազգութիւնը, որ մինչև այժմ փոքր ի շատէ քարոզել է Հայոց ազգի մէջ, չի կարող պատասխանել սրան: Եւ այս է պատճառը որ ծանր է այդ առաքելութեան ընթացքը: Չոր, չոր, ազգութիւն քարոզել առանց մեկնելու քո քարոզութեան պատճառները, ոչ այլ ինչ է, եթէ ոչ Փանատիկոսութիւն, և այդ տեսակ քարոզութիւնը երբէք չէ կարող արմատ արձակել մի ժողովրդի մէջ, որ, վերացականից յառաջ, ամենայն բոլոր դարկում է իրական կարիքների հետ: Իսկ, երբ դու ասես ինձ, պահի՛ր քո ազգութիւնը, հաստատ կացիր քո սիրու մէջ դէպ ի քո աշխարհը, սիրի՛ր քո եղբարքը, պահի՛ր քո լեզուն, որ է քո ազգութեան դրօշը և այդ բոլորը քեզ իրաւունք կը տան մի կտոր հող ձեռք բերելու, որով կ'աղատուիս ստրկութիւնից և աղքատութիւնից, այն ժամանակ, ես կը հասկնամ քո խօսքը, և ընդհանուր շահի մէջ և իմ սեպհական շահը տեսնելով կ'աշխատիմ ամենայն զօրութեամբ: Այն ժամանակ ես կը հետևիմ քո ձայնին, որովհետև նա աւետարանում է ինձ փրկութիւն, ազգութեան անունով:

Եւ քաղաքական նաւարկութիւնից ապրած

մարդիկ, եթէ հասկանում են ազգութիւնը մի ամբողջութիւն, որ երբեմն կար, և որի դարաւոր փոշիով ծածկւած յիշատակարանների վրայ բարախում է նրանց կուրծքը, եթէ նրանց, ազգութեան հասկացողութիւնը, իւր սկիզբը առնումէ անցածի խայտաճամուկ աւանդութիւններից և չի հիմնում, ուղղակի ներկայ սերունդի և ներկայ պայմանների վրայ, եթէ նրանք մտածում են երևցնել իւրեանց ազգութիւնը այն շրջանակի մէջ, ինչպէս էր առաջ, այն ժամանակ, այդ ազգութիւնը կը մնայ միշտ, իբրև մի ամուր գաղափար, որ յետ չի մնում բարոյական Չինաստանից:

Ժամանակը միանգամ է անցնում, և նա, որ ընթացակից չէ նրան, յետ է մնում: Մենք կարող ենք բռնել ժամանակի այն ակնթարթը միայն, որ անցնում է մեր առջևից. իսկ երբ նա անցել է, անօգուտ է այլ ևս: Նա իբրև օրինակ, միայն, իբրև խրատ, կարող է երևել մեզ հեռուից. ներկայ կեանքը նրա հետ վերաբերութիւն չունի, ըստ որում անցածը չի ապրում այլ ևս:

Այսօր, եթէ մի ժողովուրդ ստրուկ է, եթէ նա հող չունի և եթէ յաջողի նրան հող ձեռք բերել, իրաւունքը և ժամանակը պահանջում են տնօրինել այնպէս, ինչպէս ցոյց է տալիս ներկայ հարկը, ինչպէս ցոյց է տալիս բանականութիւնը. և ոչ այնպէս, ինչպէս հին օրերից մնացած, աւանդական կառավարութիւնքը տնօրինել են մինչև այժմ, այսինքն, տէրութեան կամ ազնւականութեան սեպհականելով հողը և հասարակ ժողովուրդը զրկելով ի-

րաւունքից : Վերջին դիպւածում, ազգութիւնը ազատութիւն չէ ժողովրդին . նա փոխում է միայն նրա լուծը, և մենք դրականապէս թշնամի՛ ենք այդպիսի ազգութեան, ինչպէս թշնամի ենք բռնակալութեան, ո՛ւր կամ ինչ կերպով որ յայտնւի : Գիտենք, կան մարդիկ, և մեր իսկ սիրելի բարեկամներն մէջ, որ պիտի ասեն, թո՛ղ միանգամ ձեռք բերւի հողը, թո՛ղ ինչպէս կամի լինի սկզբնական կառավարութիւնը և տնօրէնութիւնը, յետոյ, կ'ուղղւի կը նորոգւի և այլն և այլն :

Չէ՛, այս, տղայութիւն է . այս տեսակ ուղղադործութիւնքը և վերանորոգութիւնքը հեշտ բաներ չեն, և համարձակ կարելի է ասել, նոր ի նորոյ ձեռք բերելուց աւելի դժւար : Ուրիշներն փորձերից, որ փորձողներին արժում են արեան ծովեր և որ բոլորովին ձրի ներկայանում են մեզ, իբրև օրինակ, հարկ է, որ խըրատւինք և չերթանք այն ծուռ ճանապարհը, որից և դնացողը կամի յետ դառնալ, բայց ոտքը սայթաքում է : Եւ ի՛նչ խելք է, կատարելութիւնը տեսնելուց յետոյ, անկատարին հետեւիլ, մի միայն այն պատճառով, որ անկատարը ժամանակով յառաջ է, քան թէ կատարելը : Այս օրէնքը չունի ոչինչ ամբողջիւն, չունի հետեւողականութիւն : Այս օրէնքով, մի մարդ որ կամէր պարագիւր որ և իցէ արեւստի, չպիտի ուղղակի գործէ այն, ուր հասած էր արեւստի ներկայ վիճակը, այլ, ինչ որ դարբնով յառաջ : Նոր գիր ուսանող մարդը թո՛ղ չը համարձակի ուրեմն թղթի վրայ գրել . այլ թո՛ղ գրէ ծառի տերևի կամ կեղևի վրայ, յետոյ, անասնոց մորթի վրայ, յետոյ չգիտեմ

ինչի վերայ, որ կարգը հասնի թղթին, ըստ որում նոր է սկսանում և ի հարկէ, որ յառաջ, անկատարը ձեռք բերէ :

Եթէ, մինչև այժմ մեր խօսածներից, հասկացաւ մեր նեղսիրտ ընթերցողը, ազգութեան վրայ մեր ունեցած գաղափարը, եթէ համոզւեցաւ, կամ, գոհացաւ, մենք մեր շնորհակալութիւնը կանխիկ յատնում ենք նրան : Իսկ ընդհակառակը, եթէ աւելի նեղսրտեցաւ, չենք վհատում : Մենք, ուրիշ անգամ, դարձեալ կը խօսինք նրա հետ, այս խնդիրների վրայ, և մեր ամեն ճիշդ կը թափենք աւելի մշակել և աւելի կերպարանագործել մեր գաղափարը :

Այժմ դառնում ենք դէպի այն կէտը, որտեղից խոտորեցանք և դէպի այնտեղ հրաւիրում ենք դարձեալ մեր ընթերցողների ուշադրութիւնը :

Որչափ շօշափելի և հասկնալի է տնտեսական խնդրի ճշմարտութիւնը, որ մենք, այս նեղ սահմանի մէջ, աշխատեցանք կերպարանագործել, ի վերայ այսր ամենայնի, անյուսալի չէ, թէ գտնւին մարդիկ, որ ասեն մեր համար . «Այս ի՛նչ Մովսէս է, որ ճանապարհ է ցոյց տալիս ազգին դէպի մի երկիր» :

— Մովսէս չենք, և Սովսիսի խոսամունքը չենք խոստանում Հայոց Ազգին : Մովսէսը, Իւրայելեան ազգին խոստանում էր մի երկիր, որ պիտի բղխէր կաթն և մեղր, մեր քարոզութիւնը աւելի պարկեշտ է : Մենք ցոյց ենք տալիս մի երկիր, որ բուսուցանում է բամբակ, մետաքս, շաքար, ցորեան, բրինձ, սուսամ, տօրոն և այլ ընդեղէնք : Մենք ցոյց ենք տալիս մի երկիր, ում ամեն ընտանի դրաստ աճում է, ապ-

րում է և բազմանում է, հետևաբար նրանց բեր-
քը ևս, այսինքն, բուրդը, մորթը, միսը, կաթը
և այլն, որ նոյնպէս արժանի են ուշադրութեան
և մշակութեան: Ահնջ ցոյց ենք տալիս մի եր-
կիր, որի հանքերը մեծապէս կարօտ են մշա-
կութեան. և որոնք, մինչև այսօր, մնացած են
մարդկութեան համար, «որպէս աղբիւր փակե-
ալ և դուռն կնքեալ, ընդ որ ոչ ոք էանց»:
Յողգողդը Իսրայէլը, մտքով Եգիպտոս դարձող
Իսրայէլը, միայն մի կոյր հաւատով կարող էր
հետեւիլ Մովսիսին, դէպի կաթն և մեղր բըղ-
խող երկիրը, ըստ որում անծանօթ էր նրան ա-
ւետեաց աշխարհը, մենք ընթերցողներից և առ
հասարակ Հայոց Ազգից չենք պահանջում և
այս կոյր հաւատը, դէպի մեր քարոզութիւնը:
Երկիրը և բերքերը քաջ ծանօթ են նրանց, և
անծանօթների համար, պատրաստ են իւրեանց
գոյութեամբ վկայելու մեր ասածին:

Մեր քարոզութեան նպատակը և մեր աշ-
խատութեան խորհուրդը այն է միայն, որ
ազգը մտածէ իւր ապագան և ազատէ իւր ան-
ձը սարսափելի նեղութիւնից և աղքատութիւ-
նից, որ եթէ ոչ այսօր, վաղը, պիտի թագաւո-
րէ բոլոր Թիւրքիոյ մէջ, չնայելով այն նոր
պարտքին, որ առնում է նա Անգլիայից: Այդ
լիբերէները, շատ կարճ ժամանակի մէջ կը ցըն-
դին, մէջտեղում կը մնայ պարտքի մուրհակը
և նրանից յետոյ գալու հոգեվարի ժամանակ,
օսմանեան լիբերէն կը բարձրանայ մինչև 1000
ըրուշ:

Մեր բարձրացուցած խնդիրը մի վերացա-
կան և անընական Փիլիսոփայութիւն չէ, որ
ազգը նեղութեան հանդիպի հասկնալու համար:

Աշխարհիս երեսին մարդ չկայ, որ իւր ապրուս-
տի համար կարօտ չլինի նիւթի և չհասկընայ
հացի ինդիքը. և մենք խօսեցանք միայն այն խնդ-
րի վրայ, քանզի, նրանով միայն կարող է պահ-
պանել մարդը իւր նիւթական գոյութիւնը:

Բայց այն փոքր ի շատէ կարողութեան տէր
մարդը, որ ունի արդէն բաւական ապրուստ, որ
կազմել է իւրեան մի ճանապարհ, որով ապրել
է և կ'ապրի դեռ ևս, այդպիսի մարդը, բնակա-
նապէս և ծանր նստած իւր տեղում, կէս մի
թթեցնում է դէմքը, տհաճութիւն գգալով
մեր խօսքերի մռայլոտ կերպարանքից, կէս մի
այլապէս է մտածում, քան թէ մտածում ենք
մենք, քան թէ աշխատեցանք մենք նրա առջև
կերպարանել մեր միտքը:

Ինչ է արդեօք նրա մտածութիւնը: Աւե-
լորդ հարցմունք է այս: Նա մտածում է, «թէ
ես, վաճառականութեամբ, սեղանաւորութեամբ
միջնորդութեամբ կամ մի այլ ճանապարհով,
վաստկեցայ այսչափ դուժար. մեռնելուց յե-
տոյ, թողնում եմ իմ ընտանիքին նոյնը, այլ և մի
քանի տուն եւայլն եւայլն, ուրեմն, ինչպէս իմ
կեանքը ապահով էր, նոյնպէս, եւ իմ ժառանգ-
ները ապահովւած են»: Նրա մտածութիւնը ա-
լի չէ տարածում, քան թէ իր անմիջական դա-
ւակները: Մեր, այդ փոքր ի շատէ կարողու-
թեան տէր մարդուն ասում ենք. — շա՛տ լաւ,
դու ունիս բաւական գումար, ունիս տուներ եւ
այլն եւ նրանով կարծում ես թէ քո ժառանգ-
ները ապահով են, իսկ մենք ասում ենք, որ
այդ կարծեցեալ ապահովութիւնը անհիմն է:

— Ի՛նչպէս, — հարցնում է նա, մեզ:

«Այսօր դու ես քո բոլոր ստացւածքի տէրը,

որպէս նաև ընդ ընտանիքի տէրը և այս պատճառով քո ունեցած կարողութիւնը հերիճ է այսօր մի ընտանիքի. բայց, վաղը, ըն ստացւածքը պիտի բաժնուի ըն զաւակներին մէջ, որոնց իւրաքանչիւրին պիտի հասնի քու ունեցածի կէսը, կամ, Գորգը, կամ, Կեռէ մի քոթը մը, եթէ շատ են ըն զաւակները, Եւ ահա կարողութիւնը, ոյժը, դեռ ևս առաջին ազգում (պորտ) կիսւեցաւ, քառորդւեցաւ, կամ, աւելի փոքր մասերի բաժնւեցաւ. բայց մի մոռնար, որ այն իւրաքանչիւր մասերի տէրերը, առանձին-առանձին պիտի կազմեն ըն նման գերդաստան: Իւր կարգով, նրանց, քեզնից ըստացած բաժինքը պիտի բաժնուին նրանց զաւակներին մէջ, որ ասել է թէ ըն թոռներին, ըն ունեցածից, հազիւ պիտի հասնի, հարիւրին 5-6, տասանորդ: Իսկ թոռներին որդիքը, դարձեալ պիտի մտանեն այն աղքատ ընդհանրութեան մէջ, որից դուրս եկար դու, և ազատ կարծեցիր այնուհետև, նրա վիճակահեցութենից ըն սերունդը, քանի որ ինքնիշխան տէր էիր ըն բոլոր ստացւածքին: Այն մարդը, որ իւր հարըստութեամբ, կամ, որ և իցէ առիթով դուրս կը բարձրանայ հասարակաց ազգի մակերևութից, բոլոր նրա սերունդը չէ կարող մնալ այն բարձրութեան մէջ: Կանուխ թէ ուշ, նա պիտի դառնայ դարձեալ դէպի այն ընկերութիւնը, որից կեանք էր ստացել սերունդի նահապետը: Ծովի ջուրը գոլորշիանալով բարձրանում է մինչև ամպերը, բայց երկար չէ մնում այնտեղ: Մի փոքր սառնութիւն, մի փոքր օդի ճնշողութիւն, և ահա, այն թռուցիկ շոգիները, որ թողել էին ծովի հորիզոնական մակերևոյթը,

իրբև անձրև, կամ իրբև կարկուտ անհնարին բռնութեամբ գահավիժում են, իւրեանց հըպարտ բարձրութիւնից, դարձեալ դէպի ծով: Այս, բնութեան օրէնք է, օրէնք, որ մի մաղի չափ չէ շեղում իւր զուգակշիռը»: Փոքր ի շատէ կարողութեան տէր մարդը, մեր ասածին, պատասխանում է այսպէս:— Ես, իմ հօրից ոչինչ ստացայ, ինքնին, առանց մի բան ունենալու այսչափ վաստկեցայ, մի միայն իմ աշխատութեամբ: Իմ որդիքը, աւելի լաւ վիճակի մէջ, պիտի սկսանեն իւրեանց ասպարէզը, քան թէ ես. քանզի, ես ոչինչ ունէի, իսկ, որդոցս իւրաքանչիւրը պիտի ստանայ իմ կայքի կէսը, կամ, քառորդը, կամ, ի վերջոյ, մի մաս: Թո՛ղ նրանք այն հիմքի վրայ աշխատին, և նրանից իւրաքանչիւրը կը հասնի իմ կարողութեան չափին. այնպէս և նրանց որդիքը և այլն և այլն: «Եթէ հանգամանքները մեզ հնազանդէին, եթէ մենք ամեն բան կամեցածին պէս կարողանայինք շինել, եթէ տեղական հաշիւը միշտ ուղիղ զար կեանքի գործական կողմերի հետ, այն ժամանակ, գուցէ ուղիղ լինէր ըն ասածը, գուցէ ըն որդիքը կամ նրանց սերունդը ապահով լինէին: Բացի սրանից, ուր չկայ դուրս արտադրող գորութիւն, որ իր կարգով դէպի ներս պիտի գրաւէր դուրսի հարստութիւնը, այնտեղ, մի ընկերութեան անդամ, ուրիշ կերպ չէ կարող հարստանալ, եթէ ոչ, նոյն ընկերութեան միւս անդամների հաշուով: Եւ այդ հարըստութիւն չէ, այլ, պատահական հակումն հարստութեան կշռի երբեմն դէպի այս, և երբեմն, դէպի այն կողմը: Այսօր, դու ես հա-

րուստ, վաղը ես կը լինիմ և այն ժամանակ քո
հարստութիւնը անպատճառ պիտի նւագի» :

— Ի՛նչպէս,— բացական չում է նա :

«Աւելի հասկնալի շինելու համար առարկան, բացատրենք քեզ, մեծը և ընդհանուրը փոքրի և մասնաւորի կերպարանքով: Գնենք, թէ քսան հոգի, մենք ապրում ենք մի տեղում և վաճառականութիւն ենք առնում մեր մէջ: Մենք ամենքս գործում ենք, առանձին-առանձին, իւրաքանչիւր մարդ իւր օգտի համար, և մեզնից իւրաքանչիւրը տարբեր կարողութիւն ունի, մինը շատ, միւսը փոքր և այլն, և մեր բոլորի ունեցած կարողութիւնք իրար վրայ բարդելով, դնենք թէ ստանում ենք հազար ոսկու մի դրամագլուխ: Արդ, հարցնում ենք, երբ որ մեր բոլորի գործողութիւնը այն հազար ոսկու վրայ է, երբ մեր ձեռքում չկայ մի ոյժ, որ կարող լինէր, մեր, քսանից դուրս եղած արծաթը ներս բերել, մեր մէջ, մեզնից մէկը կարող է հարստանալ, առանց քսանի շահին դպչելու: Ո՞չ ապաքէն եթէ մեզնից մինը, իւր ունեցածից աւելի, մի հարիւր ստանայ, մեզնից միւս մինը պիտի տուժէ այդ հարիւրը: Եւ այս հարիւր ոսկին երևութական և առժամանակեայ մի վաստակ է, քանզի ընդհանրութիւնը չունի հարստութիւն և շահւոյր, ընդհանուրի հաշուով շահւեցաւ. քանզի, նոր արծաթ չմտաւ ընդհանրութեան մէջ, այլ, մինից անցաւ դէպի միւսը, որ վաղը կ'անցանէ դարձեալ, դէպի մի այլ միւսը» :

«Եթէ այսպէս չլինէր բանի զօրութիւնը, եթէ փոքր ի շատէ կարողութեան տէր մարդու ժառանգները, նոյնպէս, հարստանային

ինչպէս հարստացել էր նրանց հայրը, այն ժամանակ բիւրաւոր պիտի լինէին հարուստների թիւը, փո՛քր է այս, աղքատ ասած բանը, բընաւ չպիտի լինէր աշխարհի վրայ: Բայց, աւա՛ղ, հարստութիւնը ոչ թէ չի յարատեւում ժառանգների մէջ, այլ շատ անգամ նոյն ինքը, երբեմն հարիւր հազարներ իւր ձեռքի մէջ շարժողը, դառն աղքատութեամբ կնքում է իւր կեանքը, ո՛ւր մնացին նրա ժառանգները:

— Բայց, դրա փոխանակ, և աղքատների ժառանգներ հարստանում են:

«Այնպէս, ինչպէս ընկնող հարուստը, և նոյն պայմաններով, ուրեմն և նոյն ճանապարհի վրայ, և նա իւր կարգով պիտի հաւասարի ընդհանուր մակերևութին: Եւ եթէ մի ընկած հարուստի փոխանակ, հարստանայ մի աղքատ, հետեանք յառաջդիմութիւն չէ. քանզի դրականը, բացասականին վրայ, տալիս է դրոյ: Այո՛, բնութեան օրէնքները կատարում են ճիշտ մաթեմատիկական հաշուով, և մարդը, որպէս անդամ բնութեան, և մարդկային կեանքը, որպէս մակերևոյթ բնութեան, ենթակայ են այս օրէնքին և այս հաշւին»:

Կարող են ասել, որ եթէ մարդը և նրա կեանքը դուրի ճիշտ մաթեմատիկական հաշւի տակ, մարդը կը դառնայ մի մեքենայ և նրա կեանքը մի ձանձրանալի ժամանակամիջոց: Այն ժամանակ, նա կը կորուսանէ այն բանտեսեղծական (poétique) գոյնը, առանց որի անպատէ մարդու կեանքը:

Մի՞թէ, մենք, հակառակն ենք կարծում: Բնութեան պարզութեան մէջ միայն, կարող է փայլիլ մարդու բանաստեղծական գոյնը, և

ճիշտ մաթեմատիկական հաշիւը, տանելով մարդկային ընկերութիւնը դէպի համերաշխութիւն, կարող է ազատել նրան մեքենայ դառնալուց: Մարդը ստուգապէս մեքենայ է, այն ժամանակ, երբ հաշիւ չկայ, այսինքն գիտակցութիւն չկայ: Յոյսը ուրիշ բան չէ, եթէ ոչ ստոյգ հաշիւից բղխելու հետեանք: Քանի որ յոյսը չէ հիմնուում ստոյգ հաշիւ վրայ, յո՛յս չէ, այլ անձնախաբէութիւն: Առանց սերմանելու հունձ չկայ:

— Գուցէ՞, լինի, շատ կարելի է որ լինի. ի վերջոյ մեզ սիրելի է լինելը:

«Այս է յոյսը»:

Բայց մարդը, այս բոլորը քննելու ժամանակ, անշուշտ, պիտի լեզի խառնէ իւր կեանքի մէջ, նրան սիրելի չէ այս նա չէ քննում, նա թողնում է և առօրեայ տեսածով ապրում է այսօր, վաղը ինչ կամի թող լինի: Նրան աւելի թեթեւ է թւում վաղւայ գալիքը, քան թէ այսօրւայ քննութիւնը, քանզի ապագան ծածկըւած է վարագուրով, որի վրայ մարդը խոշոր տառերով գրել է յոյ՞: Ապագան ծածկուած է լոկ կարճատես աչքերի համար: Ապագան, ներկայի ժառանգն է, և եթէ մարդը քննէ ներկան, այն ժամանակ, իսկոյն, կը ճեղքւի նրա առջև ապագային կարծեցեալ վարագոյրը:

— Չէ՛, փոքր ի շատէ կարողութեան տէր մարդ, չէ՛, ի՞մ պարոն, համաձայնիր, որ առանց հաշիւ է քո յոյսը, թէ քո որդիքը նոյնպէս պիտի տիրանան այն կարողութեան, որին յաղողել է քեզ հասնել: Դարձուր աչքդ դէպի այն օրերը, երբ դու մանուկ էիր, կենդանացուր քո յիշողութեան առջև այն շրջապատը, որի մէջ

ապրեցար, ի՞նչպէս են, կա՞ն այն հարուստները, որ տեսել էիր: Այնպէս չէ՞, որ այն տասն քսան տունից, որ դու ճանաչում էիր, այսօր, կան և տեսում են միայն երկու տուն: Հաւատա՛, որ այսօրւայ մանուկը, երբ իւր կարգով հասնի քո հասակին, և քո պէս աչքը յետ դարձնէ դէպի իւր անցած ճանապարհը, պիտի տեսանէ նո՛յնպիսի աւերակներ, նո՛յնպիսի նաւարեկութեան մնացորդք, որ այսօր երևում են քեզ: Մինչդեռ ընդհանուրը ապահովուած չէ, մասնաւորի երջանկութիւնը մի վաղանցուկ երա՛զ է: Այսօր երևում է նա, այո՛, բայց վաղը կը ցնդի. քանզի, լոկ տեսարանական խաբէութիւն է կրկնում ենք վերստին:

Մեր, մինչև այս տեղ խօսածից երևում է, որ մենք, մարդուն համար, իբրև առաջին խընդիր առնում ենք տնտեսական խնդիրը, եւ անւանում ենք նրան «մահու և կեանքի խնդիր»: Այս բաւական է, որ մի տեսակ մարդիկ, որոնց բոլոր հասկացողութիւնը հիմնուում է երկուսութեան վրայ—dualisme, պարզմտութեամբ, կամ, հաւատարիմ մնալով իւրեանց երկճղի սկզբունքին մեր քարոզութիւնը անւանեն նիւթականութիւն, կամ, ո՛վ գիտէ, դեռ եւս ինչ ուրիշ:

Մենք չենք կարող նրանցից ամեն մինին պատասխան տալ. ո՛չ թէ ասելիք չունինք, այլ, որովհետեւ շատ ակտիւներ մարմաջում են եւ իրական ճշմարտութիւնը, ո՛չ շատ մերկ է: Եւ աւելորդ է, պատասխան տալ այնտեղ, ուր խօսում են հեղինակութեան անունով, որ մենք չենք ընդունում: Մենք նրա առջև պիտի դնենք գործ, նա մեր առջև պիտի դնէ հրաման: Գործը ցոյց տալով պիտի խօսինք համոզման

անունով, նա, հրամանը մէջ բերելով պիտի պահանջէ հնազանդութիւն:

Հնազանդութիւն... որի մէջ խորամանկութեամբ դրւած է բովանդակ ստրկութեան սերմը: Ուրացի՛ր, ասում է նա, քո դատողութիւնը, քո բանականութիւնը, քո խելքը եւ հրնազանդւիր ինձ: Դու մեքենայ ես, եւ ես քեզ շարժող զօրութիւնը: Մեր բառարանի մէջ հնազանդութիւն խօսքը չկայ, որովհետեւ հրամայական և հնազանդական առնչութեան մէջ ազատութիւն չկայ: Մենք, համոզում գիտենք, որ հնազանդութեան պէս կոյր չէ, որ հրամանի պէս չէ բռնաբարում քո հասկացողութիւնը: այլ աղբերանում է փաստերը և պատճառները գիտակցութեամբ ըննելուց:

Այո՛, մարդն է մեր կոպրելու ինչն է idéal և նրա էական և իրական պէտքերից աւելի, ուրիշ բանի հետ վերաբերութիւն չունինք: Էական և իրական պէտքերի մէջ տեսնում ենք նրա կեանքը, կեանքի պայմանները: Պայմանների մէջ տեսնում ենք տնտեսական խնդիրը, տեսնում ենք մարդկային համերաշխութիւնը, որ դաւանում ենք աղբիւր, անկեղծ և հաշւատու բարոյականութեան և որի առջև միայն խոնարհեցնում ենք մեր ծունրը:

Մարդը չի գողանում, բայց եթէ նա չի գողանում նրա համար, որ օրէնքը արգելում է գողանալ, նա գո՛ղ է եւ աւազակ: Մարդը չի սպանում, եթէ այն պատճառով միայն, որ սպանութիւնը արգելւած է ի վերջոյ, այն բոլոր յանցանքները, որ նա չի գործում, եթէ չի գործում իբրեւ ստրուկ, հնազանդելով մի գերագոյն հեղինակութեան հրամանի, մարդը սպանող է եւ անբարոյական:

Մարդը բարոյական է այն ժամանակ, եթէ այդ յանցանքները չի գործում, ոչ թէ իւր վրայ եղած հեղինակութիւնից վախենալով, այլ, եթէ գիտակցութիւնը և համերաշխութիւնը դրել է նրան այն կէտի վրայ, որ նա և յղանալ չի կարող այդ յանցանքները: Երբ յանցանքը յղանում է մարդը, գործել է, այնուհետեւ, թէ չի գործել, մեր համար անբարոյական է, որովհետեւ եթէ օրէնքը չարգելուր, պիտի գործէր: Եւ չգործեց, ոչ թէ հասկնալով, որ եթէ գործէր, իւր նման մի ուրիշին պիտի զրկանք, վիշտ, կամ մահ պատճառէր, այլ, որովհետեւ մեղք է, որովհետեւ յանցանքի փոխարէն պատիժ կայ: Ասել է, այնպիսին, եթէ իւր անձը վտանգելու չլինէր ինքը ուրիշի անձերը պիտի վրտանգէր: Այստեղ բարոյականութիւն չկայ, այս բարոյականութիւնը պաշտօնական է: Եթէ այս կէտից նայելու լինինք բարոյականութեան վրայ, վանդակի մէջ փակւած վագրը բարոյական է, որովհետեւ մարդ չէ փառատում: Եւ տարբերութիւն կայ, մինը (վագրը) ստիպւած է չը գործել, երկաթէ վանդակից, իսկ միւսը, (մարդը) ստիպւած է հեղինակութեան հրամանից:

«Որ հայիցի ի կին մարդ, առ ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա, ի սրտի իւրում» — ասում է, Քրիստոսը: Մեզ հասկնալի է այս:

Մրանց հակառակ, մարդը ողորմութիւն է տալիս, այսինքն, օգնում է կարօտելոց, եթէ նա գործում է այն, միմիայն այն պատճառով որ հաւատում է թէ փոխարէն պիտի ստանայ ... մենք չենք ընդունում նրան, որպէս բա-

րոյական, որովհետև, եթէ չհաւատար, թէ փոխարէն պիտի ստանայ, չպիտի գործէր: Մարդը ուխտում է, եթէ ես այս ինչ բան ստանամ, կամ, այն ինչ բանի հասնիմ, այս ինչ բարեգործութիւնը գործեմ, բարոյականութեան և հոտը անգամ չկայ այստեղ, որովհետև, եթէ իւր ցանկացածին չհասնի, չպիտի գործէ: Այս առևտուր է, պիտի տայ, ստանալու ակնկալութեամբ, բարի պիտի գործէ ստանալուց յետոյ: Եւ այս բոլորը, հեթանոսական և հրէական աւամբ, զոհի անուանով: Մարդկային համերաշխութիւնը զոհ չգիտէ, այնտեղ իւրաքանչիւր անհատ, միայն դարձնէ: Մեր բխտն է, որ անշունչ բնութիւնը մարդ չէ. ապա թէ ոչ, ինչ փոխարէն պիտի տայինք արևին, որ մեզ լուսաւորէր:

Չոհի սկզբունքը անարգում է մարդկային արժանաւորութիւնը: այստեղ, դարձեալ երեւում է բռնակալական ոգին, այստեղ, դարձեալ կոպիտ կերպով նշանում է մինի ոյժը, իսկ միւսի տկարութիւնը: Մի մարդ, տեսանելով որ միւսը մեռնում է սովից, որպէս թէ ասէր նրան, — տե՛ս, ահա մեռնում ես, քո կեանքը կախում է այժմ ինձանից, այսինքն իմ զեզ հաց տալուց կամ չտալուց. բայց ես զոհում եմ զեզ այս կտոր հացը, քո կեանքը յարատեւ տալու համար: Դրա փոխանակ դու պիտի ըզգաս, որ ես եմ քո ազատիչը.....

Թշւա՛ռ..... յառաջ քան թէ փրկեցիր նրա կեանքը ոտքիդ տակ կոխեցիր նրա իրաւունքը և նրա մարդկային արժանաւորութիւնը: Դո՛ւ, դադարեցար մարդ լինելուց, որովհետև ինչ որ ուղղակի քու մարդկային պարտքն էր, այն,

զոհի անուանով գործեցիր, վշտացուցիր քո ընկերի մասնասուրբ և նւիրական զգացողութիւնքը, որովհետև քո անձը տէր քարոզեցիր նրա կեանքին:

Հազար կեանք փրկէ դու այդ ճանապարհով, թող պաշտօնական բարոյական կնդրուկ ծխեն զեզ, մեր աչքում, դու ամբարիշտ ես:

Եւ ի՞նչպէս չդառնաս, դարձեալ դէպի տնտեսական խնդիրը, որ եթէ կարգի դրած լինէր, այս խեղճ մարդը իւր կեանքը, իբրեւ շնորհք, չպիտի ստանար բռնակալ—բարերարից:

Միտիկները չկամին այս տեսնել, նրանք վերացականութիւն են խնդրում, նրանք այնքան բարձր կանգնած են, որ մարդը հող և մոխիր է նրանց առջեւ: Բռնակալները սեպհականութիւն են պահանջում, նրանք կենդրոնացած են իւրեանց մէջ, իւրեանց գոյութիւնը քարոզում են ուրիշներին իբրեւ հաւատալիք, իսկ, այդ ուրիշների գոյութեան վրայ թքում են լրբաբար:

— Ի՞նչ է մնում այն մարդերին, որ ոչ միտիկ են եւ ոչ բռնակալ: Ի՞նչ է մնում մեզ:

«Բարոյել պնդեալան ինքիքը, քարոզել ճարքը, քարոզել ալքոնիանը, միտիկներին զայթակողութիւն եւ բռնակալներին սահմանադրութիւն, իսկ հասարակ ճշմարտին փրկութիւն»:

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

(Առաջին տպագրութեան մէջ, լոյս տեսած 1862-ին ի Փարիզ, ստորագրած Սիմէօն Մանիկեան կեղծ անունով):

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆՏԵԱՆՑԻ

“ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ”

ՍԻ ԱՆՈՐ ՄԻՋ

ԱՐՏԱՅԱՅՏԻԱԾ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

ՆԱԿԻ ՍԻՄ. ԶԱԽԱՐԵԱՆԻՆ

Մի քայլ է նախնական տասնիններորդ դարու այն տաղանդաւոր հայն է և մեր վերածընունդի այն ռակվիրան, որուն կեանքը և երկերը տակաւին երկար ժամանակ կրնան յուզել ուսուցանել մեր ժողովրդը:

Ծայրայեղ ընդունակութեան տէր, փոթորկոտ ու արիւնալի խառնածքով, անկեղծ հայրենասէր և ճշմարիտ մարդասէր՝ անիկա չափազանց շուտ հասկցաւ մեր իրականութեան պահանջները և իր բոլոր հոգով ծառայեց այդ պահանջներուն:

Անոր նշանակութիւնը մեծ եղաւ մեր վերածնունդ գրականութեան և կեանքի համար:

Պատանի հասակէն սկսեալ՝ նոր-նախիջեանի Առաջնորդարանի քարտուղարութեան պաշտօնի մէջ՝ անիկա հետեւեց ժողովրդեան ձայնին, կիրարկեց ռամկավարական սկզբունքները թեմին գործերուն մէջ, կատաղի պայքար մղեց հասարակութեան վերին դասերուն դէմ և իրականացուց նոր տարրերուն յաղթանակը:

Այնուհետև մերթ իբր ուսուցիչ լազարեան ձեմարանին մէջ, մերթ իբր հրապարակագիր,

մերթ իբր ճանապարհորդ՝ — Մօսկվա, Նոր-Նա-
խիջևան, Փեթերսպուրկ, էջմիածին, Պօլխս,
Հնդկաստան, Եւրոպա և այլուր — անիկա մե-
ծապէս նպաստեց մեր հասարակական կեանքի
զարգացման գործին:

1862 թւականին, 32 տարեկան հասակին
մէջ, իբր յեղափոխական կասկածելով՝ քննա-
բակաւեցաւ ռուս կառավարութեան կողմէ և
նետեցաւ Փեթերսպուրկի Պետրօ-Պաւլովի կոչ-
ւած խաւարչտին ու տիրահոջակ բանտը: Հոն
աւելի քան երեք տարի տառապեցաւ իր ազա-
տասիրական ու ժողովրդասիրական գաղափար-
ներու և գործունէութեան համար: Ապա, իբր
ծանր հիւանդ՝ բանտէն արձակելով, աքսորե-
ցաւ Ռուսաստանի խուլ անկիւններէն մէկը,
ուր և մեռաւ հիւծախտէ. ընդամենը 36 տա-
րեկան հասակին մէջ՝ լիովին կատարած ըլլա-
լով իր անհատական և հասարակական պարտա-
կանութիւնը հանդէպ մեր ազգին և ընդհանուր
մարդկութեան:

Իր կեանքը կարճ եղաւ, սակայն անհունա-
պէս բեղմնաւոր, արդիւնաւէտ, գործունեայ և
ազնիւ . . .:

Իբր գրող մէկէ աւելի տեսակի մէջ փոր-
ձեց իր կարողութիւնը: Աշխատանքի բաժա-
նումը մեր գրականութեան մէջ տակաւին գո-
յուցութիւն չունէր այն ատեն: Հեղինակները կը
ձգտէին ամեն հնարաւոր միջոցներով նպաստել
կեանքի ընդհանուր բարձրացումին: Կարիքները
շատ էին՝ և բազմակողմանի: Անհրաժեշտ էր
մերձենալ բոլոր կարիքներուն և գոհացնել ա-
մենքը: Ապա՝ հարկաւոր էր խօսիլ հասարակու-
թեան հետ մեն յեւրօվ, որպէսզի գրականու-

թեան դաստիարակչական պաշտօնը դիւրու-
թեամբ ի կատար ածուէր:

Եթէ հրապարակագրութիւնը անմատչելի
էր՝ պէտք էր դիմել բանաստեղծութեան, քըն-
նադատութեան, վիպագրութեան, բանասիրու-
թեան և այլն:

Եւ Նալբանտեան երեւցաւ գրականութեան
այդ բոլոր ճիւղերուն մէջ:

Իբրև բանագրի՝ անիկա առաջնակարգ տեղ
չունի վաթսուական թւականներու մեր գրա-
կանութեան մէջ: Ռաֆայէլ Պատկանեան և
Սմբատ Շահազիզ ընդհանրապէս իրմէ յաջող
կատարեցին այդ դերը: Սակայն ատով հան-
դերձ՝ անիկա ստեղծագործեց «Մեր Հայրենիք»
ու «Ազատն Աստուած»ը — երգեր, որոնք մեր
հայրենասիրական և ազատասիրական բանաս-
տեղծութեան մէջ կը մնան տակաւին չգերա-
զանցած իրենց բուն ոգևորութեամբ, անկեղծ
չեչտով, անմիջական ու հարազատ զգացմուն-
քով:

Իբրև բանագրի Նալբանտեան առաջին անգամ
ներկայացուց գրականութեան էութիւնը, դերը
մարդկային հասարակութիւններու մէջ, ու-
սումնասիրութեան ենթարկեց մեր նորագոյն
գրականութեան արտագրութիւնները, վեր հա-
նեց Առովեանի նշանակութիւնն ու խորունկ
ազդեցութիւնը, ցոյց տուաւ գիւղական վէպի
և մասնաւորապէս Պոռչեանի ծառայութիւնը
մեր ինքնագիտակցութեան մէջ: Երկարօրէն
խօսեցաւ «Սօս և վարդիթեր»ի վրայ, աշխար-
հարարի մէկ քանի կարևոր հիմունքները ցու-
ցադրեց այդ գրքին առիթով, մատնանշեց այն
իտէալական ճանապարհը, որով պիտի ընթանար

մեր նոր լեզուն — հեռու՝ անհարազատ օտարաբանութենէ, ազատ՝ գրաբարեան կաշկանդող կապանքներէ, գուած գոեհկական ոճերէ ու հարստացած ժողովրդական կենդանի, մաքուր, ճաշկաւոր արտայայտութիւններով :

Իբր Վեպրեան անիկա մեր գրականութեան մէջ դեր չկատարեց : Անոր վիպական գեղարուեստական արժանիքները բնաւ նախանձելի չեն. շարադրութիւնը ու ժեղ չէ, վէպին կազմաւորը գրաւիչ չէ : Սակայն այստեղ ևս մէկ ինքնուրոյն, նոր գաղափարը գործադրութիւնը կայ, որ նշանակալից է մեր գրականութեան համար : — Գեղարուեստական գրւածքին նիւթը պիտի կազմէ երկու, ճշմարիտ կեանքը և ոչ վերացական, աստուածաբանական մտահոգութիւնը : Գեղարուեստագէտը կեանքը պիտի ուսումնասիրէ, երկու-ճշմարիտը ցուցադրէ :

Պարմաբուհի ուսումնասիրութեանց մէջ Նալբանտեանց հանդէս բերաւ մեծ հմտութիւն — դատելով վաթսուներկան թւականներու պայմաններու տեսակէտէն — իրերու ճշգրիտ ծանօթութիւն, պատմական դէպքերու վերլուծման կարողութիւն : Համաշխարհային պատմութեան հետաքրքրական էջերու ցուցադրութեամբ՝ անիկա մեր կրանքին հիմքերը կամեցաւ կերտել ճշմարտութեան ճշմարտութեան :

Նշանաւոր է անոր պատմական ուսումնասիրութիւնը — «Մխիթար և Մխիթարեանք» խորագրով — այդ միաբանութեան գործունէութեան վերաբերեալ : Մատենադրական իրենց ահագին ծառայութեամբ հանդերձ՝ Մխիթարեանները Նալբանտեանցին հաճելի չեն իրենց կրօնական-դաւանական հետամտութեամբ :

Առարկայական, անկախ ճշմարտութեան ձայնը բնաւ հնարաւոր չէ բարձրացնել հոն, ուր կը տիրապետեն ուրիշ նկատումներ, աստուածաբանական նեղսիրտ ու նեղմիտ մտահոգութիւններ : Նալբանտեան չափազանց խիստ եղաւ և կատարելապէս համարձակ՝ Մխիթարեաններու այդ հիմնական հակադրութեան ցուցաբանման ու քննադատութեան մէջ :

Լեզուագիտական-բանասիրական ուսումնասիրութեանց ևս հետամտեցաւ Նալբանտեան : Յօդածներու շարքով մը և մասնաւորապէս «Աշխարհաբարի Գերականութեան Փորձով» անիկա մեր նոր լեզուն գիտական հետազոտութիւնն ու կառուցումը հաստատուն ճանապարհի վրայ դրաւ : Աշխարհաբար լեզուն անոր ուսումնասիրութեանց մէջ հանդէս կուգար իր պատմական, գրական իրաւունքներով, իր առողջ ու կենսունակ կողմերով, իր կարողական անուրանալի յատկութիւններով : Հայ բարբառներու ծանօթութիւնն ու համեմատութիւնը առանձին արժէք կուտար Նալբանտեանցի լեզուական յօդածներուն և կ'երաշխաւորէր անոր ազդեցութիւնը մտքերու վրայ :

Սակայն գրականութեան այս նիւթերուն մէջ չէ Նալբանտեանցի հոչակը և պատմական անունը : Բանաստեղծ, քննադատ, վիպագիր, պատմագիր, լեզուաբան Նալբանտեանցը չէ որ փայլ կուտայ մեր գրական ու հասարակական վերածնունդին : Թէև այս բոլոր տեսակներու մէջ ևս անիկա հանդէս է բերած մէկէ աւելի արժանիքներ, գիտական մեթօդ, ուսումնասիրութեան հմտութիւն, սեղմ ու տիրական ոճ, բուն ոգևորութիւն, դիտելու ընդունակու-

թիւն — այնուամենայնիւ իբր հրապարակութիւն է, որ Նալբանտեանց կը սաւառնի տասնիններորդ դարու հայ մտքին վրայ և կը ցուցնէ այդ մըտքին թաքուն բարեմասնութիւններն ու խորունկ իմաստութիւնը :

Նալբանտեանցի հրապարակագրութիւնը արտայայտեցաւ գլխաւորապէս Ստեփան Նազարեանցի հրատարակած «Հիւսիսափայլ»-ին մէջ : Այս ամսաթերթին ամենէն կուռ ու ամենէն խիզախ էջերը Նալբանտեանցին յօդածները կը գրաւեն : Անոնք կը խօսին հայ վերածնող կեանքին գրեթէ բոլոր հական խնդիրներուն վրայ : Հին աշխարհահայեացքին ու հին իրականութեան բովանդակ քննադատութիւնը անոր յօդածներուն մէջ կ'երևար : Հայ կեանքը մերկացած էր հոն, լուսաբանւած, գնահատւած ճիշտ ու անխնայ տրամաբանութեամբ :

Այդ հրապարակագրութեան — ինչպէս և վաթսունական թւականներու ամբողջ գրականութեան — ամենէն զգալուն կէտը կը կազմէր գրաբարի և աշխարհաբարի ընդհարումը : Ասոր շուրջը կը բոլորէին միւս խնդիրները և ասոր միջոցով կը չափուէին գրական-հասարակական հոսանքները և արժէքները : Գաղափարական հակամարտութիւնները, իտէալները հոն կ'անդրադառնային և այն հիմնական ընդհարումէն կը սկզբնաւորուէին :

Նալբանտեանցին մատուցած ծառայութիւնը այս ասպարէզին վրայ կարևոր է և անուրանալի : Աշխարհաբարի փոփոխ պաշտպանութեան հետ՝ մեծ դեր կատարեց նաև անոր անհատական լեզուն, ոճը, գրելու ազատ և անկաշկանդ արտայայտութիւնը :

Բացի աշխարհաբարի և գրաբարի խնդրէն՝ Նալբանտեանց «Հիւսիսափայլ»-ի մէջ արձագանգ տւաւ նաև ուրիշ բազմաթիւ խնդիրներու : Դրոցական-կրթական, կրօնական-բարոյական, եկեղեցական, գրականական, բանասիրական և այլ հարցեր յաջորդաբար նիւթ են դարձեր անոր հրապարակագրութեան : Բոլոր այդ խնդիրներու մէջ անիկա հետեւած է յառաջագէտ, արմատական ուղղութեան, ռամկավարական աշխարհահայեացքին և գիտական, առողջ ըմբռնումներուն :

«Հիւսիսափայլ»-էն դուրս Նալբանտեանց իբր հրապարակագիր երևցաւ նաև Կ. Պօլսոյ «Մեղու»-ին մէջ, 1861 թւականին, երբ ինքը հոն կը գտնուէր՝ Հնդկաստան երթալու համար :

Թիւրքահայոց քաղաքական-հասարակական պատմութեան ամենահետաքրքրական ժամանակներէն էր այդ շրջանը : Գաղափարական հոսանքներու և իտէալներու կազմակերպման տարիներ էին : Ժողովրդասիրական-յառաջադիմական տարրերը դարձեր և կանգներ էին կղերական-յետադիմական տարրերուն հանդէպ :

Նալբանտեան առաջիններուն ամենաուժեղ արտայայտիչներէն հանդիսացաւ, ռամկավարական գաղափարներու ջերմ պաշտպանը, ֆատի դատին տեսաբանը :

Ապա նշանաւոր է նաև Նալբանտեանցի «Երկու տող» խորագրով յօդածը, տպագրւած Եւրոպա առանձին գրքոյկով, ուղղած Չամուռեան պատեւելիի և անոր յետադիմական ըմբռնումներուն դէմ, գրւած ընդդիմախօսական ուժգին ոճով՝ և անկեղծ համոզմունքով :

Տաղանդաւոր հեղինակին այս բոլոր աշխարհ-

տանքներուն վրայ մենք կանգ չառինք մանրամասնաբար: Չի խօսեցինք գէթ համառօտ կերպով: Մեր նպատակն էր նիւթ ընել այս անգամ Նալբանտեանցի «Երկրագործութիւն»ը միայն: Եւ որպէսզի այս հռչակաւոր երկը «Երկրագործութեան» Նալբանտեանցի գրական գործերուն մէջ՝ մենք անհրաժեշտ համարեցինք անոնց ուրւագիծը ներկայացնել և ընդհանոր բնոյթը ցուցահանել:

Այս բոլորէն ապահովաբար կ'երևայ այն, որ Նալբանտեան հեղինակական որոշ նկարագրով ու կազմակերպւած աշխարհահայեացքով կը մօտենայ իր հրապարակագրութեան վերջին խօսքին...

«Երկրագործութիւն»ը գրւած և տպագրւած է Եւրոպա առաջին անգամ 1862 թւականին: Ռուս գրաքննութիւնը արգիլւած է անոր մուտքը Ռուսաստան: Թուրքիա ևս չէ մտած: Սակաւաթիւ օրինակներ, ձեռագրը և վիմագիր արտատպութիւններով, տարածւած են հայ երկրի այս ու այն կողմը և մասամբ այս պատճառով՝ չեն կրցած ցանկալի ազդեցութիւն ունենալ մտքերու և գաղափարներու վրայ: Հայ գրականութեան ամենագեղեցիկ և առնական արտագրութիւնն այսպիսով ենթարկւած է տըխուր ճակատագրի մը: Այս գրութիւնը յարատեւած է մինչև Ռուսաստանի մեծ յեղափոխութեան շրջանը: 1906 թւականին, հասարակական-քաղաքական զարթնումի այդ բուռն օրերուն «Երկրագործութիւն»ը երեցած է երկրորդ անգամ Նալբանտեանի «Երկեր»ու երկրորդ հատորին մէջ: Երրորդ անգամ հրատարակւած է Պօսթընի «Հայրենիք»ի մէջ, որմէ և կ'արտատպւի առանձին գրքոյկով:

«Երկրագործութեան» մէջ արտայայտւած, ամփոփւած են Նալբանտեանցի «աշխարհ»-ը, հասարակական-դրամատիկական, քննադատական ըմբռնումները: Այնտեղ Նալբանտեան հանդէս կուգայ հրապարակագրի իր ամբողջ հասակով ու որոշ հաստատուն աշխարհահայեացքով: «Հիւսիսփայլին» մէջ մասամբ գրաքննական խստութիւններու, մասամբ անհատական անպատրաստութեան պատճառով չեն շօշափւած այս կարգի արմատական խնդիրներ: Եւրոպայի կեանքը և ընկերական գիտութիւններու բարեխիղճ ուսումնասիրութիւնը նպաստեցին այս գրքի երևումին:

Մէկէ աւելի ազդեցութիւններ նշմարւած են «Երկրագործութեան» վրայ: Նախ և առաջ՝ դարը, ժամանակը, որ ամբողջովին կլանւած էր տնտեսական-հասարակական խնդիրներով: Քաղաքական բուռն փոթորիկներէն յետոյ, իրաւական, օրէնսդրական յեղաշրջումներու օրը՝ Եւրոպական գրականութիւնը, մտաւորականութիւնն ու քաղաքակրթութիւնը սկսան յղանալ տնտեսական-հասարակական խնդիրներ, պահանջել իրական հաւասարութիւն: Թէ փիլիսոփայութիւնը, թէ պատմական-ընկերական գիտութիւնները եւ թէ կեանքը առաջադրեցին նիւթական խնդիրներ, որոնք մինչև այդ ժամանակ, մտքի զանազան արտայայտութիւններու մէջ, առաջնակարգ տեղ չէին գրաւած:

Այդպէս էր դարը: Ծայրայեղ, չափազանցեալ պաշտամունք տնտեսական-նիւթական մտածողութիւններու հանդէպ. բնական հակահարւած ընդդէմ հին տեսակէտներու, բնազանցական փիլիսոփայութեան, վիպական աշխարհա-

հայեացքի : Նալբանտեանցի աշխատութեան մէջ
գոյութիւն ունին հաւասարապէս դարի եւ մար-
տութիւններն ու մոլորութիւնները :

Բայրի ժամանակի այդ ընդհանուր ազդեցու-
թեանէն՝ «Երկրագործութեան» վրայ նկատելի
են նաև Ռուսական ու Եւրոպական կեանքի և
գրականութեան ազդեցութիւնները :

Գիւղացիական արիւնոտ խնդիրը Ռուսաս-
տանի մէջ, տասնեակ միլիոնաւոր ճորտերու
անհողութիւնը, իրաւազրկութիւնը, ստրկու-
թիւնը — Ռուս շարաշուք պատմութեան այդ
վաղեմի վէրքը որ առանձնապէս բացւեր ու
ցուցադրւեր էր վաթսունական թւականներուն :
Ի՞նչ ընել . ահաւասիկ այն ճակատագրական
հարցը, որ ցցւած էր ուս իրականութեան ճա-
կատին : Կալւածատէրերը, իշխանները, կայսրը
— ժողովրդի մեծ ու փոքր թշնամիները — բարե-
հաճեր են ազատել ճորտերը իրաւական ստրկու-
թեանէ, արձակել հողի կապանքներէն և ուղարկել
հոն, ուր անոնք՝ միլիոնաւոր գիւղացիները կը
ցանկան . Անհող ու անհոց — թող թափառին ա-
զատութեան մէջ որքան կ'ուզեն :

Եւ այսպէս՝ ճորտերը իրաւունք ստացան
սովամահ ըլլալու : Այս էր ուս պեփական ան-
ձերու և քաղաքական վարիչներու բովանդակ
խիղճը և իմաստութիւնը : Տնտեսական — հողա-
յին խնդիրը այսպիսի եղերական պայմաններու
մէջ, բացարձակ հրամայողական կը դառնայ :

Նալբանտեան կ'ապրէր Ռուսաստանի մէջ,
կը դիտէր կեանքին այս անպատիւ խաղերը, կը
վերլուծէր իրականութիւնը և կուգար այն եզ-
րակացութեան, ինչ որ գրած է իր «Երկրագործ-
ութեան» մէջ :

Ռուսական կեանքէն զատ՝ Նալբանտեանի
աշխարհայեացքին վրայ բոտ երեւոյթի կա-
րեւոր ազդեցութիւն են ունեցած նաև ուս
ազատական-ընկերվարական գրականութիւնը և
անոր խոշոր ներկայացուցիչները : Հէրցէն, Բա-
կունին, Չերնիշևսկի — առաջինը աւելի նազ,
քան երկրորդն ու երրորդը : Բակունինի ծայրա-
յեղ քաղաքական աշխարհայեացքը, անիշ-
խանական վարդապետութեան այն մասը, ուր
կառավարական տարբեր ձևերը — միապետու-
թիւն, սահմանադրութիւն, հանրապետութիւն
— հաւասարապէս կը քննադատւին և յետ կը
մղւին՝ անցած են «Երկրագործութեան» մէջ :
Չերնիշևսկիի ընկերվարական քաղաքական
հողային խնդրի առիթով անոր ցուցուցած ա-
ռաջնակարգ մտահոգութիւնը, երկրագործու-
թեան խոշոր նշանակութիւնն ու դերը անոր
հասարակական-տնտեսական աշխարհայեաց-
քին մէջ, անոր հռչակաւոր տեսութիւնը՝ հո-
ղագործական ընկերվարութեան մասին՝ այս բո-
լորը հաղորդւած են Նալբանտեանցի «Երկրա-
գործութեան» և հոն տեղաւորւած :

Եւրոպական կեանքի և գրականութեան ազ-
դեցութիւնը ևս — ինչպէս ըսինք — պակաս
զգալի չէ Նալբանտեանցի վրայ : 1862 թւակա-
նին, շնդկաստանէն վերադարձին՝ Նալբանտ-
եանց առ ժամանակ մնաց Եւրոպա : Եղաւ Փա-
րիզ, Պերլին, Լոնտոն, ծանօթացաւ Եւրոպական
քաղաքակրթութեան անմիջական արդիւնքնե-
րուն : Իր կեանքի այս շրջանին մէջ կրցաւ մօտ
յարաբերութիւն ստեղծել ուս նշանաւոր քա-
ղաքական էմիկրանտներու՝ Հէրցէնի, Բակու-
նինի հետ :

Սրատես և խորաթափանց նալբանտեանցին համար Եւրոպական կեանքի անմիջական շփումը անհետեանք չանցաւ։ Անիկա տեսաւ դրամատիրութեան հսկայական գորութիւնը, տեսաւ դասակարգային կտրուկ, շեշտած հակամարտութիւնները, տեսաւ հէքիաթական հարստութեան քով՝ անպատմելի թշւառութիւնը, տեսաւ միլիոնաւոր գործաւորներու քաղցած ու անօթի բանակները, տեսաւ աշխատանքի նահատակութիւնը և դրամի միահեծանութիւնը — տեսաւ այս բոլորը՝ քաղաքական, իրաւական, օրինական հաւասարութենէն յետոյ և յուզած ձայնով տնտեսական-իրական հաւասարութեան քարոզը կարգաց «Երկրագործութեան մէջ»։

Քաղաքակրթութեան ու դրամատիրութեան մեծ կեդրոններու հանապազօրեայ կեանքը դիտելով՝ անիկա կրցաւ լաւ հասկնալ միտքի վարպետներուն արտադրութիւնները։ Այս կարգի ազդեցութիւններու մէջ յիշատակելի են՝ ֆիւլիպիանները, տասնիններորդ դարու Ֆրանսացի տեսլագէտ ընկերվարականները (utopiste-socialiste), Ժան-ժաք Ռուսսօ և Պրուտօն, Ֆէօյերբախ և տնտեսական մատերիալիզմի շերտայացուցիչները։

«Հողը կը պարունակէ իր մէջ ծոցովուրդներու երջանկութեան բոլոր գաղտնիքները։ — Հողն է աղբիւրը բոլոր հարստութեան։ Հողը միայն կ'արդիւնաբերէ և ոչ մարդը։ Մինակ հողային աշխատանքը մշակողին կուտայ աւելի արդիւնք՝ ստեղծւած բնութեան արտադրական ուժով։ Հողի վրայ մարդիկ չեն դնել արդիւնքին համապատասխան շիւթ։ Ամենաչնչին արժէքով հողէն անբաւ հարստութիւն կը ստաց-

ւի։ Հողային աշխատանքը պէտք է տնտեսութեան հիմք դառնայ...» Ֆիզիօկրատ-տնտեսագէտներու այս սկզբունքները կը կազմեն նալբանտեանցի «Երկրագործութեան» տնտեսական ըմբռնումներու պատւանդանը։

Իր աշխատութեան այդ մասով՝ նալբանտեանց հաւատարիմ արձագանքը և հետևողը կը հանդիսանայ տնտեսագիտական յիշեալ դպրոցին։

Հասարակական վերաշինութեան, իրական հաւասարութեան, դասակարգային հակամարտութիւններու ամոքման խնդիրներու մէջ նկատելի է Ֆրանսացի ընկերաբաններու ազդեցութիւնը։

Այս ազդեցութիւնը առհասարակ չատնշանակալից է եղած տասնիններորդ դարու ընկերվարական մտքի վրայ՝ թէ Եւրոպա և թէ Ռուսաստան։ Ռուս նշանաւոր հրապարակագիրներն ու ընկերվարականները ազդելով մեր նալբանտեանցի մտածողութեան վրայ՝ իրենց հերթին ազդւած են Ֆրանսական դպրոցէն։

Սեփականութեան գաղափարի դէմ մարտնչելով և «Բեֆուան-Ֆիւնը Բուս-Ֆիւնը հոշակելով» նալբանտեանց ակնյայտ կերպով արձագանք կուտայ Պրուդօնի և Ժան-ժաք Ռուսսօի տեսակէտներուն։ Սեֆուան-Ֆիւնը Բուս-Ֆիւնը է՝ կ'ըսէր տակաւին տասնութերորդ դարու մէջ Ֆրանսական Մեծ Յեղափոխութենէն առաջ ժընէվցի հասարակագէտ-փիլիսոփան, «Ընկերական Դաշինք»ին («Contrat Social») անմահ հեղինակը։ Սեֆուան-Ֆիւնը Բուս-Ֆիւնը է՝ աւելի շեշտելով և աւելի մասնաւորելով կը կրկնէր Ֆրանսացի մեծանուն անիշխանական տեսաբանը։

Բացի սեփականութեան սկզբունքի քննա-

դատութենէն և բացասումէն՝ Նալբանտեանց ուրիշ խնդիրներու մէջ ևս ներշնչւած է յիշեալ երկու փիլիսոփաներէն: Քաղաքական ծայրայեղ ուսմունքը, կառավարութեանց տարբեր ձևերու անխտրականութիւնը որոշ շափով կուգան Պրուդոնի տարածերթ աշխարհահայեացքէն: Իսկ բնութեան հիասքանչ վարդապետութիւնը, բնութեան բարիքներու, անոր անբաւ հարստութեանց ու երջանկութեան ոգևորւած գովասանքը ամենէն առաջ «քննական մարդու», ժան ժաք Ռուսսօին յղացումներն են ու գաղափարները:

Նալբանտեանցի փիլիսոփոյական-նիւթապաշտական մտահայեցողութիւնը, որու վրայ մենք պիտի խօսինք իր տեղին՝ գերմանացի յայտնի փիլիսոփայ Ֆէօյէրբախի ըմբռնումներու վրայ է հիմնւած: Նիւթի առանձնութիւնը, մարմնի գերազանցութիւնը, կենդանական գործառնութիւններու սկզբնականութիւնը՝ ասոնք Ֆէօյէրբախի իրական, նիւթապաշտական փիլիսոփայութեան գլխաւոր տարրերն են:

Իր այս ուսմունքով գերմանացի հակակրօն փիլիսոփան և բնազանցութեան երդւեալ թըշնամին կարևոր ազդեցութիւն ունեցած է տառնիններորդ դարու իմաստասիրական ուղղութիւններու և հասարակագիտական-տնտեսական սիստէմներու վրայ: Ի միջի այլոց՝ հռչակաւոր ընկերաբան-տնտեսագէտ Կարլ Մարքսի վարդապետութիւնը և անոր տնտեսական մատերիալիզմի համաբաւոր տեսութիւնը որոշ մասերով ներշնչւած է այդ փիլիսոփայոյութենէն:

Մասամբ այս սկզբնական ազդեցութեամբ կարելի է բացատրել նաև այն կապը, որ գոյու-

թիւն ունի Նալբանտեանցի «Երկրագործութեան» և տնտեսական մատերիալիզմի միջև: Տնտեսական տարածերթ աշխարհահայեացքը, տնտեսական խնդրի միակ կարևորութիւնը, անոր անվերապահ առաջնութիւնը մեր հայրենակից հրապարակագրի տեսութեան մէջ՝ իր վրայ կը կրէ անշուշտ Մարքսեան փիլիսոփայութեան՝ և ընկերաբանութեան ակնյայտ կնիքը:

Ազդեցութիւններու այս շարքին վրայ մենք չի պիտի կրնանք հայ անուններ յիշատակել. Հայոց գրականութիւնը մինչև Նալբանտեան բնաւ զբաղւած չէ այս կարգի խնդիրներով: Ոչ անկէ առաջ և ոչ անոր ժամանակակից որևէ հայ հեղինակ գիտական ուսումնասիրութեան նիւթ չէ առած տնտեսական-քաղաքական-ընկերական այն վերին աստիճան հետաքրքրական խնդիրները: Հայկական հրապարակագրութիւնը Նալբանտեանցով միայն բացւեցաւ այդ խնդիրներու հանդէպ և բաւական երկարատեւ Նալբանտեանց մնաց համամարդկային այդ արմատական կնճիռներու միակ ուսումնասիրողը:

Հայ գրականութեան ազդեցութիւնը չնկատելով՝ մենք պիտի նկատենք, սակայն, հայ կեանքին կարևոր ու խորունկ ազդեցութիւնը: Նալբանտեանց, ինչպէս ինքը կ'ըսէ, «Երկրագործութիւն»ը գրած է հայ իրականութեան օգտակար ըլլալու համար թիւրքահայոց կեանքին բովանդակ դառնութիւնը, անտանելի չքաւորութիւնը, անհողութիւնը, աւերիչ պանդըխտութիւնն ու գաղթականութիւնը, գիւղացիութեան անկումը, հարկերու ծանրութիւնը, ընտանիքի նիւթական և բարոյական քայքայումը — այս բոլոր ախտաւոր երևոյթները, մեր

ժողովրդի գոյութեան այս բոլոր թշնամիները կարևոր դեր ունին «Երկրագործութեան» յղացման և հրատարակութեան մէջ .

Նալբանտեանց աշխատած է մանրացնել քննութեան ենթարկել Թուրքիոյ կեանքը ընդհանրապէս, Թիւրքահայոց վիճակը մասնաւորապէս . ձգտած է հասկնալ, ըմբռնել շարիքի բուն պատճառը, փորձած է վերլուծել տնտեսական և դասակարգային յարաբերութիւնները, երկրագործութեան, բեռնակրութեան ու առևտրականութեան դերը, կարևորութիւնը և հասարակական օգուտը, հետախուզած է կեանքին կնճիռները և հաւաքական բարեկեցութեան ու երջանկութեան պայմանները : — Անիկա զգացած է մեր իրականութիւնը, ապրած է մեր իրականութիւնը, ապրած է մեր թշուառութիւնը, մտածած է մեր գոյութեանը և օրինակ ունենալով օտար հասարակութիւններու կեանքն ու պատմութիւնը, ղեկավար ու առաջնորդ ունենալով ընդհանուր ճշմարտութիւնները, համաշխարհային պատմութեան օրէնքներն ու գիտութիւնը՝ կամեցած է «Երկրագործութեամբ» ամօքել մեր վիշտը . . . :

Օտար կեանքերու և օտար գրականութեանց ազդեցութիւնը անոր մէջ չէ նւագեցուցած հայ կեանքին անմիջական ներգործութիւնը և իր անհատական, ինքնուրոյն մտածողութիւնն ու հոգեբանութիւնը . . . :

«Երկրագործութիւնը» մէկ «Բնօրէն-կան» շարադրութիւն չէ, ճշգրտօրէն ու խտտապէս գիտական գրութիւն չէ : Անոր մէջ քանի մը խընդիրներ դրած են այս ու այն կողմ, որ կապուած չեն միմեանց հետ գրւածքի համար ան-

հրատեղտ միութեամբ : Մեր ժամանակի գրականութեան մէջ անիկա թերի ու անկատար երկիրը համարէր :

Գրւածքի մէջ յաճախ կարելի է միջանկեալներ գտնել, որոնք հիմնական գաղափարի հետ կամ բնաւ կապ չունին կամ շատ քիչ են կապուած : Հարցերը յաճախ խճողւած են միմիանց հետ և յստակութիւնն ու պայծառութիւնը գրութեան հիւսւածքի մէջ երբեմն կը նւագին : Ուսուցմանսիրութիւնը իրագործուած է անհասարկ յաջողութեամբ : Յաճախ չափազանց կը տրուէ, ուժգին, համոզիչ ու տրամաբանական, երբեմն թոյլ, անորոշ ու տարտամ :

Հիմնական գաղափարը ընդհանրապէս պարզ է, ակնյայտ, հետեւողական ու շեշտուած, թէ և երբեմն թիւրիմացութիւններու տեղիք տւող վրիպումներու ենթակայ :

Ոճը բարձր, սեղմ, նկարագեղ, տաք ու կենդանի : Խառնուածքին ու բնաւորութեան մարմնացումն է անիկա : Արտայայտութիւնները ինքնուրոյն, անհատական, սրամիտ և յաճախ հեգնական, լեզուն իր ժամանակի համար աւելի քան յաջողուած :

Մեր հրապարակագրութիւնը նախ քան Նալբանդեան՝ եթէ ոչինչ չէր ըրած մտքերու, գաղափարներու, աշխարհահայեացքի տեսակէտով՝ շատ բան չէր իրագործած նոյնպէս աշխարհաբարի վերաբերեալ : Սրբիան Նալբանդեան, որ իր ժամանակներու և նախորդներու շարքին մէջ լաւագոյնը կրնար դիտուիլ՝ շատ ու շատ յետ կը մնար Նալբանդեանցէն : Կարելի է ըսել՝ մեր հրապարակագրական լեզուի ստեղծողը և կատարելագործողը եղաւ Միքայէլ Նալբանդեանց :

Մէկ քանի առանձնատկութիւններէ զատ, որոնք իր ժամանակի անխուսափելի հետեանքներն են՝ Նալբանդեանցի լեզուն այսօր ալ օրինակելի է :

Գրեածքը ընդհանուր առմամբ եզակիան երևոյթ է մեր վերածննդ գրականութեան համար: Վերացական, անմարմին հրապարակագրութիւն չէ անիկա, այլ իրողութիւններ, փաստերու վրայ հիմնած առողջ ուսումնասիրութիւն: Եթէ գրութիւնը Խոփոյեան գիտական չէ, մեթօք է ապէս գիտական է: Եթէ վերջնական երօթօրծումը չի գոհացներ գիտականութեան բարձր պահանջներուն, իրագործման հանդերձ, եղանակը կը գոհացնէ անշուշտ:

Իրականութեան օբյեկտիւ (objectif) վերլուծումն ու քննութիւնն է, որ նորութիւն էր մեր հրապարակագրութեան համար և որ մինչև օրս ալ—չենք ըսեր կը քօցուայի, բայց շատ կը զօլօթի մեր գրականութեան մէջ:

Այս կարևոր առանձնատկութիւնը—իրականութեան ցուցադրութիւնը—միացած հեղինակի ուժեղ տրամադրութեան հետ՝ կը կազմեն «Երկրագործութեան» արժանիքը, որոնք կեանքը և հոօթել գիտածը—աշակատիկ յաջողութեան գրաւականը ամէն երկասիրութեան...

* * *

Վերոյիշեալ ընդհանուր գիտողութիւնները «Երկրագործութեան» կառուցւածքի մասին բաւ համարելով՝ այժմ անցնինք գրեածքի բովանդակութեան: Մենք չը պիտի պատմենք ի հարկ է այդ բովանդակութիւնը, կենթադրենք, որ անիկա ծանօթ է ընթերցողին: Մենք միայն յա-

Չորդաբար պիտի ցուցադրենք այն դաշտափարները, որոնք տեղաւորւած են հոն՝ կցելով այդ ցուցադրութեան նաև մեր կարծիքներն ու քննութիւնը: Գրեածքը կը սկսի Հիօթայէն և Հարօթայէն Ամերիկաներու միջև տեղի ունեցած պատերազմին յիշատակութեամբ: Առաջինը կը ձգտի ստրկութիւնը և մարդավաճառութեան անպատիւ սովորութիւնը վերացնել երկրորդի մէջէն: Անգլիան չնայելով իր դարաւոր պատմութեան, ազատական իր անցեալ տրամադրութիւններուն՝ հակակրական վերաբերմունք կը տածէ դէպի Հիւսիսային Ամերիկան: Պատճառը՝ զուտ փոփոխութիւն: Հարաւային Ամերիկան պարտելով՝ պիտի պակասի բամբակի մշակութիւնը և ստրկութիւնը վերնալով՝ պիտի կանգ առնէ ուրիշ բուսականներու արդիւնաբերութիւնը: Այդ պարագան պիտի հզօրացնէ ազդէ Անգլիոյ ճարտարարւեստին և վաճառականութեան վրայ: Գործարանները պիտի փակին, դրամատէրերը պիտի մնասներ կրեն և հազարաւոր գործաւորներ պիտի սովամահ ըլլան անգործութենէ:

Այսպէս կը մտածէ Անգլիան, ըստ Նալբանդեանի և այդ պատճառով կը հակառակի մարդավաճառքի վերացման ու ստրկներու ազատութեան:

Տնօրեակած մտահոգութիւններու հանդէպ ի դերը կեւրեն, ուրեմն, անգլիական պատմութեան առաքինութիւնները ու ազատասիրական սովորութիւնները:

Հասարակական և քաղաքական երևոյթներու մէջ նոր տարր կը մտնէ այսպիսով: Դէպքերը—թէ պետութիւններու և թէ անհատներու

րու արարքները — գաղափարական, իտէալական մղումներով չէ, որ կը կատարին ճշմարիտ, այլ անտեսական-նիւթական անհրաժեշտութեամբ: Այս ճշմարտութիւնը թէև միակողմանի ու տարածերժ մեծ կարևորութիւն ունի մեր նորա-առ աշխարհային ինքիքը այդ չէ:

Իսկապէս մշակութեան անկումը կամ ուկեայլ առարկայի գործածութեան դադարը առաջ կը բերեն քրիստոսոս անհատներու թշուառութիւնը:

«Նրէկ գործածութեան մէջ էր որ և է ժապաւէն՝ այսօր մարդիկ դադարեցան խոյն գնելէ և գործածելէ: Եւ այս չափազանց չնչին, չափազանց բնական, չափազանց սովորական երեւոյթը պատճառ կը դառնայ միլիոնաւոր աշխատաւորներու տառապանքին:

Ինչո՞ւ է այդպէս: Ինչո՞ւ Հասարակական կազմը այնպէս չէ շինուած, որ այդ բնական երեւոյթը դայու երթայ, առանց աւերակներ գործելու ժողովրդի լայն, ընդարձակ խաւերու մէջ...:

Նախկին Յեղափոխութիւնները, քաղաքական մեծամեծ շրջանները չկրցան լուծել այս ծանր խնդիրը: Արտոսթետիան, Հասարակութեան, Յշարժութեան անունով ժողովուրդները ելան բռնապետութիւններու վրայ, խորտակեցին Հին Իրաւակարգերը, տապալեցին վաղեմի օրէնսդրութիւնները, մի անձի բացարձակ իշխանութեան փոխարէն՝ ժողովրդի, ռամկավարութեան կռիւնը Հաստատեցին... և սակայն մարդը չազատեցաւ սարկութենէ, մարդը չը դադարեցաւ նահատակելէ:

Ինչո՞ւ է այդպէս: Ի՞նչ է պատճառը այս ճակատագրական անարդարութեան, ո՞ւր է Հիմքը այս յարատե անիրաւութեան: Ինչո՞ւ քաղաքական-իրաւական աշարժումները անցօր են եղած մարդկային գերութեան վախճանը իրադրութելու...:

Որովհետև ժամանակակից քաղաքականութեան իրաւունքը անկախ է ժամանակէ: — Իսկ որ մէկը տէր է նիւթական բարիքներու, իսկ միւսը շարժ է այդ բարիքներէն — անազատութիւնը Հասարակական կեանքի կանոնը պիտի մնայ»:

Ահաւասիկ ինչպէս կը ներկայացնէ մեզ Նալբանդեան այն մարդու վիճակը, որ քաղաքական ազատութիւններ ունենալով Հանդերձ գուրկ է սեփականութենէ:

«... Ազատ եմ ես, միմիայն օրէնքով, քաղաքականապէս ազատ կոչուելով. ազատ եմ ես քանի որ նիւթական կարօտութիւնը ստիպում է ինձ, կամայ ակամայ, մի ուրիշին ստրկանալ, ուրիշին ծառայել և այդ ծառայութեամբ Հաց ճարել իմ ընտանիքի համար: Ազատ եմ ես, եթէ ուէր ունիմ, որին եթէ իմ ազատութիւնը յայտնեմ, բացարձակապէս պիտի զրկեմ ապրուստից և ինձ և իմ ընտանիքս՝ ծառայ լինելուց դադարելով: Եւ այս բոլորից յետոյ՝ ազատ եմ ես... երևակայութեան մէջ, թէ օրի մէջ...»:

Առանց նիւթական բարիքի քաղաքական ազատութիւնը՝ երևակայական, օդային ազատութիւն է միայն: Նոյնպէս է նաև իրաւական Հասարակութիւնը:

«Հասարակութեանը իբրև Լոկ իտոյ հնչում է ճիշդ օրի մէջ և իրական անհասարակութեան կեդրոնէն շինուած է ինչ աւար սրբակ»:

Հայրենիքի աշխատաւոր զաւակները, անոնք, որոնք կը կերտեն հասարակաց բարին և որոնք զօրկ են այդ բարիքէն—այսպէս կը խօսին իրական հաւասարութեան թշնամիներուն:

«... Ինչպիսի՞ հաւասարութիւն է այս, դու ունիս այսչափ, իսկ ես ոչինչ, քո բաժին միայնակ վայելում ես Հայրենիքի բարին. իսկ ես քո հաւասար կրում եմ միայն ծանրութիւնը: Բաժին տուր ինձ քո հողից, մենք մի Հայրենիքի որդի ենք, եղբայր ենք: Ինչպէս քեզ հարկաւոր է ապրուստ, նոյնպէս և ինձ, ինչպէս դու կրում ես Հայրենիքի բեռը, նոյնպէս կրում եմ ես: Բաժին տուր ինձ քո հողից, այն ժամանակ ես չեմ աշխատելու բռնի, ես կը զգամ ինձ ազատ, մեր իրաւունքները կը հասարակ և ճշգրիտ նշխարաբանք երևան կելնէ...»:

Անհասարակութիւնը գոյութիւն է, աւազակութիւն, յափշտակութիւն—արդար զայրոյթով կը կրկնէ Նալբանդեան իր Եւրոպացի ուսուցիչներու համբաւաւոր խօսքերը... Ահա թէ ո՞ւր է մարդկային իրաւասութեան անհասարակութիւնը: Պէտք է վերացնել այն, եթէ կուզենք իրական հաւասարութիւն, եթէ կուզենք, որ ազատութիւնը մեռած տառ չը մնայ:

Տնտեսական ինքիքը այսպիսով առաջնակարգ տեղ կը գրաւէ: Տնտեսական ազատութիւնը, տնտեսական հաւասարութիւնը բացարձակ հրամայականներ կը դառնան: Առանց նիւթական, իրական ազատութեան չկայ և չէ կարող ըլլալ իսկական ազատութիւն: Մարդիկ իրաւապէս ազատ ըլլալով՝ տակաւին ազատ չեն վերջնականապէս:

Այս ճշմարտութիւնները, ժամանակակից

քաղաքակրթութեան այս հիմնական դադափարները մեր հրապարակագրութեան համար իսկական յայտնագործութիւններ էին: Միքայէլ Նալբանդեանց շատ վաղ կրցաւ հասկնալ նոր վարդապետութիւններու ոգին, նոր սերունդներու բովանդակ իմաստութիւնը:

«Քանի որ տնտեսական խնդիրը, այն բազմակնէիտ գործեանի կապը լուծուած չէ, հասարակութիւնը իր ընտանեկան և ընկերական յարաբերութեանց մէջ ազատ չէ, թող քառասուն անգամ, եթէ կամենան, փոփոխին կառավարութեան ձևը, բայց քանի որ հասարակութեան մի մասը տիրապետել է հողին, իսկ միւս մասը մնում է մուրացիկ, այնտեղ թագաւորում է բռնութիւնը...»:

«Ազատութիւնը ըստ ինքեան խօսք է և իրողապէս չէ կարող մարմնանալ, առանց տնտեսական խնդրի լուծելուն: Ոչ մի ազատ կառավարութիւն, ոչ մի օրէնսդրութիւն չի կարող փրկել մարդը ստրկութիւնից, մինչև որ այդ մարդը հողի վրայ իրաւունք ունեցող չխոստովանուի...»:

Անյայտնի է ուրեմն տնտեսական խնդրի կարեւորաբանք հասարակական բնաշրջումի մէջ: Ընկերութիւնները չեն կրնար զարգանալ, յառաջադիմել, կատարելագործել առանց տնտեսական հաւասարութեան և ազատութեան: Համաշխարհային պատմութեան հրահանգն է այս և հասարակական գիտութեան իմաստուն խօսքը: Նալբանդեանց և անոր մեծանուն առաջնորդները գնահատութեան արժանի են այս ճշմարտութիւնը ցուցադրելու և պաշտպանելու համար: Սակայն թէ Նալբանդեանց և թէ

տաշնիններորդ արու մէկ քաղաքակալի իլիստօփայ-
ընկերաբաններ՝ կամենալով չեղտել աչք ճը-
մարտութիւնը՝ մտապայծառ ուրիշ ճշմարտու-
թիւն: Հասարակական բնաշխարհի համար և
Հասարակական յատկապէս թեանք մէջ, բացի
տնտեսական պղտորութենէն և յեղաշրջումէն՝
կարևոր է նաև քաղաքական իրաւական յեղա-
փոխութիւնը: Քաղաքական մարտի մէջ կար-
մը, իրաւական մայր կամ այն յարաբերութիւնը,
կառավարական այնպէս մարմնակերպութիւնը,
ազդեցութիւնը և անբարձրութիւնը և Հասարա-
կական և տնտեսական ամէն կարգի փոփոխե-
րու վրայ: Անոնք անարժէք մեծութիւններ չեն
և Հասարակական կեանքի դարձացման անհրա-
ժեշտ պայմաններէն են հոգ զմայ Գոտարի:

— Պրուդոնի, Բակունինի ծայրայեղ ու միա-
կողմանի աշխարհայեացքէն տարեկան և սու-
բանքեանց անդիտացաւ քաղաքական և իրաւա-
կան ազատութեան դարձական դերը, ազատու-
թիւն, որ նախապայմանն է տնտեսական ազա-
տութեան:

Այն Հանգամանքը, որ առանց տնտեսական
ազատութեան չկայ իսկական ազատութիւն—
չպիտի նւազեցնէ քաղաքական Հաւասարու-
թեան կարևոր նշանակութիւնը: Անկարելի է
մտաբերել Հակադրել մտն և անդիտանալ
վերջինիս արժէքը միայն անոր Համար, որ ա-
նիկա ամբողջ չէ:

Սակայն այս միակողմանի ու տարամերժ
աշխարհակայեացքը, քաղաքական ազատութեան
անարժէքութեան և անկարևորութեան դադարաբը մա-
սամբ ըմբռնելի էր այն ժամանակ:

Մարդիկ ամէն յոյս դրած էին քաղաքական
յեղաշրջումներու վրայ: Մարդկային բովանդակ

ազատութիւնը և ամբողջ երջանկութիւնը կը
սպասուէր քաղաքական և իրաւական կարգերու
փոփոխութեան: Իրականացաւ այդ յեղաշրջու-
թեամբ: Հասարակութիւնները, սակայն, վերջ-
նականապէս չազատեցան: Եզրակացութիւնը
փութկոտութեամբ Հրապարակ նետեցաւ:—
Քաղաքական կացմէն և կառավարական ձևերէն
օչնչ կտրուած չէ...:

Մեր ժամանակները, սակայն, սրբաբեցին
այդ սխալը և ընկերական զիտութիւններու
Համար այլ ևս վիճելի չէ քաղաքական ացա-
տութեան և քաղաքական Հաւասարութեան
անհրաժեշտութիւնն ու կարևորութիւնը պատ-
մական-Հասարակական-տնտեսական բնաշրջու-
մի մէջ...:

Հասարակական բարեկեցութեան և իրական
Հաւասարութեան Համար անհրաժեշտ է, որ բնա-
տնտեսական խնդիրը կարգադրել: Պէտք է քա-
ղաքականապէս ազատած ժողովուրդները
նիւթական ապրուստ ունենան, որպէսզի չը-
դառնան կամաւոր-ստրուկներ: Պէտք է տնտե-
սական յարաբերութիւններու մէջ նոր սիւղ-
բունքներ և նոր Համայնքներ իրագործել
այնպէս, որ աշխատուոր բազմութիւնը կարենայ
ապրել առանց ծախելու իր ազատութիւնը, ա-
ռանց վաճառելու իր իրաւունքը...:

Այս տեսակէտով անհրաժեշտ է նախ և ա-
ռաջ բոլոր Հողերը Համայնեցնել. ազգայնաց-
նել, դարձնել ընդհանուր սեփականութիւն:

Հողը անյիշատակ ժամանակներէ ի վեր կը
պատկանի ամենուն անխտիր: Բնութիւնը, եր-
կիրը ստեղծած են մարդկային պահանջներու
Համար Հաւասարապէս և ոչ ոք իրաւունք չունի

վերապահել միայն իրեն: Բռնութիւն, անիրաւութիւն կը գործէ ան, ով գրաւելով բնութեան մէկ հատւածը, երկրին մէկ կտորը, հողին մէկ չափը՝ իր իշխանութիւնը կը տնկէ հոն: «Աւագակութիւն է այդ, յափշտակութիւն է, քողութիւն է...»:

Մարդու իրաւունքները հողին վրայ անբռնաբարելի են, անկապտելի: Հողը պիտի պատկանի համայնքին, հասարակութեան, ազգին, պետութեան: Անհարը, մանուշակը, հողին տէր է: Ամէն մէկը կրնայ ազատօրէն տէր ըլլալ հողին բարիքէն, բայց տէր չի ըլլալ հողը, երբ անիւնը ի վրէնս միւսի—ոչ ոք չպիտի կարող ըլլայ:

Հողը անվճարօրէն պիտի մնայ: Ոչ ոք իրաւունք չունի վաճառքի նիւթ դարձնել գայն: «Եթէ հողը վաճառելու սկզբունքը թոյլ տրուի, այն ժամանակ աղքատութեան և թշուառութեան սկզբունքը կընդունուի...»:

Հողի հաւաքական սեփականութեան գաղափարին հետ անխղիւղ կերպով կապուած է անոր անվաճառելիութեան գաղափարը: Մէկը անոնց միւսի անըմբռնելի է:

Սակայն ինչպէս երբեք չի հողին համայնացումը, հողային սեփականութեան ազդայնացումը, ինչպէս ընել, որ հողը պատկանի ամենուն հաւասարապէս և դառնայ անվաճառելի:

Այստեղ է խնդրին ամենացաւոտ, ամենադժուար կողմը: Տիրող դասակարգերը, հողային հսկայական տարածութիւններու անիրաւ տէրերը սեփական կամքով կը թողուն արդեօք իրենց «դարաւոր ժառանգութիւնը», պէ՛տք է արդեօք ազդել անոնց փոփոխութեան վրայ խա-

ղաղ, կրթական միջոցներով: Պէ՛տք է արդեօք կոչում ընել անոնց, խղճմտանքին, բարոյականութեան, մարդասիրութեան: Արդեօք ինքնայօժար ու կամովին՝ անոնք կը հրաժարի՞ն իրենց սեփականութենէն՝ ի նպաստ ընդհանրութեան և աշխատաւոր բազմութեան:

Դրութիւնը յիրաւի ծանրակշիռ է: Պատմութիւնը մինչև օրս չէ արձանագրած տիրող դասակարգերու կողմէ այդպիսի «առաքինութիւն», այդպիսի ինքնաբուխ և անբռնադատ «մարդասիրութիւն»: Հասարակական բոլոր նւաճումները, հանրային արդարութիւնները կապուած են ձեռք բերուած անիրաւ և իշխող դասակարգերէն: Պայտա՞ն ու ոյ՞ն են եղած մինչև օրս իրականացնողը պատմական խոչոր յեղաշրջումները:

Նալբանդեանց ցանկալի քննութեան չէ ենթարկել այս կարևոր կէտը—մասնաւոր հողատիրութեան ոչնչացման և համայնական սեփականութեան վերականգնումի ճանապարհը:

Մէկ-երկու հատուած է կարելի է եզրակացնել, սակայն, որ մեր հրապարակագիրը գիտակցած է ընկերական յեղափոխութեան (revolution sociale) վճռական դերը այդ խնդրին մէջ:

Խօսելով Ռուսաստանի դժբախտ գիւղացիութեան վիճակի վրայ՝ Նալբանդեանց հետեւեալ բնորոշ խօսքերը կարտասանէ.

... Բայց այս ջերմախտական և լարեալ վիճակը անհնար է, որ լինի երկարատև: Եթէ վաղօրօք խելք գործ չը դուրս, ստրուկը եր հողով հանրէ՞րդ աշխատութեան է և այս կերպով այն կնճիռը չը լուծուի՝ ՍՍՐՈՒԿԸ ԿՍՏԻՆՈՎ ԿԸ ՎՃՌԷԳԻՆԻՍԸ...»:

Ապա մէկ ուրիշ տեղ խօսելով Եւրոպայի միլիոնաւոր աշխատաւորութեան, տառապանքների վրայ, «Երկրագործութեան» տաղանդաւոր հեղինակը այսպէս կը ներկայացնէ դրութիւնը:—

«... Եւրոպան կանգնած է այսօր մի դըժուար լուծանելի խնդրի առջև, այդ՝ տնտեսական խնդիրն է—մարդ և հողը: Եւ այդ խնդիրը կանուխ թէ ուշ, Բէէ ոռոկալի ֆոլիօքիկներով պիտի լուծուի: Ոչինչ բռնութիւն, ոչինչ պահպանողական համակարգութիւն, ոչինչ ընդդիմադրութիւն որ և իցէ կողմից չպիտի կարողանայ փակել նրա առաջը...»:

Այս երկու հատուածները մեզ հիմք կուտան կարծելու, որ Միջայէլ Նալբանդեանց տնտեսական յեղաշրջումներին մէջ կը տեսնէր, կը գիտակցէր «սոսկալի փոթորիկներու» անհրաժեշտութիւնը և «կացիներն» վճռականութիւնը: Սօցիալական յեղափոխութեան և հոգեբու Քոնֆարմիթեան սկզբունքն է ատիկա...:

Քարոզելով ընդհանուր հաւաքական սեփականութեան իրաւունքը հողի վրայ, երկարօրէն ու ջերմագին պաշտպանելով հողերու համայնացման գաղափարը—Միջայէլ Նալբանդեանց կանգ չէ առած. սակայն, արտադրութեան միւս գործիքներու արտադրաման վերայ չէ յիշատակած դրամագլխի, արդիւնաբերական միջոցներու համայնացումը:

Տնտեսական բարիքներու, արտադրական նիւթերու այս մասնակի ազգայնացումը պահասաւոր և թեթեւ է անկասկած, սակայն դրանով հանդերձ՝ ոչ մէկ հիմք չունինք կարծելու, որ Նալբանդեանց կողմնակից է եղած դրա-

մագլխի և արտադրական միւս գործիքներու մասնաւոր սեփականութեան: Խնդիրը այն է որ Նալբանդեանց չափազանցեալ կարծիք է ունեցած հողի տնտեսական դերի մասին: Անոր տեսութեամբ՝ հողային հարցի շարժումով և հողերու համայնացումով կը լուծուէր նաև տնտեսական խնդիրը և կը թագաւորէր իր անհրաժեշտութեանը: Տնտեսական ազատութիւնը, տնտեսական հաւասարութիւնը, տնտեսական յեղաշրջումը Նալբանդեանցի աշխարհայեացքի մէջ կը նորնանար հողային ազատութեան, հաւասարութեան և յեղաշրջումին:

Հասարակական այս միակողմանի տեսակէտէն կը սկզբնաւորւի անոր միակողմանի տնտեսագիտական տեսակէտը—երկրագործութեան միակ ու տարամէթ դերին վերաբերեալ: Եթէ հողի համայնացումը բաւական է տնտեսական ազատութեան համար՝ երկրագործութեան ալ, իբրև արտադրութեան ձև՝ բաւական է մարդոց պահանջներու համար...:

Հասարակութեան չափազանց փոքր մասը պիտի պարապի մշակութեամբ և արհեստով: Անոր մեծագոյն հատուածը—գրեթէ ամբողջութիւնը—պիտի անձնատուր ըլլայ բնական տնտեսութեան, հողագործութեան, որովհետև հոն է փրկութեան միակ գրաւականը:

«Երկրագործութեանը որդեւ սուրբ ճանապարհ»--Այս սկզբունքը կը դաւանի Նալբանդեանց և այս նախադասութիւնը կը դնէ իր գրքի ճակատին իբրև խորագիր:

«Ի՞նչ աղբիւրներից կարող է հանել հասարակ ժողովուրդը իր, չափնք հարստութիւնը, այլ ապրուստը, և ապրուստ հաւաստի, մըշ-

տնջենական և ոչ առօրեայ:—Հասարակ ժողովուրդի համար ուղղակի և մնացած մասին համար անուղղակի, բայց և այնպէս անհրաժեշտ ինչպէս ջուրը ձուկին համար, միակ ութէւրդ արօտի և հորօտութեան է երկրագործութեանը: Երբ որ մի ազգ կազմող անհատները մեծագոյն մասը պարապի երկրագործութեամբ և առ հասարակ գիւղական տնտեսութեամբ, այն ժամանակ այդ ազգի ընդհանրութիւնը հարուստ է և ապահովեալ, որովհետև նրա հիմքը դրւած է բնականապէս և բնութեան վրայ...»:

Բնութեան տնտեսութիւնը միակ տնտեսութիւնն է, որ կորուրէ ու կըօրէշտործէ: Ամենաչնչին հիւթով և ամենափոքր արժէքով կարելի է ահագին բարիքներ ստանալ բնութենէն: Երկրագործութիւնը տնտեսութեան այն միայնակ ձևն է, որ արտադրոյն (maximum) արօտութեան կերտալուարէ մշակողին: Միւս բոլոր ձևերը—արդիւնագործութեան, ճարտարութեան, վաճառականութեան, արհեստ—ոչինչ չեն արտադրեր կամ կարտադրեն չափազանց աննշան, չափազանց քիչ (minimum): Ինչ որ հիմնւած է բնութեան վրայ, ինչ որ կը զարգանայ հողի մէջ—բեղմնաւոր է և պտղաբեր: Ինչ որ հեռու է բնութենէն և ինչ որ հողագործութիւն չէ—սփռւ է և անպտուղ:

Երկրագործութիւնը արտադրութեան անպարտաւոր ձևն է և երկրագործը՝ ամենապտուղաբեր դասադասը:

Առևտրականութիւնն ու արդիւնագործութիւնը տնտեսութեան ամենամուլ ձևերն են և առևտրականն ու արդիւնագործը—սփռւած դասադասը (classes stériles):

Այսպէս էր Փիղիօկրատ տնտեսագէտներու սամունքը: Այս կը քարոզէին անոնք իրենց բազմաթիւ տնտեսական աշխատութիւններումէջ: Հողէ դուրս—փրկութիւն չկայ:

Միքայէլ Նալբանդեանց ամենայն հարստութեամբ իւրացուցած է անոնց գաղափարը և եռանդով պաշտպանած իր դրքին մէջ:

Այժմ հասկնալի կը դառնայ թէ՛ ինչո՞ւ մեր հրապարակագիրը կանգ կառնէր միայն հողերու համայնացման վրայ՝ սեփականութեան և բարիքներու հարցերը ուսումնասիրելու ժամանակ: Նալբանդեանցի հասարակական իտէալներն ու գաղափարները սերտ կերպով ձուլուած են անոր տնտեսական իտէալներուն և գաղափարներուն հետ: Քանի որ երկրագործութիւնն ուղիղ ճանապարհը, քանի որ բնական տնտեսութիւնն ու հողագործութիւնը միայն կրնան ապահովել «ազգին ընդհանրութիւնը» և «հասարակ ժողովուրդը»—կարևոր և անհրաժեշտ ուրեմն, հողերու հաւաքական սեփականութիւնն է:

Այսպիսով, հասարակական ուսմունքի միակողմանիութիւնը պատճառ է դարձեր տնտեսական ուսմունքի միակողմանիութեան:

Եւ յիշուի թէ Փիղիօկրատները և թէ Նալբանդեանց շատ են անգիտացած արդիւնագործութեան և առևտրի նշանակութիւնը:

Տասնիններորդ դարու երկրորդ կէտը, սակայն ցոյց տուաւ որ արդիւնագործութիւնը ոչ սփռւ ձև է տնտեսութեան և ոչ ալ արհամարելի քանակութիւն: Անիկա ցրեց նաև այն հասարակական նախապաշարմունքները, որոնք տարածւած էին վաճառականութեան շուրջը:

Մեծանուն քաղաքատնտեսները միւս կողմէ հերքեցին Ֆիզիոկրատներու ուսմունքը և — հակառակ անոնց — միահամուռ ընդգծեցին արդիւնագործութեան և վաճառականութեան խորունկ դերը . . . :

Եւ այսպէս՝ անվիճելի ու ակնյայտ դարուձայն բոլոր նշանակութիւնը և այն ահագին կարևորութիւնը, որ ունին Հասարակութիւններու կեանքի մէջ Նալբանդեանցի և Ֆիզիոկրատներու արհամարհած տնտեսական ձեւերը :

Ե .

Հասարակական, քաղաքական, տնտեսական այս ընդհանուր սկզբունքներու ցուցադրութենէն յետոյ՝ Նալբանդեանց կանցնի Թիւրքազայ կեանքին : Անոր գլխաւոր մտահոգութեան առարկան ոչ ամերիկաներու պատերազմն է, ոչ Անգլիոյ արդիւնագործական դրութիւնը և ոչ Ռուսիոյ ճորտական ուժի մը : Իր աշխատութեամբ Նալբանդեանց կամեցած է օգտակար ըլլալ մեր կեանքին ու մեր իրականութեան :

Թիւրքիան և Թիւրքազայոց վիճակը առանձին ուշադրութեան են արժանացած անոր երկին մէջ : Մէկ կողմ թողնելով քաղաքական և այլ խնդիրներ, Նալբանդեանց այստեղ ևս կանգ կառնէ միայն տնտեսական խնդրին վրայ :

Թիւրքիոյ դրամական-նիւթական կացութիւնը կատարեալ քայքայման է Հասած : Ահագին պարտքը, երկրագործութեան յետամնացութիւնը, հարկերու ծանրութիւնը, հազորդակցութիւններու անբաւարարութիւնը — Նալ-

բանդեանի բացատրութեամբ — մահւան են ենթարկեր այդ երկիրը :

Պետական ընդհանուր կեանքը անդառնալի ազդեցութիւն կունենայ բոլոր բնակիչներու վրայ : Հայերն ալ — իբրև այդ պետութեան մասերէն մին — ենթակայ են անոր տնտեսական տագնապին :

Չափազանց եղերական կերպարանքով կը ներկայանայ Նալբանդեանցին Հայերու վիճակը : Ոչ մէկ Հասարակական դասակարգ չը կայ, որ ընդունակ ըլլայ հոգալ ազգի մեծամասնութեան ապրուստը :

Արհեստագործները իրենց տնտեսութեան բնոյթով իսկ — մանր ու աննշան — չեն կրնար ընդհանրական նշանակութիւն ունենալ և մեր ժողովրդի բարեկեցութեան հիմքերը ապահովել :

Անոնց դերը տնտեսական կեանքին մէջ սահմանափակ է և երերորդական :

Բնականութեանը՝ առանց նիւթի և առանց հողի, առանց որոշ միջավայրի ու մասնագիտութեան, պատահական խմբեր են, անհաստատ ու թափառական : Ունենալով երկու ոտք և երկու ձեռք միայն — այսինքն աշխատութեան նախնական ու բիրտ կարողութիւն — անոնք կը վազեն բոլոր այն վայրերը, ուր ժամանակաւորապէս կը կանչին և դէպի այն գործատէրերը, որոնք ժամանակաւորապէս նոցա պէտքը ունին :

Բնակիչները այն երերուն, փոփոխական, տատանող և աստանդական դասակարգն է, որ երբէք չի կրնար հանրային դեր խաղալ, Հասարակական լայն կարևորութիւն ստանալ և ժողովրդի մը տնտեսական կեանքի հիմք դառնալ :

Թէ արհեստաւորներու և թէ բեռնակիրներու հասարական—աւելայն՝ օգուտը հեռու է առաջնակարգ ըլլալէ... Կը մնան երկու դասակարգ—երկրօգործ և վաճառական. Ասոնք երկուքն ալ բարձր են անկասկած առաջիններէն, սակայն իրարու նկատմամբ ասոնք ալ տարբեր արժէք և տարբեր կարևորութիւն կը ներկայացնեն:

Հայ վաճառականը Եւրոպային ազդակն է: Զուրկ կանոնաւոր դրամագլխէ, զուրկ սեփական ապրանքէ՝ անիկա կը վաճառէ Եւրոպացիներու ապրանքը: Միջնորդութիւն է ատիկա և ոչ իսկական վաճառականութիւն. Ծառայութիւն Եւրոպացիին և ոչ իրեն կամ իր ազգին:

Վաճառելով Եւրոպական ապրանքը Հայերու կամ թիւրքիոյ միւս ազգերու մէջ՝ առևտրականը կը ժողովէ «Հասարակ ժողովուրդէն» հնչուն դրամը և կուղարկէ Եւրոպա:

Ո՛չ իր մօտ կը մնայ դրամը և ո՛չ ժողովուրդին մէջ...

Ինքը շատ յաճախ կը կորսնցնէ նաև իր սեփական փոքրիկ դրամագլուխը, որ դրած էր առևտրի մէջ և որ ենթակայ էր բիւրաւոր աննպաստ պայմաններու:

Եւրոպացի գործատէրը, մեծ վաճառականը կը շտապեցնեն, կը պահանջեն իրենց ապրանքի ամբողջ արժէքը, մինչդեռ Հայ մանր վաճառականը, նստած աղքատ միջավայրի մը մէջ, չի կրնար ո՛չ վաճառել ունեցած ապրանքը և ոչ վաճառել դրամը ձեռք բերել: Հարկադրւած կըսկսի վաճառել ապրանքը, ինչպէս և ըլլայ առանց վաստակի, նոյն իսկ արժէքէն պակաս, որպէսզի կարենայ ո և է ձեռով դրամ ժողովել և պարտքը հատուցանել խտտաբարոյ Եւրոպացիին:

«Վաճառականութեան մէջ շահը և օգուտը որքան ընթացք ևս կատարէ, որքան դանաղան շրջաններ առնու, ի վերջոյ, հականապէս, կեդրոնանում է այնտեղ, որտեղից դուրս ելաւ այն ապրանքը կամ գումարը: Զօրութիւն, ուժը այնտեղ է, ուր դրամագլուխը կամ ապրանքը կայ: Առնողը տկար է քան թէ տուողը, առնողը կարօտ է, քանզի ոչինչ չունի...»:

Այսպէս վաճառականութիւնը Հայ կեանքին մէջ ոչ մէկ Հասարակական օգուտ չի ներկայացնէր: Ժողովուրդի մեծամասնութեան ընդրութեան համար անիկա ոչ միայն բարեբար չէ, այլ և կործանարար է: Փոխանակ դրամ կեդրոնացնելու «Հասարակ ժողովուրդի» մէջ՝ անիկա եղած դրամը կը հաւաքէ և կուղարկէ օտար երկիրներ:

Վաճառականութիւնը օգտաւէտ չէ նաև վաճառականին համար անհատապէս: Եթէ անոր առևտուրը տեղի ունենար երկու հաւասարապէս կրթւած երկիրներու միջև, «եթէ Հայը միջնորդ կամ գործակատար լինէր երկու Համագոր աշխարհների մէջ, գուցէ կարողանար ապահով ապրիլ, թէև միմիայն իր համար, այսինքն առանց նազգի ընդհանրութեան օգուտ բերելու...»:

Բայց քանի որ Հայերու վաճառականութիւնը Եւրոպայի և Թուրքիոյ մէջ կը փոխանակւի—Նալբանդեանցի խորհրդածութեամբ—անհնարին է որ և է օգուտ, որ և է շահ կանկալել այդ վաճառականութենէն:

Ժողովուրդը աղքատութեան մէջ է, ազգը մօտ մահուան, ընդհանուր կացութիւնը խախտւած, հաւախարակչիւրը կորած է:

Եւ սակայն ոչ թիւրք պետութիւնը և ոչ ինքը հայ հասարակութիւնը չեն կրնար աշխատիր ամոքել թշւառութիւնը, կանխել կորուստը, ացատել հանրութիւնը:

ԲեմնԱկիրները անգոր են պահելու «Հասարակ ժողովրդին» կեանքը, ԱՐՀԵՍՏԱԻՈՐՆԵՐԸ ի վիճակի չեն ծառայելու ազգի մեծամասնութեան համար, ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ապիկար հանդիսացաւ հանրային պաշտօնի մէջ: Ու չի նայելով այս պարագային՝ ամէնքն ալ կերթան դէպի քաղաքները—դէպի բեռնակրութիւն և վաճառականութիւնը:

«... Այս անբնական մի գործ է, և ազգի կաթլածահարութեան աղբիւրը բղխում է այս տեղից: Մինչև ազգը չը կտորէ այս ուղղութիւնը, մինչև որ նա չը կատարէ մի տնտեսական յեղափոխութիւն իր մինչև այսօր բռնած ընթացքին մէջ և մինչև չդիմէ դէպի քաղաքները, յառաջդիմութիւն աներեւակայելի է: Թող հազարաւոր դառնայ հարուստ անհատներ թիւը, թող հարիւրաւոր լինի եւրոպական դրպորոցներ մէջ կրթութիւն ստացողների թիւը, ի վերայ այս ամենայնի, ազգի ընդհանրութիւնը կը մնայ անշարժ և անբաժանուած:»

«Այն օրէնց դէպի ԲեմնԱկիրներն ուրբո՞ւնեան դարձուցիւ, երբ ալէք դեմէ դեպի ԲեմնԱկիրները, որ ոչ միայն կարող է փրկել և ազատել ազգը աղքատութիւնից, այլ և մեծ զարկ տալ նրան յառաջդէմ ուղղութեան մէջ: — Բնութեան մէջ չը կան այն վտանգները, ինչ որ կան մեքենական վաճառականութեան մէջ, այնտեղ մարդ ապահովեալ է բնութեան օրէնքով: Այն մարդը, որ բնութեան հետ գործ ունի, որ անմիջապէս հո-

ղից ստանում է բնութեան բերքերը, և նաքան նրա նիւթական ոյժը և կարողութիւնը, հաստատէ իր ոտքի վրայ, նա կարօտ չէ ուրիշին, դրա փոխանակ ուրիշը կարօտ է նրան...»

Քննելով ուրեմն թիւրքի տնտեսական դրութիւնը, վերլուծելով թիւրքահայ դասակարգերու հասարակական-տնտեսական դերը, դատելով անոնց անհատական և հանրային օգտակարութիւնը—Միքայէլ Նալբանդեանց վերջ ի վերջոյ կը դառնայ իր ընդհանուր աշխարհահայեացքին: Հայ կեանքի նկատմամբ ևս և մանաւանդ մեր միջավայրի համար՝ անիկա կը գտնէ ուրեմն, որ փրկութեան միակ միջոցը երկրագործութիւնն է:

Եւ այստեղ մեր կարծիքով, Նալբանդեանցի տնտեսական ուսմունքը աւելի մօտ է իրականութեան, քան եւրոպական ցամաքի վրայ:

Երկրագործութիւնը այն առաջնակարգ կարևորութիւնը չունի անկասկած հոն, ուր արդիւնագործութիւնն ու ճարտարարեստը հսկայական կատարելագործութեան են հասած: Եւ ընդհակառակը մեր երկրի մէջ, ուր տնտեսութիւնը էականապէս հողային է և ուր որ մուտք չէ գործած տակաւին բարձր արդիւնաբերութիւնը—երկրագործութեան դերը աւելի նշանակալից և աւելի վճռական է:

«Ազգը, լաւ ու վատ, փորձեց մինչև այժմ վաճառականութիւնը, նա փորձեց և վարձկանութիւնը, սրանցից հետեւեցաւ նրա կեանքի աւերանքը, որի տակ այսօր ճնշում է միջաբեկ— Հիմնական և խելացի հնարը փրկութեան, ուրիշ բան չէ կարող լինել, եթէ ոչ դառնալ իր նախկին կացութեանը հօշը և երկրագործութեանը կարող են նրան փրկել...»:

Եւ իրօք, Թիւրքահայերու հասարակական-տնտեսական կեանքի բարելոււման համար երկրագործութեան նշանակութիւնը ահագին է:

Այս բոլորի մէջ կայ ճշմարտութեան խոշոր բաժինը: Տնտեսական խնդրի կարևորութիւնը աւ հասարակ և երկրագործութեան դերը ցուցմանուած է տաղանդով: Հայ հրապարակագրութեան մէջ Նալբանդեանցի այդ տաք, ներշնչած, գգայուն և համոզիչ էջերը բացառիկ գնահատութեան են արժանի:

Սակայն, եթէ այդքան անհրաժեշտ է երկրագործութիւնը Թիւրքահայոց համար, ի՞նչ է պատճառը, որ կեանքի մէջ լայնօրէն չի գործադրւիր ի՞նչ է պատճառը, որ երկրագործը, սիւղացին կը թողու իր տունը, այգին, դաշտը և կը կեդրոնանայ քաղաքներու մէջ:

Միքայէլ Նալբանդեանց այս երևոյթի իսկական պատճառը կը համարէ սովորութիւնը և հայու քնատրտութիւնը:

Նկարագրելով պանդուխտ հայաստանցու իշխառութիւնը օտարութեան մէջ, ծնողներու մտէն յետոյ՝ Նալբանդեանց հետեւել դառն խօսքերը-կարտասանէ անոր.

«Լա՛ց, պանդուխտ, բնական զգացողութեամբ չես կարող չաց չլինել: Բայց ո՞ւր ո՞ւր չես, Բայց ո՞ւր ո՞ւր չես, Բայց ո՞ւր ո՞ւր չես, Բայց ո՞ւր ո՞ւր չես, Բայց ո՞ւր ո՞ւր չես...»:

Ս. Գ. Ընդունելով, որ ճանապարհներու հարողակցութեան անբաւարարութիւնը կամ աւելի նիւտ, բացակայութիւնը երկրագործութեան զարգացման համար աննպաստ պայմանն է, ցոյց տալով որ Փոքր-Հայաստանի մէջ, Սև

ծովի և Միջերկրականին մօտ, քաղմութիւյս մար տեղեր կան, ներկայացնելով մեր երկրի բուսական և կենդանական փարթամութիւնը, բերքերու առատութիւնը՝ Նալբանդեանց կաւելաց նէ.

«... Այս անուանած բերքերից, գէթ երկուքը կամ երեքը բաւական է հարստացնել մի քաղմութիւն, որ արիւղան, փութով պարագում է այն նւիրական գործով (այսինքն երկրագործութեամբ): Ո՛ւր արդեօք, կարող են անվաճառ մնալ և մնաս տալ երկրագործին բամպակը, մետաքսը, շաքարը, ցորենը և այլն: Մենք չենք կարող թոյլ տալ՝ թէ հայոց ազգը չգիտէ այս: Բայց մեանքս սովորութիւն է եղել նրան այս ճանապարհը, որով մեանք է, և այժմ ծանր է շարժում դէպի մի այլ ուղղութիւն: Ահագին տխրութեան ամպ ծանրանում է մեր սրտի վրայ երբ մտածում ենք թէ Անգլիային գնում է կանառ, Աւստրալիա, Հնդկաստան. ֆրանսացին թողնում է իր միշտ անհոգ, միշտ ուրախ և միշտ գլարն Փարիզը և գնում է Ափրիկէի դժօխային գօտիների տակ, մի կտոր հող ճանկելու և նրա մշակութեամբ իր ապագան ապահովելու, մեր սիրելի հայը և ոչ մի անգամ կամի մտածել իր ապագայի վրայ, նա թողնում է իր երկիրները և գեդրոնանում է քաղաքներում...»:

Ի՞նչ կը հետևէ այս ամենէն:

Թիւրքահայերը երկրագործութեամբ չեն պարապեր, որովհետև «չեն կամենար անգամ մը տածել իրենց ապագային վրայ», որովհետև «մի անգամ սովորութիւն էր եղել այն ճանապարհը, որով գնում էն»: Թիւրքահայերը մշակութիւն

չեն ըներ, որովհետև անոնց քնարութիւնը տարբեր է ֆրանսացիէն, անգլիացիէն :

Նալբանդեանցի այս բացատրութիւնը սխալ է և միակողմանի : Այնքան բազմակնճիւռ և այնքան բարդ երևոյթի միակ պատճառը անիկա անհատի ներքին կեանքի մէջ կը տեսնէ : Արտաքին ծանրակիւս աշխատանքը տեղ չունին այդ բացատրութեան մէջ : Ինքը թիւրքահայն է իր դժբախտութեան միակ պատճառը . . . իր սովորութեամբ, իր բնաւորութեամբ, իր կամքով :

Մինչդեռ թիւրքահայերը նւազ չարքաչ և նւազ աշխատաւոր չեն ֆրանսացիէն, որ կերթայ մշակելու Ափրիկէի դժոխային գօտիներու տակ : Թիւրքահայերը ևս կը կամենան արիւժան և փութով պարագիլ այն նւիրական գործով : Թիւրքահայերու համար ևս հաճելի չէ պանդխտութեան և բեռնակրութեան հոգեմաշ և սրտատոչոր դառնութիւնը . . .

Եւ եթէ այնուամենայնիւ այսպէս է, եթէ անոնց երկրագործութեան զարգացումն ու կատարելութիւնը ողորմելի է՝ ատոր զլխաւոր պատճառը օստրոթիւնն է, քնարութիւնն է, կամեցողութիւնն աւելի ուրիշ տեղ պէտք է որոնել :

Թիւրքիոյ քաղաքական ուժովը, կառավարութեան ձեւը, երկրին հասարակական պայմանները, հողային յարաբերութիւնները և այլն ընդհանուր պատճառներ աւելի վճռական և աւելի խորունկ դեր ունին երկրագործութեան յետամնացութեան մէջ, քան հայերու կամքը, սովորութիւնը և բնաւորութիւնը :

Որովհետև դժուար է իրօք երևակայել թէ սեփական կամքով ու քնասակար սովորութեամբ միայն՝ թիւրքահայերը կը խուսափին այն ամէն

տնտեսութենէն, ինչ որ իրենց գոյութեան զրաւականներն են և կեանքին խարխիւր :

Եւ այսպէս, երկրագործութեան զարգացման ու կատարելութեան համար, Նալբանդեանց անհրաժեշտ չէ համարեր քաղաքական յետամնաց կարգերու տապալումը, կառավարութեան ուժի մին փոփոխութիւնը, թիւրք պետութեան վերածնունդը առհասարակ : Անոր համար բաւական է, որ հայը իր սովորութիւնը փոխէ և իր կամքը ամրապնդէ :

Որքան ալ ծանօթ ըլլայ մեզի Նալբանդեանցին քաղաքական տարամերժ ու միակողմանի աշխարհայեացքը, որքան ալ զիտնանք անոր անտարբերութիւնը ընդհանրապէս քաղաքական այս կամ այն ձևին վերաբերեալ, այնուամենայնիւ մենք դժուարաւ կը հասկնանք թէ ի՞նչպէս է կրցած Նալբանդեանց արհամարհել այնքան ցայտուն, այնքան շեշտած, այնքան ակնյայտ բացասական գործօն մը — թուրք բռնակատութեան գոյութիւնը :

Ո՞չ ապաքէն այդ ուժի մին անկումը երկրագործութեան զարգացման առաջին քայլը պիտի կազմէր, ու չէ՞ որ տնտեսական շատ թէ քիչ տանելի յարաբերութիւններու համար քաղաքական նպաստաւոր պայմանները բացարձակ անհրաժեշտութիւն են :

Մոռնալով քաղաքական գործօնին կարևորութիւնը, մենք յոյս ունէինք թէ Նալբանդեանց չպիտի մոռնար հողային յարաբերութիւններու արմատական յեղաշրջման անհրաժեշտութիւնը : Յիրաւի, եթէ երկրի մը երկրագործութեան զարգացումը օւշափէ կերպով և անփշապէս կապուած չէ անոր քաղաքական ուժի մին

Հետ—ապա չենք կրնար երևակայել որ և է երկ-
րագործական կատարելութիւն՝ առանց հողերու
արդար բաժանման:

Հոն, ուր հողերը կը պատկանին սակաւա-
թիւ կալւածատէրերու, հոն, ուր հողը մշակո-
ղին, հողագործին սեփականութիւնը չէ—երկ-
րագործութիւնը «ամուլ և անօգուտ» տնտե-
սութիւն է, անիկա բնաւ փրկութեան ուղիղ
ճանապարհը չէ...

Միքայէլ Նալբանդեանց ընդունելով հողե-
րու համայնացման սկզբունքը, պաշտպանելով
հողերու հաւաքական սեփականութեան գաղա-
փարը ընդհանրապէս՝ մեր Ռիջալայրին համար
չեշտած չէ այդ համայնացման անձնական իրաւորածը:

Այստեղ չկայ ոչ սօցիալական յեղափոխու-
թեան քարոզը և ոչ ալ հողերու արտագրաւ-
ման պահանջը:

Իր առաջարկած միջոցներու նկատմամբ՝
Նալբանդեանց աշխատած է գործնական ըլլալ,
անձնական իրաւորածներ կայացնել, համետ
պահանջներ ընել, որովք վրիպած են այնուա-
մենայնիւ, հակառակ իրենց համեստութեան,
և գուցէ մասամբ այդ պատճառով:

Երկրագործութեան զարգացման համար
Նալբանդեանց կարևոր կը գտնէ դրամային օժան-
դակութիւնը:

«Հայոց հասարակ ժողովուրդը աչտաչ է և
չունենալով ոչինչ հորուստի՝ հազիւ հազ սեր-
մանում է և հնձում է այնքան, որքանը նրա
տարեկան ապրուստը, զիարդ և իցէ, պիտի կա-
րողանար ապահովել...»

Եթէ Հայ շինականի ձեռքը մի փոքր դրամ
անցանէ, եթէ նա յոյս ունենայ, որ իր աշխա-

տութիւնը պիտի գնահատուի, եթէ նա տեսնէ իր
մշակութեան պտուղը, ո՛չ ապաքէն կրկնապա-
տիկ կըսկսի ցանել, կրկնապատիկ հնձել: Ո՛չ
ապաքէն դաշտերը կը մշակին և ժողովուրդը
մի փոքր ազատ շունչ կանոնու...»:

Սակայն Հարց է. ո՞վ պիտի հոգայ այդ պա-
կասը, ո՞վ պիտի դիւզացու աղքատ ու ողորմե-
լի տնտեսութեան մէջ դրամի շրջանառութիւնը
մտցնէ: Ուրիշ խօսելով՝ ո՞վ պիտի երկրագոր-
ծութիւնը արդիւնաւէտ, օգտակար, բեղմնաւոր
դարձնէ ազգին ընդհանրութեան և «հասարակ
ժողովուրդին» համար:

«Վաճառականը կամ փոքր իշատէ կարողու-
թեան տէր մարդը, պատասխանում ենք մենք.
կը գրէ Նալբանդեանց:—Վաճառականը ոչ ա-
պաքէն դրամ է տալիս իր վաճառելի ապրանքը
ձեռք բերելու համար: Ո՞չ ապաքէն ունի մի
քանի փարա, որի շրջանառութեամբ ապրում է
նաև նրա ընտանիքը:—Կարողութեան տէր մար-
դը ո՞չ ապաքէն իր արծաթը դնում է սեղա-
նաւորի մօտ, կամ տալիս է մասնաւոր մար-
դերի տոկոս ստանալու ակնկալութեամբ:

Վաճառականը փոխանակ Եւրոպայի ձեռա-
գործքը գնելու և փոխանակ պատահարներ ձեռ-
քում խաղալիք դառնալու՝ կարող է ամենայն
վստահութեամբ հում նիւթեր առնող Հայ երկ-
րագործից, ապրանք ապսպրել նրան, մանր-
մունք գումարներ տալ յառաջուց այս կամ այն
չինականին և հունձքից յետոյ ապրանք ստա-
նալ փոխարէն: Կարողութեան տէր մարդը նոյն
այս ճանապարհով կարող է ամեցնել իր գու-
մարը: Եւ եթէ չկամի նա ապրանքը պահել իր
ձեռքում, մի րոպէի մէջ կամեցաւ և ահա պատ-

րաստ են վաճառականք գնել նրա ապրանքը: Այս ճանապարհով միայն դրամի չըջանառութիւնը կը մտնէ ազգի մէջ, այս ճանապարհով միայն ազգը կարող է բարւոքել իր տնտեսական վիճակը, այս ճանապարհով նիւթական ոյժը կանցնի ազգի ձեռքը...»:

Ինչպէս կը տեսնէք Նալբանդեանց անհրաժեշտ ու օգտակար կը գտնէ վաճառականի և կարողութեան տէր մարդու մասնակցութիւնը՝ գիւղական տնտեսութեան և հասարակ ժողովրդի երջանկութեան համար: Փրկութեան այս ձևը, սակայն, մեզ կերնայ բուսական կասկածելի և ոչ մէկ յոյս չի ներշնչեր: Ու կը զարմանանք թէ ի՞նչպէս Նալբանդեանց, իր հասարակական-տնտեսական այդ արմատական աշխարհահայեացքով կրցած է այսքան անհամարձակ ըլլալ:

Վաճառականի և դրամատիրոջ օժանդակութեան էն յետոյ, Նալբանդեանց կանգ կառնու համեմատաբար աւելի օգտակար միջոցի մը վրայ:

«Մինչև այժմ, հայոց ազգի մէջ, խախուտ և անհիմն վաճառականութեան խորհրդով հիմնըւեցան մեծ կամ փոքր ընկերութիւններ, ներանցից ոմանք ընկան դէպքերի հարւածի տակ ոմանք մնում են կիսամեռ, բայց մինչև այժմ չերևեցաւ և ոչ-մի ընկերութիւն, որ պարագէր երկրագործութեամբ և երկրագործական բերքերի մշակութեամբ»:

Անկասկած ընկերութիւններու նշանակութիւնը և երկրագործական միութիւններու դերը տնտեսական կեանքի մէջ աւելի հիմնական գործօն է, քան վաճառականի և դրամատիրոջ

կասկածելի օժանդակութիւնը: Սակայն իրական դառնալու համար, անիկա ալ պէտք ունի քաղաքական նպաստաւոր ուժերի, հիշային արդար յարաբերութիւններու և առհասարակ հասարակականապէս և մտաւորապէս թիւրքիսյէն աւելի բարձր միջավայրի մը:

Այսպէս, Նալբանդեանցին առաջարկած միջոցները անկարող են Հիմնական, արմատական փոփոխութիւններ մտցնել երկրագործութեան մէջ և զայն դարձնել փրկութեան ուղիղ ճանապարհ:

Չնայելով յիշեալ թերութիւններուն՝ Նալբանդեանցի «Երկրագործութեան» այս մասը շատ կարևոր սկզբունքներ կը ցուցադրէ թիւրքահայոց հասարակական-տնտեսական զարգացման վերաբերեալ: Տակաւին կէս դար առաջ անիկա կրցած է հասկնալ և պաշտպանել հողային խնդրի և երկրագործութեան նշանակութիւնը թիւրքահայերու կեանքին մէջ: Անիկա կրցած է որոշել մեր երկրի տնտեսական ընթացքը, մեր ազագայի ուղղութիւնը:

Այսօր, յիսուն տարի յետոյ, սահմանադրական ուժերի տակ, ինչ որ կընեն, ու ինչ որ կըսեն Հայ Ընկերվարական-Յեղափոխական կուսակցութիւնները տնտեսական-հողային խնդրին վերաբերեալ—անոնք Միքայէլ Նալբանդեանցի գաղափարներու և սկզբունքներու շարունակութիւնն են ու ԶԱՐԳԱՅՈՒՄԸ...:

2.

Ահագին կարևորութիւն տալով տնտեսական նիւթական խնդրին հասարակութիւններու կեանքին մէջ՝ Միքայէլ Նալբանդեանց աշխատած է

ընդհանրացնել իր տեսակէտները, դնել համապատասխան փիլիսոփայական ուսմունքի վրայ: Անիկա ձգտած է ներկայացնել իր ընթերցողներուն տնտեսական խնդրի փիլիսոփայական պաշտպանութիւնն ու հիմնաւորումը:

Այստեղ դերմանացի նիւթապաշտ փիլիսոփայ Ֆէյոյրբախի ազդեցութիւնը զգալի է:

Այդ իմաստասիրութեան առարկան անբովանդակ ու դատարկ երկնք է, այլ երկրք՝ վերացական, անշօշափելի արտաձուլանք է, այլ իրական, շօշափելի ճարտարութիւնը:

Մտահայեաց փիլիսոփայութիւնը արժէք չունի մեր օրերում: Այն փիլիսոփայութիւնը, որ անմիջապէս չի բղխում մարդկային կեանքից և որ չէ դադարում դարձեալ մարդկային կեանքի վրայ, քանի որ մարդը ապրում է և օդ է շնչում, մենք հրատարակում ենք նրան իմաստակութիւն և խաբէութիւն: Մարդն է փիլիսոփայութեան և՛ հեղինակը և՛ առարկան:

Անցան այն ժամանակները, երբ մի տեսակ երկարաքղանցք, խորամանկութեամբ փրելով մարդկային բանականութեան, եզրպտական առեղծւածներով պտղամ էին կարգում նրան. անցան այն ժամանակները, երբ մտածում էին պարզամիտ մարդիկ թէ օդի անշափելի բարձրութեան մէջ է դրած փիլիսոփայութեան աթոռը: Սո՛ւտ. փիլիսոփայութիւնը երկրագնդի վրայ է: Մարդն է նրա աթոռը. մարդն է նրա և՛ քննողը և՛ քննելին...»

Մանրամասն կանգ չառնելով այս բնորոշ պարբերութեան գնահատման ու քննութեան վրայ՝ մատնանշ ենք, որ բնագանցական-կրօնական փիլիսոփայութեան ծայրայեղ ու միակող-

մանի հակահարւածն է ան: Մարդը, ուրեմն, — ըստ նալբանդեանցի և ըստ իր վարպետներու — փիլիսոփայութեան միակ առարկան և միակ քննելին պիտի ըլլայ: Անցնինք:

Անոր գոյութեան համար ամենէն աւելի անհրաժեշտ է ներքին գոյութիւնը:

«Բայց մարդը առաջ քան թէ պիտի գոյանայ, առաջ քան թէ պիտի սպրի, առաջ քան թէ պիտի քննէ ու իմաստասիրէ իր անձը, իր կեանքը, իր անցուցածը, իր նեխան, և առաջ քան թէ պիտի մտածէ իր ապագայի մասին, այդ բոլորից առաջ մարդը կարօ է նիւթի: Առանց ճարձի չկայ շօշափելի կենդանութիւն, իսկ մարմինը նիւթ է — և մարմնի ու մարդու կեանքը նիւթերու անդադար փոխան կութիւն: Այսպէս՝ խօսելով չենք մերժում արդկային կեանքի բարոյական կողմը, այլ կասեցում ենք ասել թէ մարդը նախ և առաջ կենդանի է և ապա բարոյական էակ:

Նիւթական և հոգեկան մարդու յաւիտենական առեղծւածն է աս, անոնցմշտական համախմբութիւնը:

Ո՞րն է առաջինը, ո՞րն է իշխողը, ո՞րն է հիմունքը: Արդեօք հոգին, արդեօք մարմինը, արդեօք միտքը, արդեօք նիւթը:

Մարդկութիւնը իր յարատև ոյնումներու մէջ հանդէս է բերած և՛ ծայրայն նիւթապաշտներ, (materialiste), և՛ տարաբարձ ոգեպաշտներ (spiritualiste):

Ոմանք մարդու գոյութեան հիւրը, սկզբունքը, հուսկիւնը գտած են նիւթն մէջ, ոմանք ոգու մէջ: Ոմանք քարոզած են նիւթին գերագօրութիւնը, միւսները ոգու սփռու-

թիւնը : Ու միշտ խնդիրը քննած են իբրև պատ-
ճառի ու միջոցների յարաբերութիւն , իբրև
աղբիւրի ու արդիւնքի առնչութիւն :

Նալբանդեանց իր փիլիսոփայական աշխար-
հայեացքով կը յայտնի թասաշտնիւրու դպրո-
ցին : Անոր համար նիւթք մարմինը առաջինն
է , սկզբնականը , էութիւնը :

Նորագոյն փիլիսոփայութիւնը խնդիրը ա-
ւելի իրական, աւելի գիտական հողի վրայ
գրաւ : Այդ փիլիսոփայութեան համար պատ-
ճառի խնդիր չկայ : Հոգեկան և նիւթական
կեանքը բնական, սնխախտ հաւասարակչոյ մէջ
է : Երկու ոյժերու և կարողութիւններու ձու-
լումն ու փոխադարձ յարաբերութիւնն է մար-
դու բովանդակութիւնը : Մէկը չկայ առանց
միւսի : Մէկը արձառ չէ , միւսը հետեանք :
Մէկը աղբիւր է , միւսը արդիւնք :

Նորագոյն փիլիսոփայութիւնը հակառակ
նիւթապաշտնիու և ոգեպաշտներու՝ ընդու-
նած է աւելիբնական տեսակէտ՝ երկու էութիւններու ,
ոգեկանի և նիւթականի յարատեւ
համագոյութիւնն ու համադրութիւնը :



Տեսեսաւան խնդրի փիլիսոփայական ընդ-
հանրացումն յետոյ՝ Նալբանդեանց կ'անցնի
ազգային նորի լուսարանութեան :

«Երկրորդութեան» ամենակարեւոր էջե-
րէն կը կտրուէ այդ բարդ ու աղմկոտ հարցի
քննութիւնը , ուր Նալբանդեան հանդէս կը բե-
րէ լուրջ ուղղւած , խելացի տեսակէտ :

Քարկելով ու պաշտպանելով մարդո-
սկզբունք առհասարակ և տնտեսական խնդրի
առաջնութիւնը , դաւանելով աշխատաւորական

դասերու ազատագրման իտէալը՝ Նալբանդեան
անտարբեր է արդեօք դէպի ազգային խնդիրը :
Կամ ուրիշ խօսքով՝ միջազգայնութեան ու ազ-
գայնութեան դադափարները իրար հանդէպ
հիմնական ու անհրաժեշտ հակասութեան մէջ
են արդեօք : Աշխատաւորական սկզբունքը և
դասակարգային գիտակցութիւնը ընդդէմ են
արդեօք ազգային զգացումներուն , ազգային
գիտակցութեան :

Պէտք է արդեօք հետամուտ ըլլանք ազ-
գային առանձնայատկութիւնը , ազգային ան-
հատականութիւնը պահպանել և անոր զարգ-
ացման համար աշխատիլ , թէ՛ պէտք է լեզու
ազգութիւնը , իբրև հին դարերու վիսսակար
նախապաշարում :

Նալբանդեանց իբրև աշխատաւոր դասա-
կարգերու ամենաջերմ տեսաբան՝ ազգային
զարգացման ամենաանկեղծ նախանձախնդիրն
է միաժամանակ : Անոր համար ազգային խըն-
դիրը ընկերաբանութեան ամենակնճոռոտ ա-
ռեղծւածն է և երբեք չի կարող լուծելի մէկ
ազգութեան դանկով ու կամքով միայն :

«Կարող են դիմադրել մեզ , որ եթէ մեր
հայեացքով միայն «մարդ» և «հաց» կայ
աշխարհիս երեսին , եթէ մենք մի կտոր հողի
վրայ քարոզում ենք հաւասար իրաւունք , ու-
րեմն ազգութեան խնդիրը և ուշադրութեան
արժանի բան չէ . մարդ ապրել է հացի անու-
նով թէ մի ուրիշ անունով , դարձեալ միևնոյն
մարտն է : Այո՛ , եթէ հաւասար իրաւունք այ-
սօր խոստովանուի երկրազնդի վրայ , եթէ ներ-
կայ եղած պետական համակարգութիւնք այ-
սօր ոչնչանան , վաղը ոչ միայն չի մնում ազ-

գուլթեան խնդիրը, այլ հարկաւոր ևս չէ: Բայց այս է բանը, որ դրան հասնելը ժամանակի է կարօտ, և միայն այն ժամանակ «արքայութիւն Աստուծոյ բռնաբարի և բռունցք յափշտակեն զնա...»: Մենք ուրախ չենք որ այսպէս է լինում, մենք ուրախ չենք որ մի ազգ ճնշում է, հարստահարում է միւս ազգը և իր զէնքով սահման է դնում նրա հողի վրայ, բայց որովհետեւ մեր տրտմութիւնը ոչինչ է, համեմատելով այն մինչև այժմ եղած կարգի հետ, ուստի մեր կարողութիւնքը ուղղում ենք մեր ազգութիւնը պաշտպանելու համար: Եւ մեր ամենիս պարտքն է մինչև այն ժամանակ մնալ ազգութեան դրօշի տակ, որքան ուրիշը կրում է իր սեփական ազգութեան դրօշը: Բայց այս ասելով կամք չունինք ազգութիւնը կոյր Փանատիկոսութիւն (մոլեռանդութիւն) դարձնել: Հերիք է որչափ կոյր և Փանատիկական ազգութիւնը ունի իր եսական կողմերը. հերիք է, ասում ենք, որ մի ազգութիւն իր մի շամփուր խորովածի համար, մորթում է միւս ազգութեան եզը...»:

Այս ուշադրաւ հատուածի մէջ Նալբանդեան չափազանց պարզ կերպով կողմնակից կը հանդիսանայ առողջ, բարոյական ազգասիրութեան և ընդհակառակն՝ երդւեալ թշնամի՝ եսական, աստուծոյ տղգամոլութեան:

Միաժամանակ խորապէս համոզւած է, որ ազգութեան խնդիրը միջազգայնօրէն պիտի լուծուի և որ մէկ ազգութիւն ոչինչ չի կրնար ընել: Եւ կը լուծուի միայն այն ժամանակ, երբ բոլոր ազգերու հաւասար իրաւունքը խոստովանելի երկրագնդի վրայ:

Ապագայ լաւագոյն հասարակական կարգերու մէջ, իրական հաւասարութեան ուժօրի ներքեւ ազգային խնդիրը գոյութիւն չի ունենար այլ ևս: Ազգութիւնները, սակայն, իբրև բնական երևոյթներ կրնան միշտ յարասել, հասարակական ցեղային տարբեր համախմբումները կրնան վերապրիլ առանց թշնամութեան, առանց բիրտ ընդհարումներու, առանց փոխադարձ բացասման:

Նալբանդեանցի աշխարհայեցքի վ սզգութիւնը իրական, անուրանալի փաստ է:

«Ազգութիւնը իբրև պատմական իրողութիւն, իբրև հաւաստի երևոյթ ընդհանուր մարդկութեան կեանքի մէջ չի կարելի ժխտել, թէ բանականութիւնը երբէք չի կարող արդարացնել նրան...»:

Այս փոքրիկ հատուածի վերջին մասը տարբախտաբար անորոշ է ու տարտամ-եթէ ազգութիւնը «պատմական իբողութիւն» է, եթէ ազգութիւնը «իբրև հաւաստի երևոյթ» չի կարելի ժխտել», ապա ի՞նչ կը նշանակէ «բանականութիւնը չի կարող արդարացնել նրան»:

Մենք հարկադրւած ենք այդպէս մտածելու. — Ձուտ տրամաբանութիւնը, բանականութիւնը, գիտակցութիւնը որքան ալ չըմբռնէ ազգութեան գոյութեան իրաւունքը՝ անիկա կայ այնուամենայնիւ:

Յիշեալ հատուածի առաջին մասը, պայծառու որոշ, կընդգծէ ընկերաբանութեան այն առողջ գաղափարը, որ էականապէս այժմէական է և որ Նալբանդեան յիսուն տարի առաջ գիտակցեր է և արտայայտեր: Ազգութիւնը բնութեան արդիւնքն է, մարդկութեան հրահանգը և պատմութեան անհրաժեշտութիւնը:

Ազգութեան պատմական հասարակական դերը մեծ է և նշանակելի: Այն ժամանակ, երբ մեծ պետութիւնները եւրոպական «հաւաւարակչիւր» ստեղծելու և պահելու համար խաղ կրնեն ազգութիւններու նւիրական իրաւունքներուն հետ. այն ժամանակ, երբ Եւրոպայի արծաթասէր ու նենգաւոր դիւանագիտութիւնը քաղաքակրթութիւն տարածելու պատլակով կը ջնջէ ազգերը. երբ Անգլիան կը խեղդէ Հնդկաստանն ու Իրլանտիան, երբ Աւստրիան կը մորթէ Լոմբարդիան ու Վենետիկը, Հունգարիան, Դալմատիան, Բոհէմիան. երբ Պրուսիան կ'անարգէ Լեհաստանը. երբ Ռուսաստանը կ'աւերէ միւս Լեհաստանը, կը յափշտակէ Ճիւլանդիան, կը ճանկէ Վրաստանը, Հայաստանը. երբ Թիւրքիան կը ջարդէ հայ, յոյն և սլաւ ժողովուրդները — այսպիսի աղաղակող ու աշխարհաստան անիրաւութեանց դէմ ազգութիւնը և ազգային գաղափարը միակ փրկութիւն է:

«Այսօր, ճնշւած ազգերի համար ազգութիւնն է նրանց միակ գրօջը, որ կարող է բացել բռնակալութեան ընդդէմ»: Ազգութեան ներքին կեանքին մէջ, Նայտանդեանի աշխարհայեացքով, պէտք է տիրապետէ տնտեսական խնդիրը և իրական հաւաստութիւնը պէտք է առաջնակարգ տեղ գրաւէ:

Բռնակալութեան դէմ պայքարելէ և յաղթելէ յետոյ, ազգային անհատականութիւնը փրկելէ և ազանովելէ յետոյ՝ պէտք է անմիջապէս ձեռնարկել Գորդեան Հանգոյցի — տնտեսական խնդրի լուծման, առանց որու չկայ իսկական ազատութիւն և փրկութիւն: Նախքան-

դեան «դրականապէս թշնամի» է այն ազգութեան, որ մարտնչելով արտաքին բռնակալութեան դէմ, յաղթելով և վանելով արտաքին լուծը՝ կը փոխարինէ զայն ներքին բռնակալութեամբ և ներքին լուծով:

Ազգութիւնը կ'ընդունի այն պայմանով, որպէսզի անիկա ազատութիւն բերէ առհասարակ ժողովրդին և փրկութիւն՝ աշխատաւոր դասակարգերուն:

Ազգութիւնը պէտք է թեթևցնէ ընդհանուր մարդկութեան գործը և հաւաքական արդարութեան սկզբունքը իր սահմաններու մէջ պէտք է կիրարկէ:

«Ազգութիւնը օգտակար է և հարկաւոր այն ժամանակ, երբ զգալի է ոչ որպէս բարոյական շռայլութիւն, օյլ որպէս կարիք, որպէս իրաւունք, որպէս բողոք, երկրագնդի վրայ մի կտոր հող ձեռք բերելու համար, որպէսզի այդ ազգութեան անդամները ապահովեն իրենց ապրուստը, որպէսզի գերի և ստրուկ չլինին ուրիշին: Ազգութիւնը անմեղադրելի է և սմեռնայն ընդունելութեան արժանի, եթէ նա խոստովանի միւս ուրիշ ազգութիւնները նոյնպիսի իրաւանց ժառանգ, որպիսին ստացեր է ինքը: Ազգութիւնը անմեղադրելի է և տանելի իսկ, եթէ նա ընդհանուր մարդկութեան գործը թեթևցնելու կ'աշխատի, իր հաւաքական անձնաւորութեան անունով իրաւունք ձեռք բերէ և նոյն իրաւունքը և արտօնութիւնքը հաւասարապէս իր անդամներին բաշխէ...: Եթէ ազգութեան ներքին և էական խորհուրդը չէ տնտեսական խնդիրը, անհիմն է այդ ազգութիւնը, սո՛ւտ է այդ ազգութիւնը և նա կը

կործանուի: Տնտեսական խնդիրն է այն միակ
և հաստատ ոյժը, որ ազգի անձնաւորութեան
մէջ ներգործելով, հաւասարակչիւն է պահում
արասքին ոյժերի ընդդէմ, որով և ազգութիւնը
ապրում է»:

Լեզու, գրականութիւն, պատմութիւն, ազ-
գային քաղաքթիրութիւն իմաստ ունին միայն
այն ժամանակ, երբ սղզը ստրուկ չէ ինքը իր
մէջ, երբ անոր բոլոր հաւածները և գլխաւո-
րապէս աշխատող, մշակող մեծամասնութիւնը
քաւութեան նոխազ չէ: Իսկ երբ ազգի ներքին
կեանքի մէջ անարդարութիւն է տիրապետում,
երբ հասարակ ժողովուրդը ծառայական անար-
ժան վիճակի մէջն է, երբ ազգի հոգևոր գան-
ձերը չահագործող փոքրամասնութեան ձեռքը
տիրապետութեան գործիք են, եթէ լեզուն,
գրականութիւնը, պատմութիւնը միջոցներ են
դասակարգային տիրապետութիւնը ամբալն-
դելու — այն ժամանակ ազգային գրոշակը կը
դառնայ հասարակական անպատիւ նախապս-
շարում, այն ժամանակ նոյն այդ լեզուն ալ
գրականութիւնն ալ, պատմութիւնն ալ կը
հնչեն իբր անիմաստ բառեր՝ առանց իրական
պարունակութեան, առանց քաղաքակրթական
բարձր դերի...:

«... Իսկ եթէ դու ասես ինձ, ասհի՛ր քո
ազգութիւնը, հաստատ կացիր քո սիրոյ մէջ դէ-
պի քո աշխարհը, սիրիր քո եզրաբքը, պահիր
քո լեզուն, որ է քո ազգութեան դրօշը և այդ
բոլորը քեզ իրաւունք կը տան մի կտոր հող
ձեռք բերելու, որով կազատուիս ստրկութիւ-
նից և աղքատութիւնից՝ այն ժամանակ ես կը
հասկնամ քո խօսքը և ընդհանուրի շահի մէջ

նաև իմ սեփական շահը տեսնելով՝ կաշխատեմ
ամենայն զօրութեամբ: Այն ժամանակ ես կը
հետեւեմ քո ձայնին, որովհետև դա աւետարա-
նում է ինձ փրկութիւն ազգութեան անունով»:

Ամբողջ գաղտնիքը, ուրեմն հոն է, թէ ի՞նչ-
պէս գտնենք ազգայնութեան և տնտեսական
ազատութեան հաւասարակչիւնը, որ անկաւիած
գոյութիւն ունի: Նեղ ազգայնականները իրա-
կան հաւասարութեան թշնամիներ են, ազգային
գաղափարի և ազգային քաղաքակրթութեան
անարգողները: Անոնց համար ազգութիւն չկայ:
Անոնց համար իրենց ստոր, անբարոյական շահը
կայ միայն...:

Տարամերժ միջազգայնականը մարդկու-
թեան գաղափարի աղաւաղումն է. ազատու-
թեան բնազանցաբէտն է (metaphysicien) որ
չափ սղանց ընդհանրացնելով աղտոտութիւնը՝
անիրական կը դարձնէ դայն:

Անոր համար հաւասարութիւնը բառ է և
մարդկութիւնը անբովանդակ հնչիւն: Անոր
մարդասիրութիւնը վրիպած է, իտէալը վիժած:

Անկեղծ ազգայնութեան և ճշմարիտ մի-
ջազգայնութեան ընդհարումը երևակայական է,
հնարովի և շինծու...:

Անոնց մէջ կայ խորունկ համերաշխութիւն,
ընական, անբռնագրօս ներդաշնակութիւն և-
ճշգրիտ, անխախտ հաւասարակչիւն:

Մարդկութիւնը խրաւիլակ չէ: Մարդկու-
թիւնը ազգերէ կը բաղկանայ: Իրազործել իս-
կական հաւասարութեան և հասարակական ար-
դարութեան սկզբունքները այդ ազգերէն ու
է մէկուն մէջ, վերացնել անիրաււած մարդու
տառապանքը տիեզերքի որևէ անկիւնի և աշ-

խարհիս որն է հասարակութեան մէջ — կը նշանակէ նպաստել մարդկութեան ընդհանուր ելջանկութեան, կը նշանակէ սպասաւորել համամարդկային գործին...

Ահաւաստիկ Միքայէլ Նալբանդեանցի իս էս լը և գաղափարը...

է.

Մենք վերցուցինք Նալբանդեանցի «Երկրագործութեան» վերլուծումը: Կանգ չառնելով մանրամասնութիւններուն վրայ — մենք աշխատեցանք ցուցադրել տաղանդաւոր հրապարակագրի հիմնական մտքերը, ներկայացնել անոր հասարակական, քաղաքական, տնտեսական և փիլիսոփայական ընդհանուր աշխարհահայեացքը:

Նալբանդեանցի այս երկը չափազանց հարուստ է գաղափարներով, բեղմնաւոր է և բազմակողմանի: Կարելի էր, անկասկած, աւելի լայնցնել այս գրքի զննութիւնը, կարելի էր շօշափել ուրիշ խնդիրներ ևս: Բայց մենք բաւականացանք այսքանով: Մեզ կ'երևայ որ հեղինակը իր էական և բնորոշ գծերով, իր աշխարհայեացքի հիմունքով և իր իտէալներով ներկայացուած է:

Յիսուն տարի առաջ գրւած այդ պատմական աշխատութիւնը չափազանց այժմէական է, տաք, կենդանի: Այսօր ալ կարելի է մեծ հաճոյքով կարդալ «Երկրագործութիւնը» և հիանալ Նալբանդեանի տրամաբանութեան, ընդունակութեան, իմաստութեան և տաղանդի վրայ առհասարակ:

Նալբանդեանցը իր այդ գրքով մեկուսա-

ցած երևոյթ է մեր զրականութեան մէջ: Ոչ իր նախորդները, ոչ իր ժամանակակիցները, ոչ իր անմիջական հետևորդները չկրցան նոյն գաղափարներով ոգևորել, նոյն իտէալներով ներշնչել:

Համամարդկային այն արմատական խնդիրները, որոնք կը յուզէին, կը տանջէին, կ'արիւնէին Նալբանդեանի բովանդակ գոյութիւնը՝ ամամտչելի էին մեր վերածնող զրականութեան:

«Երկրագործութիւնը» չունեցաւ այն ազդեցութիւնը մեր կեանքի և զրականութեան վրայ, որուն արժանի է: Ոչնչացած ոուս կոռապարութեան հրամանով՝ անոր մէկ քանի պատահական արտագրութիւններ, անկասկած, չէին կարող մտքերու վրայ լայնօրէն ներգործել: Որևէ երկասիրութեան ազդեցութեան սոսջին պայմանը, ուրեմն — կարգացելու հնարաւորութիւնը վիճակած չէր Նալբանդեանի գրքին: Միւս կողմէն մեր երկրի ներքին պայմանները մեր մտաւոր վիճակը, մեր տնտեսական-հասարակական կացութիւնը, մեր զրականութեան աւանդները բնաւ նպաստաւոր չէին այդպիսի արմատական գրքի մը ազդեցութեան համար: Ասոնք ամենքը արգելք եղան անոր տարածման և ժողովրդականութեան...

Այսպիսով, վաթսունական թւականներու վրայէն եկաւ, անցաւ հայ ընկերվարական մտքին այդ բացառիկ արտագրութիւնը, սոսանց ձուլւելու, միանալու իր դարին հետ:

Եթե անսնականութունական թւականները աւելի բախտաւոր չեղան: Այդ միջոցներու փայլեց մեր գաղափարահոսանքը, հրապարակին տիրեց մեր համբաւաւոր լիբերալիզմը, Նալ-

բանդեանցի արմատական ընկերվարական զս-
 դափարները ոչ միայն շընդարձակեցան, ոչ
 միայն շայնացան այդ միջոցին, սյւլև շկրկնե-
 ցան անգամ: Եօթանասնականութունական
 թւականները ամուլ և անպտուղ եղան ընկեր-
 վարական մտքի գիտակցութեան և արդարու-
 թեան տեսակէտով:

Այդ թւականներու հրապարակագրութիւնը
 Նալբանդեանցի արմատական ընկերվարական
 հրապարակագրութեան տեսակէտով՝ յսուջա-
 դիմութիւն չէր, գարգացում չէր:

Եթէ Միքայէլ Նալբանդեան վսթսունա-
 կան թւականներուն կրցաւ ներշնչել Եւրօ-
 պայից և ոուս նշանաւոր ընկերվարական մտա-
 ծողներէն, եօթանասնական և ութսունական
 թւականներու մեր հրապարակագրութիւնը
 բնաւ չներշնչեցաւ մարդկութեան այդ նոր
 իտէալներէն, նոր քաղաքաւրթութեան հրա-
 հանգներէն:

Զէրնիչէվսկին յանձին Նալբանդեանցի ու-
 նեցաւ իր տաղանդաւոր հետևողը մեր դրակա-
 նութեան մէջ: Լաֆրօզը, սակայն, և 70-80ա-
 կան թւականներու ոուս հրապարակագրութիւ-
 նը շանցաւ մեր երկիրը:

90-ական թւականներու նոր սերունդը յե-
 ղափոխական տեսակէտով շատ րան փոխ առաւ
 բազմադիւն Րաֆֆիէն, սակայն ընկերվարա-
 կան տեսակէտով նոր երիտաւարդութիւնը մեր
 ազատամտական հրապարակագրութեան մէջ
 ոգևորութեան և դաստիարակութեան հիմքեր
 չդրաւ: Եւրօպական և ոուսական ընկերվարու-
 թիւնն ու մեծանուն ընկերվարականները ներ-

չնչման աղբիւր դարձան այդ շրջանի մեր յս-
 աջադէմ մտաւորականութեան համար:

Հայ կեանքի և գրականութեան մէջ մէկը կար,
 սակայն, որ իր զաղափարներով և իր գործնէ-
 ութեամբ 90ական թւականներու ընկերվարա-
 կան մտաւորականութեան համակրելին էր:

Իսառորդ դարուց ի վեր անհետացած Մի-
 քայէլ Նալբանդեանցի պատկերն էր, որ 60ական
 թւականներու հեռաւորութենէն կը յուզէր նոր-
 երիտասարդութիւնը: Անոր անմիջական ազդե-
 ցութիւնը — մանաւանդ ընկերվարական տե-
 սակէտով — մեծ չեղաւ մեր կեանքի և գրա-
 կանութեան վրայ: Սակայն անոր քաղափարա-
 կան դէմքը, անոր բարոյական հրապոյրը այդ
 տեսակէտով մինչև այսօր ալ անջնջելի կը մնայ:

Ժամանակակից Հայ ընկերվարական երի-
 տասարդութիւնը իր բազմաթիւ փորձութիւն-
 ներու և դժւարին պայքարներու մէջ կ'ողջայ,
 կը գիտակցի, որ իրմէ շատ հեռու, կէս դար ա-
 ուջ, 60ական թւականներու խորքէն, Միքայէլ
 Նալբանդեանց յղացած է նոյն հոգերը, ապրած
 է նոյն իտէալները, սրտայայտած է նոյն սկզբ-
 բունքները...:

Իր բոլոր թերութիւններով և անկատարու-
 թիւններով հանդերձ՝ «երկրագործութիւնը»
 կը հանդիսանայ Հայ ընկերվարական մտքի կէս
 դարեան յուշարձանը:

Դասակարգային գործօն գիտակցութիւն,
 աշխատաւոր դասերու իրական ազատութիւն,
 տնտեսական յեղաշրջում, մասնաւոր սեփակա-
 նութեան վերացում, հողերու համայնացում—
 ասոնք, միջազգային ընկերգարութեան այս
 նշանաւոր սկզբունքները, տակաւին 60ական


Թւականներուն Նալբանդեանց արծարծեց և պաշտպանեց անորինակ եռանդով :

Ժամանակակից ընկերվարութիւնը շատ բան ունի, անկասկած, որ Նալբանդեանց չէ ըմբռնեց, չէ գիտակցեց, բայց այն, ինչ որ գիտակցեց է ու ըմբռնեց՝ արհամարհելի չէ բնաւ և անշուշտ շատ կարևոր է մեր ընկերվարական մտքի զարգացման տեսակէտէն :

Ասիկա ապացոյցն է, որ հայ միտքը ևս կրնայ միանալ նոր քաղաքակրթութեան ձայնին և մարդկութեան նոր իտէալներուն : Ասիկա ապացոյցն է, որ հայ մտաւորականութիւնը ևս կրնայ միջազգային արդարութեան գիւնոր հանդիսանալու — մտածել, խորհրդածել նոր ժամանակներու աւետարանը և պայքարիլ նոր հասարակութեան Յաղթանակին համար . . . :

Նալբանդեանցի կեանքն ու աշխատութիւնները այս բարոյական նշանակութիւնը ունին :





«ՀԱՅՐԵՆԻՔ»-ի Հրատարակութիւնները

- 1.— ԱՆԴՐՕՆԻԿԷ, վէպ յոյն յեզ. կեանքէ, Ս. Բսէնոսի, թարգմ. Ի. Ա. Երան: Գին՝ \$1.00:
- 2.— ԱՐՇԱՂՈՅՍ, Տրամա թիւրքահայ կեանքէն վարդգէսի: Գին՝ 10 սէնթ:
- 3.— ՄՕՍՈՒՆ ԵՒ ՉՕՐԻ ԱՐՇԱՒԱՆՔՆԵՐԸ, Օննիկի: Գին՝ 10 սէնթ:
- 4.— ՅԵՂԱՓՈՍԱԿԱՆ ՎԻՊԱԿՆԵՐ, Միր-Հազորի: Գին՝ 5 սէնթ:
- 5.— ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Յ. Յ. Չազմազճեանի: Գին՝ 25 սէնթ:
- 6.— ՀԱՅՐԵՆԻՔ ԵՐԳԱՐԱՆ, գին՝ \$2.50, Տաճկաստանի համար զեղջւած 37.50 դրուշ:
- 7.— ՌՈՒՍ-Ս. ՅԵՂ. ԾՐԱԳԻՐԸ, Թրգմ. Ն. Հանգոյց: Գին 10 սէնթ, Տաճկ. 2 դրուշ:
- 8.— ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ԽՐՆԴԻՐԸ, Ն. Տ. Ս. Թ. -ի: Գին՝ 25 սէնթ:
- 9.— ՍՕՅԻԱԼԻՉՄԸ ԵՒ ԴՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Էնրիկո Ֆէրրիի, թարգմ. Ա. Իսրայէլեան: Գին՝ 25 սէնթ:
- 10.— ԻՄ ԵՂԲԱՅՐ ԳԻՒՂԱՅԻՒՆ, Էլիգէ Ռեզլիւ, թրգմ. Տիկ. Ս. Պաղտասարեան: Գին՝ 5 սէնթ:
- 11.— ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ՌԻՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ, Միքայէլ Նալպանտեանց: Գին՝ 25 սէնթ:
- 12.— ՔՐԻՍՏՈՍԻ ՍՕՅԻԱԼԱԿԱՆ ՈՒՄՐՈՒՆՔԸ, Վ. Սորէնի: Գին՝ 5 սէնթ:
- 13.— ԿՐԷՆԳԸՊԻԼ, (վէպ) Անաթօլ Յրանսի, Թրգմ. Տիկ. Ս. Պաղտասարեան, Գին՝ 5 սէնթ:

գրք.

Լն.

« Ազգային գրադարան



NL0203102

